



Համարը N 1538-Ն
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2010.12.08/61(795)
Հոդ. 1435

Տեսակը Ինկորպորացիա
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 09.12.2010

Ընդունման ամսաթիվը 18.11.2010
Ստորագրման ամսաթիվը 30.11.2010
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

- Կապեր այլ փաստաթղթերի հետ**
- Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԵՎ ՔԱՂՎԱԾՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ԿՈԼԵԿՏԻՎ ՆՇԱՆԸ ԿԱՍ ԴՐԱ ՀԱՅՏԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆԱԲԱՐ ԱՆՁԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԻ ԿԱՍ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԻ ՀԱՅՏԻ ԵՎ ՀԱԿԱՌԱԿԸ ՓՈԽԱԿԵՐՊԵԼՈՒ, ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ, ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ, ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ, ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ, ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱԶԳՄԱՆ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 նոյեմբերի 2010 թվականի N 1538-Ն

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԵՎ ՔԱՂՎԱԾՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ԿՈԼԵԿՏԻՎ ՆՇԱՆԸ ԿԱՍ ԴՐԱ ՀԱՅՏԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆԱԲԱՐ ԱՆՁԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԻ ԿԱՍ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԻ ՀԱՅՏԻ ԵՎ ՀԱԿԱՌԱԿԸ ՓՈԽԱԿԵՐՊԵԼՈՒ, ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ, ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ, ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ, ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ, ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱԶԳՄԱՆ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ, 27-րդ հոդվածի 11-րդ, 32-րդ հոդվածի 4-րդ, 40-րդ հոդվածի 5-րդ մասերի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին, 49-րդ հոդվածի 1-ին, 50-րդ հոդվածի 2-րդ, 51-րդ հոդվածի 7-րդ և 52-րդ հոդվածի 3-րդ մասերի Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել՝
 - 1) ապրանքային նշանների պետական գրանցամատյանի վարման և քաղվածքների տրամադրման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.
 - 2) կոլեկտիվ նշանը կամ դրա հայտը համապատասխանաբար անձի ապրանքային նշանի կամ ապրանքային նշանի հայտի և հակառակը փոխակերպելու կարգը՝ համաձայն N 2 հավելվածի.
 - 3) ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու կարգը՝ համաձայն N 3 հավելվածի.
 - 4) ապրանքային նշանների լիցենզիաները, դրանց փոփոխությունները և չեղյալ հայտարարելը գրանցելու մասին

դիմումները լրացնելու, ներկայացնելու և քննարկելու կարգը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) ապրանքային նշանների գրանցման գործողության ժամկետի երկարաձգման մասին դիմումների ձևակերպման, լրացման, ներկայացման և քննարկման կարգը՝ համաձայն N 5 հավելվածի:

(1-ին կետը լրաց. 12.10.23 N 1725-Ն)

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

S. Սարգսյան

2010 թ. նոյեմբերի 30
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2010 թվականի
նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշման

Կ Ա Ր Գ

**ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՍՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԵՎ ՔԱՂՎԱԾՔՆԵՐԻ
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են ապրանքային նշանների պետական գրանցամատյանի վարման և գրանցամատյանում ընդգրկվող տվյալների ցանկի, ապրանքային նշանի գրանցման վկայագրի և վկայագրում պարունակվող տեղեկությունների ցանկի, ապրանքային նշանի գրանցումը զատելու, ապրանքային նշանների պետական գրանցամատյանում փոփոխություններ կատարելու և քաղվածքներ տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում օգտագործված են «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված հասկացությունները:

3. Ապրանքային նշաններն ապրանքային նշանների պետական գրանցամատյանում (այսուհետ՝ պետական գրանցամատյան) գրանցում է Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակը (այսուհետ՝ գրասենյակ)՝ ապրանքային նշանի գրանցման մասին որոշման հիման վրա, համապատասխան պետական տուրքի վճարման անդորրագիրը սահմանված ժամկետում ներկայացվելու դեպքում:

(3-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

4. Պետական գրանցամատյանը տվյալների էլեկտրոնային բազա է, որը ներառում է գրառումներ օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստացած ապրանքային նշանների, ինչպես նաև տրված գրանցման վկայագրերի մասին, որոնք հաստատում են իրավատերերի իրավունքները գրանցված օբյեկտների նկատմամբ:

5. Պետական գրանցամատյանը նաև պարունակում է տվյալներ օրենքի և սույն կարգի համաձայն պետական գրանցամատյանում և տրված վկայագրերում, փաստաթղթերում կատարված փոփոխությունների մասին:

6. Ապրանքային նշանների գրանցման թվական համարվում է պետական գրանցամատյանում դրանց փաստացի գրանցման թվականը:

II. ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՍՏՅԱՆԻ ՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՑԱՆԿԸ

7. Ըստ վկայագրերի հերթական համարների, որոնք, ըստ էության, ապրանքային նշանների գրանցման համարներն են, ապրանքային նշանների մատենագիտական տվյալների նայնականացման միջազգային ծածկագրերի ՄՍՀԿ ST.60 ստանդարտին համապատասխան, գրասենյակի ապրանքային նշանների հայտերի հիմնապաշարից ծրագրով պետական գրանցամատյան են տեղափոխվում հետևյալ մատենագիտական տվյալները

- 1) (210) հայտի համարը.
- 2) (220) հայտը ներկայացնելու թվականը.
- 3) (230) ցուցահանդեսային կամ այլ առաջնության թվականը.
- 4) (310) առաջնային հայտի համարը.
- 5) (320) միջազգային առաջնության թվականը.

- 6) (330) երկրի ծածկագիրը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը.
- 7) (510) ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը.
- 8) (511) դասերն ըստ նշանների գրանցման համար ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման (ԱՄՄԴ).

- 9) (526) չպահպանվող տարրերը.
- 10) (540) ապրանքային նշանի պատկերը.
- 11) (551) կոլեկտիվ նշանը.
- 12) (554) ծավալային նշանը.
- 13) (556) ձայնային նշանը.
- 14) (551) հավաստագրային նշանը.
- 15) (555) հոլոգրաֆիական նշանը.
- 16) (561) ապրանքային նշանի հայերեն տառադարձությունը.
- 17) (591) ապրանքային նշանի գույնը և գունային համակցությունը.
- 18) (646) իրավաբանորեն փոխկապակցված այլ գրանցման համարը և թվականը.
- 19) (730) նշանի իրավատերը, գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, իրավատիրոջ

ներկայացուցիչը:

(7-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

8. Օրենքի համաձայն «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված համապատասխան պետական տուրքի վճարման անդորրագիրն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում գրասենյակն ապրանքային նշանը հերթական համարի տակ գրանցում է պետական գրանցամատյանում: Ապրանքային նշանը պետական գրանցամատյանում գրանցելու համար գրասենյակի պետական գրանցամատյանների ստորաբաժանումը (այսուհետ՝ գրանցամատյանների ստորաբաժանում) իրականացնում է հետևյալ գործողությունները՝

- 1) որոշում է գրանցման համարը, որը պետական գրանցամատյանի վերջին գրանցման համարին հաջորդող համարն է.
- 2) մուտքագրում է ապրանքային նշանի պատկերը.
- 3) գրանցում (մուտքագրվում) է ապրանքային նշանի մատենագիտական տվյալները՝
ա. իրավատիրոջ մասին տեղեկությունները (իրավատիրոջ անունը, ազգանունը և բնակության վայրը կամ անվանումը և գտնվելու վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն, երկրի ծածկագիրը),
բ. ապրանքային նշանի առաջնության թվականը,
գ. ապրանքային նշանի գրանցման թվականը,
դ. այն ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը, որոնց համար գրանցվում է ապրանքային նշանը,
ե. գրանցման գործողության ենթադրյալ ավարտը,
զ. ապրանքային նշանի առաջնության մասին տվյալները (եթե խնդրարկված են).

4) պատրաստում (լրացվում) է ապրանքային նշանի վկայագիրը և գրասենյակի պետի ստորագրելուց հետո հանձնում (առաքվում) է դրա իրավատիրոջը կամ նրա ներկայացուցչին.

5) լրացնում է վկայագիրը տալու (առաքելու) մասին տեղեկությունները (թվականը և ստացողի կամ հասցեատիրոջ ազգանունը, անունը (անվանումը), առաքման տվյալները):

(8-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

9. Պետական գրանցամատյանի վարման ընթացքում գրանցամատյանների ստորաբաժանումը պետական գրանցամատյան է մուտքագրում հետևյալ տեղեկությունները՝

- 1) պետական գրանցամատյանում տեղ գտած ակնհայտ և տեխնիկական սխալներն ուղղելու մասին.
- 2) ապրանքային նշանը պետական գրանցամատյանից հանելու մասին՝
ա. ապրանքային նշանի գրանցումն անվավեր կամ չէղյալ ճանաչելու դեպքում,
բ. ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը չերկարաձգելու (օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մաս)

դեպքում,
գ. ապրանքային նշանի իրավատիրոջ (իրավաբանական անձի) լուծարման կամ դրանից իրավատիրոջ հրաժարվելու դեպքում.

- 3) ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչելու մասին.
- 4) ապրանքային նշանի գրանցման գործողությունը երկարաձգելու մասին.
- 5) իրավատիրոջ ազգանվան, անվան (անվանման) և (կամ) բնակության (գտնվելու) վայրի փոփոխության մասին.
- 6) ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկի կրճատման մասին.
- 7) ապրանքային նշանի գրանցման բաժանման (գատման) մասին.
- 8) ապրանքային նշանի առանձին տարրերի փոփոխության մասին, որոնք չեն փոխում նշանի էությունը.
- 9) կոլեկտիվ նշանն անձի ապրանքային նշանի կամ հակառակը փոխակերպելու մասին.
- 10) վկայագրի կրկնակ տալու մասին.
- 11) ապրանքային նշանի նկատմամբ իրավունքների փոխանցումը գրանցելու մասին.
- 12) գրանցված լիցենզիայի (ենթալիցենզիայի) մասին.
- 13) գրանցված ֆրանչայզինգի պայմանագրի մասին.

- 14) գրանցված լիցենզիայի (ենթալիցենզիայի) կամ ֆրանչայզինգի պայմանագրի փոփոխությունները գրանցելու մասին.
- 15) գրանցված լիցենզիան (ենթալիցենզիան) կամ ֆրանչայզինգի պայմանագիրը չեղյալ հայտարարելու մասին.
- 16) ներկայացուցչի փոփոխության մասին:
- 10. Սույն կարգի 9-րդ կետին համապատասխան պետական գրանցամատյանում կատարված ցանկացած գրառման և դրա հետագա փոփոխությունների մասին տեղեկությունները հրապարակվում են «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրում:
- 11. Ըստ սույն կարգի 9-րդ կետում նշված գործողությունների՝ պետական գրանցամատյանում գրառումները կատարվում են հետևյալ տեքստերով՝
 - 1) պետական գրանցամատյանում տեղ գտած ակնհայտ և տեխնիկական սխալներն ուղղելու դեպքում՝
 - ա. «Ուղղված է ակնհայտ (տեխնիկական) սխալը (նշվում է ճիշտ գրառումը),
 - բ. հիմքը (նշվում են համապատասխան հիմքը և դրա ստացման թվականը),
 - գ. գրառումը կատարող անձի անունը, ազգանունը և գրառման թվականը,
 - դ. հրապ.՝ պաշտ. տեղեկագիր N , թվականը:».
 - 2) ապրանքային նշանը պետական գրանցամատյանից հանելու դեպքում՝
 - ա. «Ապրանքային նշանը հանվել է պետական գրանցամատյանից _____ թվականից,
 - բ. հիմքը՝
 - 1) դատարանի վճիռը (նշվում է վճիռն ուժի մեջ մտնելու թվականը) ապրանքային նշանի գրանցումն անվավեր կամ չեղյալ ճանաչելու մասին, կամ՝
 - 2) ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը չի երկարաձգվել (օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մաս), կամ՝
 - 3) ապրանքային նշանի իրավատիրոջ _____ թվականի դիմումը, կամ լուծարվել է ապրանքային նշանի իրավատերը,
 - գ. գրառումը կատարող անձի անունը, ազգանունը և գրառման թվականը,
 - դ. հրապ.՝ պաշտ. տեղեկագիր N , թվականը:».
 - 3) ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչվելու դեպքում՝
 - ա. «Ապրանքային նշանը հանրահայտ է ճանաչվել Հայաստանի Հանրապետությունում _____ թվականից՝ հետևյալ ապրանքների և (կամ) ծառայությունների համար (տրվում է ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը),
 - բ. հիմքը՝ բողոքարկման խորհրդի (դատարանի) _____ թվականի որոշումը (վճիռը),
 - գ. գրառումը կատարող անձի անունը, ազգանունը և գրառման թվականը,
 - դ. հրապ.՝ պաշտ. տեղեկագիր N , թվականը:».
 - 4) ապրանքային նշանի գրանցման գործողությունը երկարաձգվելու դեպքում՝
 - ա. «Ապրանքային նշանի գրանցման գործողությունը երկարաձգված է մինչև (թվականը)»,
 - բ. հիմքը՝ իրավատիրոջ դիմումը (ստացման թվականը),
 - գ. գրառումը կատարող անձի անունը, ազգանունը և գրառման թվականը,
 - դ. հրապ.՝ պաշտ. տեղեկագիր N , թվականը:».
 - 5) իրավատիրոջ ազգանվան, անվան (անվանման) և (կամ) բնակության (գտնվելու) վայրի փոփոխության դեպքում՝
 - ա. «Իրավատիրոջ ազգանունը, անունը (անվանումը) և (կամ) բնակության (գտնվելու) վայրը փոփոխվել է՝
 - բ. իրավատեր (նոր ազգանունը, անունը (անվանումը), բնակության կամ գտնվելու վայրը),
 - գ. հիմքը՝ (ստացման թվականը) դիմումը,
 - դ. գրառումը կատարող անձի անունը, ազգանունը և գրառման թվականը,
 - ե. հրապ.՝ պաշտ. տեղեկագիր N , թվականը:».
 - 6) ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկի կրճատման դեպքում՝
 - ա. «Ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկից հանվել են (ապրանքները և (կամ)՝ ծառայություններն ըստ դասերի),
 - բ. հիմքը՝ (ստացման թվականը) դիմումը,
 - գ. գրառումը կատարող անձի անունը, ազգանունը և գրառման թվականը,
 - դ. հրապ.՝ պաշտ. տեղեկագիր N , թվականը:».
 - 7) ապրանքային նշանի գրանցման գաղտնի դեպքում՝
 - ա. «Զատվել է առանձին գրանցում (N , թվականը, ապրանքները և (կամ) ծառայությունները),
 - բ. հիմքը՝ իրավատիրոջ (ստացման թվականը) դիմումը կամ նշանի մասնակի զիջման մասին պայմանագիրը (գրանցման N , թվականը),
 - գ. գրառումը կատարող անձի անունը, ազգանունը և գրառման թվականը,
 - դ. հրապ.՝ պաշտ. տեղեկագիր N , թվականը:».
 - 8) ապրանքային նշանի առանձին տարրերի փոփոխության դեպքում՝
 - ա. «Փոփոխվել են (նշվում են փոփոխությունները, և կատարվում է գրառում՝ «Նշանի փոփոխված պատկերը մուտքագրվել է»,
 - բ. հիմքը՝ իրավատիրոջ (ստացման թվականը) դիմումը,

- գ. գրառումը կատարող անձի անունը, ազգանունը և գրառման թվականը».
- 9) կոլեկտիվ նշանն անձի ապրանքային նշանի կամ հակառակը փոխակերպելու դեպքում՝
 - ա. «Կոլեկտիվ նշանը փոխակերպվել է անձի ապրանքային նշանի կամ հակառակը,
 - բ. նոր իրավատեր (ազգանունը, անունը (անվանումը), բնակության կամ գտնվելու վայրը),
 - գ. օգտագործման իրավունք ունեն (նշվում են յուրաքանչյուրի ազգանունը, անունը (անվանումը), բնակության կամ գտնվելու վայրը), եթե ապրանքային նշանը փոխակերպվել է կոլեկտիվ նշանի,
 - դ. հիմքը՝ (ստացման թվականը) դիմումը,
 - ե. գրառումը կատարող անձի անունը, ազգանունը և գրառման թվականը,
 - զ. հրապ.՝ պաշտ. տեղեկագիր N , թվականը».
- 10) վկայագրի կրկնակ տալու դեպքում՝
 - ա. «Տրված է կրկնակ (թվական),
 - բ. հիմքը՝ (ստացման թվականը) դիմումը,
 - գ. գրառումը կատարող անձի անունը, ազգանունը և գրառման թվականը,
 - դ. հրապ.՝ պաշտ. տեղեկագիր N , թվականը».
- 11) ապրանքային նշանի նկատմամբ իրավունքների փոխանցումը գրանցելու դեպքում՝
 - ա. «Ապրանքային նշանի իրավատերը (ազգանունը, անունը (անվանումը), բնակության կամ գտնվելու վայրը) ապրանքային նշանի նկատմամբ իրավունքները փոխանցել է պայմանագրով (գրանց. N , թվականը),
 - բ. նոր իրավատեր (ազգանունը, անունը կամ անվանումը և բնակության կամ գտնվելու վայրը),
 - գ. հիմքը՝ փոխանցումը գրանցելու մասին որոշում, ծանուցագիր N , (առաքելու կամ հանձնելու թվականը, ստացողի տվյալները),
 - դ. գրառումը կատարող անձի անունը, ազգանունը և գրառման թվականը,
 - ե. հրապ.՝ պաշտ. տեղեկագիր N , թվականը».
- 12) լիցենզիան (ենթալիցենզիան) գրանցելու դեպքում՝
 - ա. «Լիցենզիան (ենթալիցենզիան) (գրանց. N , թվականը) գործում է մինչև (թվականը),
 - բ. լիցենզատու (ենթալիցենզատու) (ազգանունը, անունը կամ անվանումը և բնակության կամ գտնվելու վայրը),
 - գ. լիցենզայի տեսակը՝ Բացառիկ (ոչ Բացառիկ կամ եզակի),
 - դ. հիմքը՝ լիցենզիան գրանցելու մասին որոշում, ծանուցագիր N , (առաքելու կամ հանձնելու թվականը, ստացողի տվյալները),
 - ե. գրառումը կատարող անձի անունը, ազգանունը և գրառման թվականը,
 - զ. հրապ.՝ պաշտ. տեղեկագիր N , թվականը».
- 13) ֆրանչայզինգի պայմանագիրը գրանցելու դեպքում՝
 - ա. «Ֆրանչայզինգ. պայմանագիր (գրանց. N , թվականը),
 - բ. օգտագործող (ազգանունը, անունը կամ անվանումը և բնակության կամ գտնվելու վայրը),
 - գ. հիմքը՝ պայմանագիրը գրանցելու մասին որոշում, ծանուցագիր N , (առաքելու կամ հանձնելու թվականը, ստացողի տվյալները),
 - դ. գրառումը կատարող անձի անունը, ազգանունը և գրառման թվականը,
 - ե. հրապ.՝ պաշտ. տեղեկագիր N , թվականը».
- 14) լիցենզիայում (ենթալիցենզիայում) կամ ֆրանչայզինգի պայմանագրում կատարված փոփոխությունները գրանցելու դեպքում՝
 - ա. «Փոփոխություն (գրանց. N , թվականը), (լիցենզիայի, ենթալիցենզիայի կամ ֆրանչայզինգի (գրանց. N , թվականը) պայմանագրում,
 - բ. պայմանագրի գործողությունը երկարաձգված է մինչև (թվականը),
 - գ. հիմքը՝ փոփոխությունների գրանցման մասին որոշում (գրանց. N , թվականը), ծանուցագիր N , (առաքելու կամ հանձնելու թվականը, ստացողի տվյալները),
 - դ. գրառումը կատարող անձի անունը, ազգանունը և գրառման թվականը,
 - ե. հրապ.՝ պաշտ. տեղեկագիր N , թվականը».
- 15) լիցենզիան կամ ֆրանչայզինգի պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելու դեպքում՝
 - ա. «Լիցենզիայի, ենթալիցենզիայի կամ ֆրանչայզինգի (գրանց. N , թվականը) պայմանագիրը դադարեցվել է (թվականից),
 - բ. հիմքը՝ (ստացման թվականը) դիմումը (կողմերի համատեղ ստորագրած փաստաթուղթը, դատարանի վճիռը և այլն),
 - գ. գրառումը կատարող անձի անունը, ազգանունը և գրառման թվականը,
 - դ. հրապ.՝ պաշտ. տեղեկագիր N , թվականը».
- 16) ներկայացուցչի փոփոխության դեպքում՝
 - ա. «Ներկայացուցչի (ազգանունը, անունը (անվանումը), բնակության կամ գտնվելու վայրը) փոփոխվել է (գրանցման թվականը),
 - բ. նշանակվել է նոր ներկայացուցիչ (ազգանունը, անունը կամ անվանումը և բնակության կամ գտնվելու վայրը),
 - գ. հիմքը՝ (ստացման թվականը) դիմումը,

դ. գրառումը կատարող անձի անունը, ազգանունը և գրառման թվականը,
ե. հրապ.՝ պաշտ. տեղեկագիր N , թվականը:»:

III. ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ՁԵՎԸ ԵՎ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

12. Ապրանքային նշանի գրանցման վկայագրի ձևը՝ համաձայն սույն կարգի N 1 ձևի, լրացվում է գրանցամատյանների ստորաբաժանման կողմից՝ պետական գրանցամատյանի տվյալների հիման վրա և ստորագրվում է գրասենյակի պետի կողմից:

(12-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

13. Վկայագրի ձևը լրացնելիս՝

1) «Վկայագիր N»-ից հետո դրվում է համապատասխան գրանցման համարը (111).

2) «Ապրանքային նշանը» բառերից հետո գետեղվում է ապրանքային նշանի պատկերը.

3) «Իրավատեր» բառից հետո նշվում են իրավատիրոջ (իրավատերերի) ազգանունը, անունը (անվանումը)՝ ուղղական հղովով.

4) «Հայտի N»-ից հետո նշվում է հայտի գրանցման համարը (210).

5) «Ներկայացման թվականը» բառերից հետո նշվում է հայտը ներկայացնելու թվականը (220).

6) «Ապրանքային նշանի առաջնությունը» բառերից հետո նշվում է խնդրարկված առաջնությունը (320): Եթե խնդրարկվում է մի քանի առաջնություն, ապա նշվում են բոլորը: Եթե առաջնություն չի խնդրարկվել, ապա լրացվում է հայտը ներկայացնելու թվականը (220).

7) «Գրանցված է ապրանքային նշանների պետական գրանցամատյանում» բառերից հետո նշվում է պետական գրանցամատյանում փաստացի գրանցման թվականը.

8) «Գործողության ժամկետը» բառերից հետո նշվում է գրանցման գործողության ենթադրյալ ավարտը (181), ինչը որոշվում է՝ (220) ծածկագրի թվականին 10 տարի ավելացնելով.

9) «Ապրանքներ (ծառայություններ)» բառերից հետո նշվում են այն ապրանքները և (կամ) ծառայությունները, որոնց համար գրանցված է ապրանքային նշանը (510).

10) ապրանքներից և (կամ) ծառայություններից հետո նշվում են ապրանքային նշանի խնդրարկվող գույները (591), որից հետո՝ չպահպանվող տարրերը (526):»:

14. Պետական գրանցամատյանների ստորաբաժանումը, վկայագիրը հանձնելիս, իրավատիրոջը հայտնում է ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետի, դրա հերթական երկարաձգման ժամկետի և այլ իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների մասին, որոնք անհրաժեշտ է կատարել գրանցման գործողությունն ուժի մեջ պահելու համար:

15. Ապրանքային նշանի գրանցման վկայագրի կորստի կամ այն օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում՝ ապրանքային նշանի իրավատերը դրա կրկնակն ստանալու համար, կարող է գրասենյակ ներկայացնել դիմում՝ դրան կցելով օրենքով սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը: Գրասենյակը վկայագրի կրկնակն տալիս է հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վկայագրի կրկնակն լրացվում է սույն կարգի 13-րդ կետի համաձայն, բացառությամբ 2-րդ ենթակետի, որում ներկայացվում են կրկնակն տալու թվականի դրությամբ փաստացի իրավատիրոջ տվյալները: Ապրանքային նշանի գրանցման վկայագրի ձևաթղթի առաջին էջի վերևի աջ անկյունում կատարվում է (դրոշմվում է) «Կրկնակ» գրառումը:

(15-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

IV. ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԶԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎԸ ԵՎ ԱՅՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

16. Օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ապրանքային նշանի ցանկացած գրանցում, որը կատարվել է երկու կամ ավելի ապրանքների և (կամ) ծառայությունների համար, իրավատիրոջ դիմումի հիման վրա կարող է բաժանվել երկու կամ ավելի գրանցումների (այսուհետ՝ գատված գրանցումներ)՝ այդ գրանցումների միջև բաշխելով՝ նախնական գրանցման մեջ թվարկված ապրանքները և (կամ) ծառայությունները: Այդպիսի գատումը թույլատրվում է՝

1) գրասենյակում իրականացվող ցանկացած գործընթացի ժամանակ, որը կապված է ապրանքային նշանի գրանցման դեմ երրորդ անձանց կողմից ներկայացված բողոքների քննարկման հետ.

2) ցանկացած գործընթացի ժամանակ, որը կապված է նախորդող ընթացակարգով գրասենյակի ընդունած որոշման բողոքարկման հետ:

(16-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

17. Ապրանքային նշանի գրանցումը գատվում է տրված դիմումի հիման վրա՝ համաձայն սույն կարգի N 2 ձևի, որը համապատասխան պետական տուրքի վճարման անդորրագրի հետ միասին գրասենյակ է ներկայացվում մինչև դրա իրավական պահպանության վիճարկման արդյունքում որոշում ընդունելը:

(17-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

18. Դիմումը, որը ներկայացվում է ապրանքային նշանի իրավատիրոջ անունից, լրացվում է հետևյալ կարգով՝

1) 2.1-ին կետում նշվում է ապրանքային նշանի պետական գրանցման համարը.

2) 3.1-ին կետում նշվում են իրավատիրոջ անվանումը, եթե նա իրավաբանական անձ է, կամ անունը, ազգանունը, եթե նա ֆիզիկական անձ է: Ֆիզիկական անձի դեպքում անվան և ազգանվան հետ միասին կարող է նշվել նաև հայրանունը: Իրավաբանական անձի դեպքում համապատասխան դաշտում տրվում է նաև նրա իրական գործունեության երկրի երկտառ ծածկագիրն ըստ ՄՍՀԿ ST-3 ստանդարտի՝ նշելով համապատասխան վանդակը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ քաղաքացիության կամ բնակության երկրի երկտառ ծածկագիրը՝ նշելով համապատասխան վանդակը.

3) 3.2-րդ կետում նշվում են իրավատիրոջ գտնվելու վայրը (բնակության վայրը) և նրա հետ անմիջական կապ հաստատելու միջոցները՝ հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն.

4) 3.3-րդ կետի վանդակը նշվում է այն դեպքում, երբ իրավատերերը մեկից ավելի են: Այս դեպքում դիմումի 3.1-ին և 3.2-րդ կետերով նախատեսված դրանց մասին տվյալները տրվում են լրացուցիչ թերթերի վրա՝ նշելով դրանց թիվը, որոնք կցվում են դիմումին.

5) 4-րդ կետը լրացվում է այն դեպքում, երբ իրավատերը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով: Որպես ներկայացուցիչ կարող են հանդես գալ գրասենյակում գրանցված ապրանքային նշանների հավատարմատարները, Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայր ունեցող ֆիզիկական անձինք և Հայաստանի Հանրապետությունում իրական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք: Այս դեպքում 4.1-ին կետում նշվում են ներկայացուցչի անվանումը, եթե նա իրավաբանական անձ է, կամ անունը, ազգանունը, եթե նա ֆիզիկական անձ է: Ֆիզիկական անձի դեպքում անվան և ազգանվան հետ միասին կարող է նշվել նաև հայրանունը.

6) 5-րդ կետում նշվում են ներկայացված դիմումով նամակագրություն վարելու և դիմումի քննարկման ընթացքում իրավատիրոջ կամ նրա ներկայացուցչի հետ (նշանակված լինելու դեպքում) անմիջական կապ հաստատելու համար անհրաժեշտ տվյալները՝ փոստային հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն.

7) 6.1-ին կետում նշվում է գատված գրանցումների թիվը.

8) 6.2-6.5-րդ կետերում, ինչպես նաև լրացուցիչ թերթի վրա հերթական համար ունեցող կետերում, ըստ յուրաքանչյուր գատված գրանցման, տրվում են սկզբնական գրանցման մեջ թվարկվածներից համապատասխան ապրանքները և (կամ) ծառայությունները.

9) 7-րդ կետում դրվում է դիմումն ստորագրող ֆիզիկական անձի ստորագրությունը՝ նշելով նրա անունը (ցանկության դեպքում՝ նաև հայրանունը) կամ անվան (հայրանվան) սկզբնատառերը, ազգանունը և պաշտոնը.

10) 7.1-ին կետում նշվում է ստորագրման թվականը.

11) 7.2-րդ կետում համապատասխան վանդակը նշելու միջոցով նշվում է ստորագրող անձի ով լինելը.

12) 8-րդ կետում նշվում են տվյալներ վճարված պետական տուրքի մասին՝ լրացվում է վճարված պետական տուրքի չափը՝ թվերով: Ընդ որում, վճարվում է պետական տուրք՝ գրանցումը գատելու և նոր վկայագրեր տալու համար, պետական տուրք՝ գատված առանձին գրանցումներից յուրաքանչյուրի համար: Վանդակը նշվում է, և հայտին կցվում է վճարման անդորրագիրը, քանի դեռ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով այլ բան նախատեսված չէ: Այսինքն, նշված օրենքով պետական տուրքի վճարման վերահսկման այլ մեխանիզմ (վճարման անդորրագիր ներկայացնելը բացառող) ամրագրելու դեպքում 8-րդ կետի վանդակը չպետք է նշվի, և վճարման անդորրագիրը չպետք է կցվի.

13) 8.1-ին կետում նշվում է վճարման ձևը, օրինակ՝ բանկային անկանխիկ փոխանցում.

14) 9-րդ կետի վանդակը նշվում է այն դեպքում, երբ դիմումի 3.3-րդ և 6-րդ կետերի համաձայն դիմումին կից ներկայացվում են լրացուցիչ թերթեր և (կամ) փաստաթղթեր, որոնք նշված չեն դիմումի նախորդ կետերում: Կետերում չնշված այլ փաստաթղթեր՝ լրացնելով դրանց ընդհանուր թիվը:

(18-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

19. Գրասենյակը քննարկում է գրանցման գատման մասին դիմումը և, եթե պարզում է, որ ներկայացված դիմումը համապատասխանում է սույն կարգի 18-րդ կետով սահմանված պահանջներին և վճարված է համապատասխան պետական տուրքը, ապա՝

1) պետական գրանցամատյանում և սկզբնական նշանի վկայագրում կատարվում է գրանցման գատման մասին գրառում՝ ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը սահմանափակելով դիմումի 6.2-րդ կետում նշվածներով, պահպանելով հայտի համարը, ինչպես նաև այն ներկայացնելու թվականը և առաջնության թվականը (այդպիսիք սահմանված լինելու դեպքում).

2) 6.3-6.5-րդ կետերում, ինչպես նաև լրացուցիչ թերթի վրա հերթական համար ունեցող կետերում, նշված յուրաքանչյուր գատված գրանցման համար սույն կարգի 3-րդ բաժնով սահմանված կարգով լրացվում և տրվում է նոր վկայագիր.

3) սույն կետի 2-րդ ենթակետում նշված գատված գրանցումների մասին տվյալները մուտքագրում է պետական գրանցամատյանում՝ պահպանելով սկզբնական հայտի բոլոր տվյալները՝ բացառությամբ ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկի, որը յուրաքանչյուր գատված գրանցման համար որոշվում է ըստ դիմումի 6.3-6.5-րդ և լրացուցիչ թերթի վրա հերթական համար ունեցող կետերում նշվածների:

(19-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

20. Ապրանքային նշանի գրանցումը համարվում է գատված՝ պետական գրանցամատյանում համապատասխան գրառում կատարելու թվականից:

21. Գրասենյակը գատված գրանցումների մասին տեղեկությունները հրապարակում է «Արդյունաբերական

սեփականություն» պաշտոնական տեղեկագրում:

(21-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

V. ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄԻ ԶԵՎՐ ԵՎ ԱՅՆ ՆԵՐԿԱՅԱՑԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

22. Օրենքի 52-րդ հոդվածի համաձայն իրավատերը գրասենյակին պետք է տեղեկացնի հետևյալի մասին՝

1) իրավատիրոջ անվանման (անվան, ազգանվան) կամ գտնվելու վայրի (բնակության վայրի) փոփոխության.

2) իրավատիրոջ ներկայացուցչի և (կամ) նրա գտնվելու վայրի (բնակության վայրի) փոփոխության.

3) գրանցված ապրանքային նշանի առանձին ոչ էական տարրերի փոփոխության մասին, եթե գրասենյակի կարծիքով դրանք չեն ազդի ապրանքային նշանի տարբերակիչ հատկության վրա.

4) ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկի կրճատման.

5) ապրանքային նշանի իրավատիրոջ փոփոխության.

6) տեխնիկական վրիպակներն ուղղելու:

(22-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

23. Փոփոխությունները կատարվում են իրավատիրոջ կամ նրա ներկայացուցչի կողմից ներկայացված դիմումի հիման վրա՝ համաձայն սույն կարգի N 3 ձևի:

24. Դիմումը լրացնելու համար կիրառվում են սույն կարգի 4-րդ բաժնում ներկայացված դիմումի համապատասխան անվանումներով կետերը լրացնելու համար նշված կանոնները, բացառությամբ 2.1-ին կետի, որում աճման կարգով նշվում են այն գրանցումների համարները, որոնց մեջ կատարվում են փոփոխությունները (2.2-րդ կետը նշվում է, եթե գրանցումների համարները տրվում են առանձին թերթի վրա), և 6.1-ին և 6.2-րդ կետերի, որտեղ 6.1-ին կետում նշվում է փոփոխվող տվյալը, օրինակ՝ «Իրավատիրոջ անվանումը», իսկ 6.2-րդ կետում՝ համապատասխան տվյալը՝ փոփոխված տեսքով:

25. Ներկայացված դիմումը քննարկվում է այն ստանալու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Եթե պարզվում է, որ այն ներկայացվել է առանց պետական տուրքի վճարման անդորրագրի, ապա այն քննարկման չի ընդունվում, ինչի մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցվում է հայտատուին: Եթե վճարված գումարը չի համապատասխանում սահմանված պետական տուրքի չափին, ապա իրավատիրոջը երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է ծանուցում՝ պակաս վճարված գումարը երկամսյա ժամկետում վճարելու և վճարման անդորրագիրը ներկայացնելու առաջարկությամբ: Այս դեպքում փոփոխություն կատարելու համար օրենքով սահմանված ժամկետի ընթացքը դադարեցվում է մինչև ծանուցման պատասխանի ստացումը: Նշված ժամկետում այդ գումարը չվճարվելու և անդորրագիրը գրասենյակ չներկայացվելու դեպքում դիմումը համարվում է չներկայացված:

(25-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

26. Դիմումը քննարկման ընդունելու դեպքում՝ առաջարկվող փոփոխությունները հաշվի է առնում գրասենյակը և դրանց հիման վրա համապատասխան գրառումներ կատարելու միջոցով փոփոխություններ է կատարում պետական գրանցամատյանում ու ապրանքային նշանի վկայագրում (առկայության դեպքում), եթե այդ փոփոխությունները համապատասխանում են օրենքի 43-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված պահանջներին և օրենքի 52-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն համապատասխան ապացույցներ պահանջելու հիմքեր չկան:

(26-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

27. Եթե ապրանքային նշանի վկայագիրը դիմումին կից չի ներկայացվել, ապա ապրանքային նշանի իրավատիրոջը կամ նրա ներկայացուցչին հանձնվում կամ փոստով ուղարկվում է պետական գրանցամատյանից համապատասխան քաղվածք:

28. Դիմումի քննարկման ընթացքում ստուգվում է ներկայացված նյութերի համապատասխանությունը պետական գրանցամատյանի տվյալներին, մասնավորապես, ներկայացված վկայագրի վավերականությունը, դիմումի համապատասխանությունը սույն կարգով սահմանված պահանջներին և դրանում նշված տվյալների (իրավատիրոջ անունը, ազգանունը և բնակության վայրը կամ անվանումը և գտնվելու վայրը, ապրանքների և (կամ) ծառայությունների) համապատասխանությունը պետական գրանցամատյանի տվյալներին, ինչպես նաև վճարված պետական տուրքի համապատասխանությունն օրենքով սահմանված դրույքաչափերին: Եթե դիմումը ներկայացվել է լիազորված անձի միջոցով, ապա ստուգվում է նաև լիազորագրի առկայությունը և դրա համապատասխանությունն օրենքով սահմանված պահանջներին:

29. Եթե քննարկման արդյունքում պարզվում է, որ ներկայացված նյութերը չեն համապատասխանում կարգի 24-րդ և 28-րդ կետերով սահմանված պահանջներին, նշանի իրավատիրոջը երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է հարցում՝ այն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում ճշգրտված կամ բացակայող նյութերը և (կամ) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պակաս վճարված պետական տուրքը վճարելու և վճարման անդորրագիրը ներկայացնելու առաջարկությամբ: Այս դեպքում պահանջված նյութերը համարվում է ներկայացված դրանցից վերջինի ստացման օրը:

30. Եթե օրենքի 52-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն դիմումում նշված փոփոխությունները հիմնավոր կասկածներ են հարուցում, օրինակ՝ առաջարկվում է պիտակի տեսքով ապրանքային նշանի պատկերի վրա որպես ապրանքն արտադրողի անվանում ավելացնել կամ փոփոխել և դարձնել իրավատիրոջ անվանումից տարբերվող անվանում, ապա

գրասենյակը երեք աշխատանքային օրվա ընթացքում հարցում է ուղարկում դիմում ներկայացնողին՝ համապատասխան ապացույցներ ներկայացնելու պահանջով:

(30-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

31. Դիմումով առաջարկվող փոփոխությունները գրասենյակի կողմից հաշվի չեն առնվում, եթե դրանք էապես փոխում են գրանցված ապրանքային նշանի պատկերը, կամ ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը ոչ նույնատիպ ապրանքներով և (կամ) ծառայություններով համալրելու անհրաժեշտություն են առաջացնում:

(31-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

32. Օրենքի 43-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, եթե լրացուցիչ նյութերն էապես փոփոխում են գրանցման ներկայացված ապրանքային նշանը, կամ եթե գրանցված նշանի ապրանքների ցանկում ներառում են ոչ նույնատիպ ապրանքներ, ապա դիմումով առաջարկվող փոփոխությունները գրասենյակի կողմից հաշվի չեն առնվում, և կարող են իրավատիրոջ կողմից ձևակերպվել որպես ինքնուրույն հայտ, ինչի մասին՝ համապատասխան հիմնավորմամբ, երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցվում է իրավատերը:

(32-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

33. Գրանցված ապրանքային նշանում փոփոխություններ կատարելիս՝ դիմումին կից ներկայացվում է նշանի փոփոխված պատկերը՝ 2 օրինակից, և նշանի նկարագրությունը՝ մատնանշելով կատարվող փոփոխությունը:

34. Իրավատիրոջ անվանման փոփոխության դեպքում դիմումին կից ներկայացվում է այդ փոփոխությունը հաստատող փաստաթուղթը:

35. Պետական գրանցամատյանում կատարված փոփոխություններն ուժի մեջ են մտնում դրանում գրառում կատարելու թվականից, և գրասենյակի կողմից հրապարակվում են «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրում:

(35-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

VI. ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

36. Համաձայն օրենքի 50-րդ հոդվածի ցանկացած անձի դիմումի համաձայն, օրենքով սահմանված պետական տուրքի վճարման պայմանով, գրասենյակը քաղվածքներ է տրամադրում պետական գրանցամատյանից:

(36-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

37. Պետական գրանցամատյանից քաղվածքը (քաղվածքները) տրամադրվում է տրված դիմումի հիման վրա՝ համաձայն սույն կարգի N 4 ձևի, որը համապատասխան պետական տուրքի վճարման անդորրագրի հետ միասին գրասենյակ է ներկայացվում ցանկացած անձի կողմից (դիմող):

(37-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

38. Դիմումը լրացվում է հետևյալ կարգով՝

- 1) 2.1-ին կետում նշվում է ապրանքային նշանի պետական գրանցման համարը.
- 2) 3.1-ին կետում նշվում են դիմողի անվանումը, եթե նա իրավաբանական անձ է, կամ անունը, ազգանունը, եթե նա ֆիզիկական անձ է: Ֆիզիկական անձի դեպքում անվան և ազգանվան հետ միասին կարող է նշվել նաև հայրանունը.
- 3) 4-րդ կետում նշվում են ներկայացված դիմումով նամակագրություն վարելու և դիմումի քննարկման ընթացքում իրավատիրոջ կամ նրա ներկայացուցչի հետ (նշանակված լինելու դեպքում) անմիջական կապ հաստատելու համար անհրաժեշտ տվյալները՝ փոստային հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն.
- 4) 5-րդ կետում նշվում է տրամադրվող քաղվածքի տեսակը, ընդ որում՝
 - ա. 5.1-ին կետի վանդակը նշվում է այն դեպքում, երբ խնդրարկվում է սովորական քաղվածք՝ առանց պետական գրանցամատյանում կատարված փոփոխությունների նշման,
 - բ. 5.2-րդ կետի վանդակը նշվում է այն դեպքում, երբ խնդրարկվում է ընդլայնված քաղվածք, որը ներառում է այդ գրանցմանը վերաբերող՝ պետական գրանցամատյանում կատարված բոլոր փոփոխությունները և գրառումները, այդ թվում՝ նաև տվյալներ իրավատիրոջ փոփոխության և լիցենզիայի գրանցման մասին,
 - գ. 6-րդ կետում լրացվում են դրա ստորագրմանը վերաբերող տվյալները՝ դիմումն ստորագրող ֆիզիկական անձի ստորագրությունը՝ նշելով նրա անունը (ցանկության դեպքում՝ նաև հայրանունը) կամ անվան (հայրանվան) սկզբնատառերը, ազգանունը և պաշտոնը,
 - դ. 6.1-ին կետում նշվում է ստորագրման թվականը,
 - ե. 7-րդ կետում նշվում է (նշվում են) տվյալներ վճարված պետական տուրքի մասին՝ լրացվում է վճարված պետական տուրքի չափը՝ թվերով,
 - զ. 7.1-ին կետում նշվում է վճարման ձևը, օրինակ՝ բանկային անկանխիկ փոխանցում:

39. Սույն կարգում նշված դիմումները, ինչպես նաև օրենքով սահմանված պետական տուրքի վճարման անդորրագրերը և դիմումներին կից փաստաթղթերը դիմողը կարող է գրասենյակ ներկայացնել իր կողմից նախընտրած եղանակով՝ փոստով, առձեռն կամ գրասենյակի էլեկտրոնային համակարգի միջոցով: Գրասենյակի կողմից ընդունված որոշումները, ծանուցումները և հարցումները ուղարկվում են դիմողին նրա կողմից փաստաթղթի ներկայացման համար ընտրված սկզբնական եղանակով կամ իր կողմից հետագայում ընտրած եղանակներից մեկով՝ փոստով կամ կապի միջոցների օգտագործմամբ կամ գրասենյակի էլեկտրոնային համակարգի միջոցով (այդ թվում՝ դիմողի նշած էլեկտրոնային փոստի միջոցով), ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված էլեկտրոնային կապի այլ միջոցներով:

Դիմողը սույն կարգի համաձայն ստացած հարցումների պատասխանները, ինչպես նաև օրենքով սահմանված պետական տուրքի վճարման անդորրագրերը կարող է ներկայացնել գրասենյակ՝ իր կողմից նախընտրած եղանակով՝ փոստով կամ կապի միջոցների օգտագործմամբ կամ գրասենյակի էլեկտրոնային համակարգի միջոցով (այդ թվում՝ էլեկտրոնային փոստի միջոցով), ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված էլեկտրոնային կապի այլ միջոցներով:

(39-րդ կետը խմբ. 12.10.23 N 1725-Ն)

40. Եթե պարզվում է, որ դիմումին կից ներկայացվել է պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը, ապա գանձապետական առցանց կառավարման համակարգի կամ պետական վճարումների գրասենյակի էլեկտրոնային համակարգի միջոցով գրասենյակը հավաստիանում է պետական տուրքի վճարման մասին: Եթե օրենքով սահմանված պետական տուրքի վճարման վերաբերյալ տվյալը չի հայտնաբերվում համապատասխան համակարգում, ապա դիմողին երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է ծանուցում՝ անդորրագրի բնօրինակը կամ տվյալ վճարման իսկության վերաբերյալ ապացույցները երկամսյա ժամկետում ներկայացնելու առաջարկությամբ:

(40-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

41. Երկու ամսվա ընթացքում պետական տուրքի վճարման անդորրագրի բնօրինակը չներկայացվելու կամ տվյալ վճարման իսկության մասին համապատասխան համակարգի միջոցով չհավաստիանալու դեպքում դիմումը համարվում է չներկայացված, ինչի մասին դիմողը երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցվում է:

Հայաստանի Հանրապետություն



ՄՏԱՎՈՐ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՎԿԱՅԱԳԻՐ

№

Ապրանքային նշանի գրանցման
սպրանքային նշանը

Республики Армения

УДОСТОВЕРЕНИЕ

Agence de la Propriété intellectuelle
de la République d'Arménie

CERTIFICAT

Intellectual Property Agency

Հայտի №
Ներկայացման թվականը

Ապրանքային նշանի առաջնությունը
of the Republic of Armenia

CERTIFICATE

Գրանցված է պետական
գրանցամատյանում

Գործողության ժամկետը

Գրասենյակի պետ

Ապրանքային նշանի գրանցման մասին հայտի համարը և նշանի նկարագրը

Ապրանքներ (ծառայություններ)

(ձևը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

Ձև N 2

<p>Դ Ի Մ Ո Ի Մ ապրանքային նշանի գրանցման գատման մասին</p>	<p>Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակ Երևան 0010, Մհեր Մկրտչյան 5/1</p>
<p>1. Խնդրարկվում է ստորև նշված գրանցման գատում</p>	<p>(լրացնում է գրասենյակը)</p>
<p>2. Սույն դիմումը վերաբերում է հետևյալ գրանցման բաժանմանը 2.1. գրանցման համարը`</p>	
<p>3. Բրավատերը (իրավատերերը)` 3.1. նշվում են իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը</p>	
<p>3.2. իրավատիրոջ գտնվելու վայրը (բնակության վայրը)` Հեռախոսահամարը ֆաքսը էլ. փոստի հասցեն</p>	
<p>3.3. <input type="checkbox"/> մեկից ավելի իրավատերեր (իրավատերերի մասին տվյալներն ըստ 3.1-3.2-րդ կետերի տրվում են առանձին թերթի վրա)</p>	
<p>4. Բրավատիրոջ ներկայացուցիչը` 4.1. նշվում են ներկայացուցչի անվանումը կամ անունը, ազգանունը</p>	

5. Նամակագրության հասցեն (փոստային հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն)

6. 2.1-ին կետում նշված գրանցումը բաժանվում է՝
6.1. գրանցումների դրանում թվարկված _____
սպրանքները և (կամ) ծառայությունները բաշխելով հետևյալ կերպ՝

Հայտը	Սպրանքները և (կամ) ծառայությունները
6.2. սկզբնական գրանցում	
6.3. գատված 1-ին գրանցում	
6.4. գատված 2-րդ գրանցում	
6.5. գատված 3-րդ գրանցում	

Մնացած գատված գրանցումների տվյալները տրվում են լրացուցիչ թերթի վրա:

7. Ստորագրությունը _____
(անունը, ազգանունը, պաշտոնը)

7.1. թվականը _____ 20 թ.

7.2. Ստորագրողը իրավատերն է իրավատիրոջ ներկայացուցիչն է

8. Վճարված է _____ դրամ պետական տուրք՝ անդորրագիրը կցվում է

8.1. վճարման ձևը _____

9. Դիմումին կից ներկայացվում են _____ լրացուցիչ թերթեր այլ փաստաթղթեր

(յուրաքանչյուր փաստաթղթի անվանումը և թերթերի թիվը)

(ձևը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

Ձև N 3

Դ Ի Մ Ո Ի Մ սպրանքային նշանի պետական գրանցամատյանում փոփոխություններ կատարելու մասին	Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակ Երևան 0010, Մհեր Մկրտչյան 5/1
1. Խնդրարկվում է ստորև նշված գրանցման մեջ կատարել սույն դիմումում նշված փոփոխությունները	(լրացնում է գրասենյակը)

<p>2. Մույն դիմումը վերաբերում է հետևյալ գրանցմանը (գրանցումներին) 2.1. գրանցման համարը (գրանցումների համարները)`</p>	
<p>2.2. <input type="checkbox"/> գրանցումների համարները տրված են առանձին թերթի վրա</p>	
<p>3. Իրավատերը (իրավատերերը)`</p> <p>3.1. (նշվում են իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը)</p>	
<p>3.2. իրավատիրոջ գտնվելու վայրը (բնակության վայրը)` Հեռախոսահամարը ֆաքսը էլ. փոստի հասցեն</p>	
<p>3.3. <input type="checkbox"/> մեկից ավելի իրավատերեր (իրավատերերի մասին տվյալներն ըստ 3.1-3.2-րդ կետերի տրվում են առանձին թերթի վրա)</p>	
<p>4. Իրավատիրոջ ներկայացուցիչը`</p> <p>4.1. (նշվում են ներկայացուցչի անվանումը կամ անունը, ազգանունը)</p>	
<p>5. Նամակագրության հասցեն (փոստային հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն)</p>	
<p>6. Փոփոխությունը (փոփոխությունները)</p>	
<p>6.1. տվյալները, որոնք պետք է փոփոխվեն`</p>	<p>6.2. Փոփոխված տեսքով տվյալները</p>
<p><input type="checkbox"/> 6.1-ին և 6.2-րդ կետերում նշված տվյալների շարունակությունը տրվում է առանձին թերթի վրա:</p>	
<p>7. Ստորագրությունը _____</p> <p style="text-align: center;">(անունը, ազգանունը, պաշտոնը)</p>	
<p>7.1. թվականը _____ 20 թ.</p>	
<p>7.2. ստորագրողը <input type="checkbox"/> իրավատերն է <input type="checkbox"/> իրավատիրոջ ներկայացուցիչն է</p>	
<p>8. <input type="checkbox"/> Վճարված է _____ դրամ պետական տուրք` <input type="checkbox"/> անդորրագիրը կցվում է</p>	
<p>9. <input type="checkbox"/> Դիմումին կից ներկայացվում են _____ լրացուցիչ թերթեր</p>	

<p align="center">Դ Ի Մ ՈՒ Մ</p> <p align="center">պետական գրանցամատյանից քաղվածքներ տրամադրելու մասին</p>	<p align="center">Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակ</p> <p align="center">Երևան 0010, Մհեր Մկրտչյան 5/1</p>
<p>1. Խնդրարկվում է տրամադրել քաղվածք (քաղվածքներ) ապրանքային նշանների պետական գրանցամատյանից՝ ստորև նշված գրանցման (գրանցումների) համար</p>	<p align="center">(լրացնում է գրասենյակը)</p>
<p>2. Սույն դիմումը վերաբերում է հետևյալ գրանցմանը (գրանցումներին)</p> <p>2.1. գրանցման համարը (գրանցումների համարները)</p>	
<p>3. Դիմող</p> <p>3.1. (նշվում է իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը)</p>	
<p>4. Նամակագրության հասցեն՝</p> <p>(փոստային հասցեն, հեռախոսահամարը ֆաքսը էլ. փոստի հասցեն)</p>	
<p>5. Քաղվածքի տեսակը</p>	
<p><input type="checkbox"/> 5.1. սովորական քաղվածք</p> <p><input type="checkbox"/> 5.2. ընդլայնված քաղվածք՝ պետական գրանցամատյանում կատարված փոփոխություններով և գրառումներով</p>	
<p>6. Ստորագրությունը _____</p>	
<p align="center">(անունը, ազգանունը, պաշտոնը)</p>	
<p>6.1. թվականը _____ 20 թ.</p>	
<p>7. Վճարված է պետական տուրք, անդորրագիրը կցվում է</p> <p>7.1. վճարման ձևը _____</p>	

(ձևը փոփ. 12.10.23 N 1725-Ն)
(հավելվածը փոփ. 05.03.15 N 213-Ն, խմբ. 10.08.17 N 1017-Ն, փոփ., խմբ. 12.10.23 N 1725-Ն)

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2010 թվականի
նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշման

Կ Ա Ր Գ

**ԿՈՒԵԿՏԻՎ ՆՇԱՆԸ ԿԱՍ ԴՐԱ ՀԱՅՏԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱԲԱՐ ԱՆՁԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԻ
ԿԱՍ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԻ ՀԱՅՏԻ ԵՎ ՀԱԿԱՌԱԿԸ ՓՈԽԱԿԵՐՊԵԼՈՒ**

1. Սույն կարգով կարգավորվում են կոլեկտիվ նշանը կամ դրա հայտը համապատասխանաբար անձի ապրանքային

նշանի կամ ապրանքային նշանի հայտի փոխակերպելու և հակառակը՝ անձի ապրանքային նշանը կամ ապրանքային նշանի հայտը կոլեկտիվ նշանի կամ դրա հայտի փոխակերպելու (այսուհետ՝ փոխակերպում) հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում օգտագործված են «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված հասկացությունները:

3. Կոլեկտիվ նշանը որևէ անձի ապրանքային նշանի փոխակերպվում է ներկայացված դիմումի հիման վրա՝ համաձայն սույն կարգի N 1 ձևի:

4. Դիմումը, որը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակ (այսուհետ՝ գրասենյակ) և, որին կցվում է փոխակերպվող կոլեկտիվ նշանի վկայագիրը, լրացվում է հետևյալ կարգով՝

1) 2.1-6-րդ կետերը լրացվում են ըստ դրանցում նշված ցուցումների: Ընդ որում, 5-րդ դաշտը լրացվում է այն դեպքում, երբ նոր իրավատերը ներկայացված է ներկայացուցչի միջոցով:

2) 7-րդ և 8-րդ կետերը լրացվում են այն դեպքում, երբ փոխակերպումն իրականացվում է այն ապրանքների և (կամ) ծառայությունների սահմանափակմամբ, որոնց համար գրանցված է կոլեկտիվ նշանը: Այս դեպքում՝

ա. 7-րդ կետում նշվում են միայն կոլեկտիվ նշանի վկայագրում ներկայացված այն ապրանքները և (կամ) ծառայությունները, որոնց համար նախատեսվում է պահպանել ապրանքային նշանի գրանցման գործողությունը: Նշված ապրանքները և (կամ) ծառայությունները նշվում են ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման (ԱՕՄԴ) դասերին համապատասխան խմբավորված,

բ. 8-րդ կետում նշվում են միայն կոլեկտիվ նշանի վկայագրում ներկայացված այն ապրանքները և (կամ) ծառայությունները, որոնց համար չի նախատեսվում պահպանել ապրանքային նշանի գրանցման գործողությունը: Այդ ապրանքները և (կամ) ծառայությունները նշվում են ԱՕՄԴ-ի դասերին համապատասխան խմբավորված:

3) 9-րդ կետը լրացվում է համապատասխան վանդակները նշելու միջոցով՝ հաշվի առնելով, որ փոխակերպման հիմք կարող է հանդիսանալ կոլեկտիվ նշանի իրավատիրոջ և այն անձի միջև կնքված պայմանագիրը կամ փոխանցման ակտը, որի ապրանքային նշանին է փոխակերպվում կոլեկտիվ նշանը, կամ կոլեկտիվ նշանի իրավատիրոջ որոշումը, կամ օրենքին չհակասող այլ փաստաթուղթ: Փոխակերպման հիմք հանդիսացող փաստաթղթերը կամ նոտարական կարգով վավերացված դրանց պատճենները կամ դրանցից քաղվածքները պետք է կցվեն դիմումին:

4) 10-րդ կետում՝
ա. 10.1-ին և 10.2-րդ կետերը լրացվում և ստորագրվում են կոլեկտիվ նշանի իրավատիրոջ և ապրանքային նշանի նոր իրավատիրոջ կողմից: Նշված անձանց փոխարեն կարող են ստորագրել նաև նրանց ներկայացուցիչները:

Ստորագրողների ինքնությունից կախված՝ նշվում են 10.4-րդ կետի համապատասխան վանդակները,

բ. 10.3-րդ կետում նշվում է դիմումի ստորագրման թվականը՝ օրը, ամիսը, տարեթիվը:

5) 11-րդ կետը լրացվում է վանդակը նշելու, վճարված պետական տուրքի գումարի չափը լրացնելու և վճարման եղանակին համապատասխանող վանդակը նշելու միջոցով: Տվյալ դեպքում պետական տուրքը վճարվում է ապրանքային նշանների պետական գրանցամատյանում փոփոխություն կատարելու համար: Վկայագրի կրկնակ խնդրարկելու դեպքում վճարվում է նաև դրա համար սահմանված պետական տուրքը: Այս դեպքում դիմումի 11-րդ կետի համաձայն վճարված պետական տուրքի գումարի չափը նշվում է երկու գումարելիների տեսքով, եթե դրանք վճարված են առանձին-առանձին:

6) 12-րդ կետը լրացվում է վանդակը և դիմումին կից ներկայացված լրացուցիչ թերթերի թիվը նշելու միջոցով, որոնք պայմանավորված են դիմումի 2.2-րդ, 4.3-րդ, 7-րդ, 8-րդ և 10.4-րդ կետերին համապատասխան տվյալները ներկայացնելով:

7) 13-րդ կետի համապատասխան դաշտը լրացվում է՝ հաշվի առնելով «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 49-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ապրանքային նշանի գրանցման վկայագրի կրկնակ տրամադրելու վերաբերյալ պահանջները:

(4-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

5. Որևէ անձի ապրանքային նշանը կոլեկտիվ նշանի փոխակերպվում է ներկայացված դիմումի հիման վրա՝ համաձայն սույն կարգի N 2 ձևի, որին կից պետք է ներկայացվի նաև օրենքի 33-րդ հոդվածով սահմանված պահանջներին համապատասխան ձևակերպված կոլեկտիվ նշանի օգտագործման կանոնակարգը:

6. Սույն կարգի 4-րդ կետով սահմանված պահանջները կիրառվում են նաև N 2 ձևի համաձայն ներկայացված դիմումի նկատմամբ, այս դեպքում «կոլեկտիվ նշան» բառակապակցությունը և դրան համապատասխան հոլովածները փոխարինվում են «ապրանքային նշան» բառակապակցությամբ և դրան համապատասխան հոլովածներով և հակառակը:

7. Գրասենյակը սույն կարգի 3-րդ կամ 5-րդ կետերում նշված դիմումները քննարկում է դրանց ստացման օրվանից 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ ստուգելով դրանց համապատասխանությունը սույն կարգով սահմանված պահանջներին:

(7-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

8. Որևէ անձի ապրանքային նշանը կոլեկտիվ նշանի փոխակերպելու մասին դիմումի քննարկման ընթացքում հաշվի է առնվում նաև կոլեկտիվ նշանի գրանցումը մերժելու մասին օրենքի 34-րդ հոդվածով սահմանված հիմքերի առկայությունը:

9. Եթե պարզվում է, որ ներկայացված դիմումը համապատասխանում է սույն կարգով սահմանված պահանջներին, իսկ ապրանքային նշանը կոլեկտիվ նշանի փոխակերպելու դեպքում՝ որևէ անձի ապրանքային նշանը կոլեկտիվ նշանի

փոխակերպելու մասին դիմումի քննարկման արդյունքում պարզվել է նաև, որ առկա չէ օրենքի 34-րդ հոդվածով նախատեսված կոլեկտիվ նշանի գրանցման մերժման որևէ հիմք, ապա գրասենյակը կատարում է համապատասխան փոխակերպումը՝ դրա մասին գրառում կատարելով ապրանքային նշանների պետական գրանցամատյանում և փոխակերպված կոլեկտիվ նշանի կամ ապրանքային նշանի վկայագրում (այսուհետ՝ վկայագիր):

(9-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

10. Դիմումին կից վկայագիրը չներկայացնելու և դրա կրկնակը խնդրարկելու դեպքում՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրասենյակը պատրաստում է վկայագրի կրկնակը՝ փոխակերպման մասին համապատասխան գրառում կատարելով դրա մեջ:

(10-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

11. Գրասենյակը սույն կարգի 9-րդ կետի համաձայն ապրանքային նշանների պետական գրանցամատյանում և փոխակերպված կոլեկտիվ նշանի վկայագրում կատարում է հետևյալ գրառումներից մեկը՝

1) «Կոլեկտիվ նշանը փոխակերպվել է (նշվում են նոր իրավատիրոջ անունը, ազգանունը և բնակության վայրը կամ անվանումը և գտնվելու վայրը) ապրանքային նշանի»՝ նշելով փոխակերպման թվականը (պետական գրանցամատյանում դրա մասին գրառում կատարելու օրը, ամիսը, տարեթիվը):

2) «Ապրանքային նշանը փոխակերպվել է (նշվում են նոր իրավատիրոջ անունը, ազգանունը և բնակության վայրը կամ անվանումը և գտնվելու վայրը) կոլեկտիվ նշանի»՝ նշելով փոխակերպման թվականը:

(11-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

12. Փոխակերպման ժամանակ ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը կրճատելու դեպքում գրասենյակն ապրանքային նշանների պետական գրանցամատյանում և վկայագրում կատարում է գրառում նաև դրա մասին՝ նշելով այն ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը, որոնց նկատմամբ կշարունակի գործել փոխակերպված գրանցումը:

(12-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

13. Գրասենյակը վկայագիրը, կամ համապատասխան դեպքում վկայագրի կրկնակը, նոր իրավատիրոջն է հանձնում՝ պատվիրված փոստային առաքմամբ, հանձնման մասին ծանուցմամբ, կամ առձեռն ստացակաճով:

(13-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

14. Եթե դիմումի քննարկման ընթացքում պարզվում է, որ այն չի համապատասխանում սույն կարգով սահմանված պահանջներին, ապա գրասենյակը երեք աշխատանքային օրվա ընթացքում հարցում է ուղարկում դիմումատուին՝ հարցումն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում դիմումը և (կամ) դրան կից ներկայացված նյութերը ճշգրտելու և (կամ) բացակայող փաստաթղթերը ներկայացնելու առաջարկությամբ:

(14-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

15. Պահանջված նյութերը երկամսյա ժամկետում ստանալու դեպքում գրասենյակը կատարում է դիմումում նշված փոխակերպումը՝ առաջնորդվելով սույն կարգի 8-12-րդ կետերով:

(14-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

16. Պահանջված նյութերը դիմումատուի կողմից երկամսյա ժամկետում չներկայացվելու դեպքում դիմումը համարվում է հետ կանչված, ինչի մասին գրասենյակը երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է դիմումատուին: Այս դեպքում դիմումի 9-րդ կետում նշված պայմանագիրը կամ փոխանցման ակտը և վճարված պետական տուրքերի անդորրագրերը վերադարձվում են դիմումատուին:

(16-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

17. Եթե անձի ապրանքային նշանը կոլեկտիվ նշանի փոխակերպելու մասին դիմումի քննարկման արդյունքում պարզվում է, որ այն համապատասխանում է սույն կարգով սահմանված պահանջներին, սակայն առկա են օրենքի 34-րդ հոդվածով նախատեսված կոլեկտիվ նշանի գրանցման մերժման հիմքեր, ապա գրասենյակը մերժում է ներկայացված դիմումը, ինչի մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է դիմումատուին:

(17-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

18. Կոլեկտիվ նշանի հայտը որևէ անձի ապրանքային նշանի հայտի փոխակերպվում է սույն կարգի N 3 ձևի համաձայն ներկայացված դիմումի, իսկ որևէ անձի ապրանքային նշանի հայտը կոլեկտիվ նշանի հայտի փոխակերպվում է սույն կարգի N 4 ձևի համաձայն ներկայացված դիմումի հիման վրա: Նշված դիմումները գրասենյակ են ներկայացվում մինչև հայտարկված կոլեկտիվ նշանի (ապրանքային նշանի) գրանցման մասին որոշման ընդունումը:

(18-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

19. Սույն կարգի 4-րդ կետով սահմանված պահանջները (բացառությամբ 7-րդ ենթակետի) NN 3 և 4 ձևերի համաձայն ներկայացված դիմումների նկատմամբ կիրառվում են մութաթիս մութանդիս (mutatis mutandis համապատասխան փոփոխություններով): Տվյալ դեպքում պետական տուրքը վճարվում է ապրանքային նշանի հայտում փոփոխություն կատարելու համար:

20. Գրասենյակը սույն կարգի 18-րդ կետում նշված դիմումները քննարկում է դրանց ստացման օրվանից 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ ստուգելով դրանց համապատասխանությունը սույն կարգով սահմանված պահանջներին:

(20-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

21. Եթե քննարկման արդյունքում պարզվում է, որ ներկայացված դիմումը համապատասխանում է սույն կարգով սահմանված պահանջներին, ապա գրասենյակը կատարում է համապատասխան փոխակերպումը՝ դրա մասին համապատասխան փոփոխություններ կատարելով ապրանքային նշանների հայտերի հիմնապաշարում, ինչի մասին

երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցում է հայտատուին:

(21-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

22. Փոխակերպման ժամանակ ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը սահմանափակելու դեպքում գրասենյակն ապրանքային նշանների հիմնապաշարում կատարում է գրառում նաև դրա մասին՝ նշելով այն ապրանքների (կամ) ծառայությունների ցանկը, որոնց նկատմամբ կշարունակվի հայտի հետագա քննարկումը:

(22-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

23. Եթե դիմումի քննարկման ընթացքում պարզվում է, որ այն չի համապատասխանում սույն կարգով սահմանված պահանջներին, ապա գրասենյակը երեք աշխատանքային օրվա ընթացքում հարցում է ուղարկում դիմումատուին՝ հարցումն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում դիմումը (և) կամ դրան կից ներկայացված նյութերը ճշգրտելու և (կամ) բացակայող փաստաթղթերը ներկայացնելու առաջարկությամբ:

(23-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

24. Պահանջված նյութերը երկամսյա ժամկետում ստանալու դեպքում գրասենյակը կատարում է դիմումում նշված փոխակերպումը՝ առաջնորդվելով սույն կարգի 21-22-րդ կետերով:

(24-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

25. Պահանջված նյութերը դիմումատուի կողմից երկամսյա ժամկետում չներկայացվելու դեպքում դիմումը համարվում է հետ կանչված, ինչի մասին գրասենյակը երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցում է դիմումատուին: Այս դեպքում դիմումատուին են վերադարձվում դիմումի 9-րդ կետում նշված պայմանագիրը կամ փոխանցման ակտը և վճարված պետական տուրքի անդորրագիրը:

(25-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

26. Գրասենյակի կողմից ընդունված որոշումները, ծանուցումները և հարցումները ուղարկվում են դիմողին նրա կողմից փաստաթղթի ներկայացման համար ընտրված սկզբնական եղանակով կամ իր կողմից հետագայում ընտրած եղանակներից մեկով՝ փոստով կամ կապի միջոցների օգտագործմամբ կամ գրասենյակի էլեկտրոնային համակարգի միջոցով (այդ թվում՝ դիմողի նշած էլեկտրոնային փոստի միջոցով), ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված էլեկտրոնային կապի այլ միջոցներով: Դիմողը սույն կարգի համաձայն ստացած հարցումների պատասխանները, ինչպես նաև օրենքով սահմանված պետական տուրքի վճարման անդորրագրերը կարող է ներկայացնել գրասենյակ՝ իր կողմից նախընտրած եղանակով՝ փոստով կամ կապի միջոցների օգտագործմամբ կամ գրասենյակի էլեկտրոնային համակարգի միջոցով (այդ թվում՝ էլեկտրոնային փոստի միջոցով), ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված էլեկտրոնային կապի այլ միջոցներով:

(26-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

27. Եթե պարզվում է, որ դիմումին կից ներկայացվել է պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը, ապա գանձապետական առցանց կառավարման համակարգի կամ պետական վճարումների գրասենյակի էլեկտրոնային համակարգի միջոցով գրասենյակը հավաստիանում է պետական տուրքի վճարման մասին: Եթե օրենքով սահմանված պետական տուրքի վճարման վերաբերյալ տվյալը չի հայտնաբերվում համապատասխան համակարգում, ապա դիմողին երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է ծանուցում՝ անդորրագրի բնօրինակը կամ տվյալ վճարման իսկության վերաբերյալ ապացույցները երկամսյա ժամկետում ներկայացնելու առաջարկությամբ:

(27-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

28. Երկու ամսվա ընթացքում պետական տուրքի վճարման անդորրագրի բնօրինակը չներկայացվելու կամ տվյալ վճարման իսկության մասին համապատասխան համակարգի միջոցով չհավաստիանալու դեպքում գրասենյակը դիմումը համարում է հետ կանչված, ինչի մասին դիմողը երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցվում է:

(28-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

Ձև N 1

<p style="text-align: center;">Դ Ի Մ ՈՒ Մ</p> <p style="text-align: center;">կողեկտիվ նշանն անձի ապրանքային նշանի փոխակերպելու մասին</p>	<p>Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակ</p> <p style="text-align: center;">Երևան 0010, Մհեր Մկրտչյան 5/1</p>
<p>1. Խնդրարկվում է ստորև նշված կողեկտիվ նշանը փոխակերպել սույն դիմումում նշված անձի ապրանքային նշանի</p>	<p style="text-align: center;">(լրացնում է գրասենյակը)</p>
<p>2. Սույն դիմումը վերաբերում է կողեկտիվ նշանի հետևյալ գրանցմանը (վկայագիրը կցվում է)</p> <p>2.1. գրանցման համարը և թվականը</p>	

<p>2.2. ապրանքները և (կամ) ծառայությունները, որոնց համար գրանցված է կոլեկտիվ նշանը ապրանքները և (կամ) ծառայությունները նշվում են ըստ ԱՕՄԴ-ի դասերի <input type="checkbox"/></p> <p>շարունակությունը տրվում է լրացուցիչ թերթի վրա</p>
<p>3. Կոլեկտիվ նշանի իրավատերը (իրավատերերը)</p>
<p>3.1. նշվում են իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը</p>
<p>3.2. իրավատիրոջ գտնվելու վայրը (բնակության վայրը) նշվում են իրավատիրոջ գտնվելու վայրը (բնակության վայրը), հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն</p>
<p>4. Անձը, որի ապրանքային նշանի է փոխակերպվում կոլեկտիվ նշանը (նոր իրավատեր)</p>
<p>4.1. նշվում են նոր իրավատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն</p>
<p>4.2. նոր իրավատիրոջ գտնվելու վայրը (բնակության վայրը) նշվում են նոր իրավատիրոջ գտնվելու վայրը (բնակության վայրը), հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն</p>
<p>4.3. <input type="checkbox"/> նոր իրավատերերը մի քանիսն են (նոր իրավատերերի և նրանց ներկայացուցիչների մասին տվյալներն ըստ 4.2-րդ և 5-րդ կետերի տրվում են լրացուցիչ թերթերի վրա)</p>
<p>5. Նոր իրավատիրոջ ներկայացուցիչը նշվում են ներկայացուցչի անվանումը կամ անունը, ազգանունը, հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն</p>
<p>6. Նամակագրության հասցեն՝ նշվում են փոստային հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն</p>
<p>7. Փոխակերպված ապրանքային նշանի գրանցման գործողությունը սահմանափակվում է հետևյալ ապրանքների և (կամ) ծառայությունների համար ապրանքները և (կամ) ծառայությունները նշվում են ըստ ԱՕՄԴ-ի դասերի <input type="checkbox"/></p> <p>շարունակությունը տրվում է լրացուցիչ թերթի վրա</p>
<p>8. <input type="checkbox"/> Ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկից հանվում են ապրանքները և (կամ) ծառայությունները նշվում են ըստ ԱՕՄԴ-ի դասերի <input type="checkbox"/></p> <p>շարունակությունը տրվում է լրացուցիչ թերթի վրա</p>
<p>9. Կոլեկտիվ նշանի փոխակերպումն իրականացվում է՝ <input type="checkbox"/> պայմանագրի <input type="checkbox"/> փոխանցման ակտի <input type="checkbox"/> այլ փաստաթղթի հիման վրա (<input type="checkbox"/> պայմանագիրը, <input type="checkbox"/> փոխանցման ակտը, <input type="checkbox"/> այլ փաստաթուղթը կամ <input type="checkbox"/> դրա քաղվածքը կցվում են)</p>

10. Ստորագրությունը _____

10.1. _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը, պաշտոնը)

10.2. _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը, պաշտոնը)

10.3. Թվականը _____ 20 _ թ.

10.4. Ստորագրողը՝ կոլեկտիվ նշանի իրավատերն է նրա ներկայացուցիչն է (լիազորագիրը կցվում է)

նոր իրավատերն է նրա ներկայացուցիչն է (լիազորագիրը կցվում է)

կոլեկտիվ նշանի նոր իրավատերերն են նրանց ներկայացուցիչներն են

նոր իրավատերերը մի քանիսն են (10.1-ին կետի տվյալները տրվում են լրացուցիչ թերթի վրա)

11. Վճարված է _____ դրամ պետական տուրք՝
 բանկային ստորական փոխանցմամբ (անդորրագիրը կցվում է) էլեկտրոնային եղանակով

12. Հայտին կից ներկայացվում են _____ լրացուցիչ թերթեր:

13. Կոլեկտիվ նշանի գրանցման վկայագիրը՝ կցվում է չի կցվում, խնդրարկվում է դրա կրկնակը (սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը կցվում է)

(ձևը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

Ձև N 2

<p style="text-align: center;">Դ Ի Մ ՈՒ Մ</p> <p style="text-align: center;">անձի ապրանքային նշանը կոլեկտիվ նշանի փոխակերպելու մասին</p>	<p>Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակ</p> <p style="text-align: center;">Երևան 0010, Մեեր Մկրտչյան 5/1</p>
<p>1. Խնդրարկվում է ստորև նշված ապրանքային նշանը փոխակերպել սույն դիմումում նշված կոլեկտիվ նշանի</p>	<p style="text-align: center;">(լրացնում է գրասենյակը)</p>
<p>2. Սույն դիմումը վերաբերում է ապրանքային նշանի հետևյալ գրանցմանը (վկայագիրը կցվում է)</p> <p>2.1. գրանցման համարը և թվականը</p>	
<p>2.2. ապրանքները և (կամ) ծառայությունները, որոնց համար գրանցված է ապրանքային նշանը</p> <p>ապրանքները և (կամ) ծառայությունները նշվում են ըստ ԱՕՄԴ-ի դասերի <input type="checkbox"/></p> <p>շարունակությունը տրվում է լրացուցիչ թերթի վրա</p>	

<p>3. Ապրանքային նշանի իրավատերը (իրավատերերը)</p> <p>3.1. նշվում են իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը</p>
<p>3.2. իրավատիրոջ գտնվելու վայրը (բնակության վայրը)</p> <p>նշվում են իրավատիրոջ գտնվելու վայրը (բնակության վայրը), հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն</p>
<p>3.3. <input type="checkbox"/> իրավատերերը մի քանիսն են (նրանց մասին տվյալները, ըստ 3.1-ին և 3.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթերի վրա)</p>
<p>4. Անձը, որի կողմից նշանի է փոխակերպվում ապրանքային նշանը (նոր իրավատեր)</p> <p>4.1. նշվում են նոր իրավատիրոջ անվանումը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն</p>
<p>4.2. նոր իրավատիրոջ գտնվելու վայրը (բնակության վայրը)</p> <p>նշվում են նոր իրավատիրոջ գտնվելու վայրը (բնակության վայրը), հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն</p>
<p>5. Նոր իրավատիրոջ ներկայացուցիչը</p> <p>նշվում են ներկայացուցչի անվանումը կամ անունը, ազգանունը, հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն</p>
<p>6. Նամակագրության հասցեն`</p> <p>նշվում են փոստային հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն</p>
<p>7. <input type="checkbox"/> Կողմից նշանի գրանցման գործողությունը սահմանափակվում է հետևյալ ապրանքների և (կամ) ծառայությունների համար</p> <p>ապրանքները և (կամ) ծառայությունները նշվում են ըստ ԱՕՄԴ-ի դասերի <input type="checkbox"/></p> <p>շարունակությունը տրվում է լրացուցիչ թերթի վրա</p>
<p>8. Ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկից հանվում են</p> <p>ապրանքները և (կամ) ծառայությունները նշվում են ըստ ԱՕՄԴ-ի դասերի <input type="checkbox"/></p> <p>շարունակությունը տրվում է լրացուցիչ թերթի վրա</p>
<p>9. Ապրանքային նշանի փոխակերպումն իրականացվում է`</p> <p><input type="checkbox"/> պայմանագրի, <input type="checkbox"/> փոխանցման ակտի, <input type="checkbox"/> այլ փաստաթղթի հիման վրա</p> <p>(<input type="checkbox"/> պայմանագիրը, <input type="checkbox"/> փոխանցման ակտը, <input type="checkbox"/> այլ փաստաթուղթը կամ <input type="checkbox"/> դրա քաղվածքը կցվում են)</p>

10. Ստորագրություն՝

10.1. _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը, պաշտոնը)

10.2. _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը, պաշտոնը)

10.3. Թվականը _____ 20 _ թ.

10.4. Ստորագրողը՝
 ապրանքային նշանի իրավատերն է նրա ներկայացուցիչն է (լիազորագիրը կցվում է)
 նոր իրավատերն է նրա ներկայացուցիչն է (լիազորագիրը կցվում է)
 ապրանքային նշանի և կոլեկտիվ նշանի իրավատերերն են նրանց ներկայացուցիչներն են
 ապրանքային նշանի իրավատերերը մի քանիսն են (10.1-ին կետի տվյալները տրվում են լրացուցիչ թերթի վրա)

11. Վճարված է _____ դրամ պետական տուրք՝
 բանկային սովորական փոխանցմամբ (անդորրագիրը կցվում է) էլեկտրոնային եղանակով

12. Հայտին կից ներկայացվում են _____ լրացուցիչ թերթեր

13. Ապրանքային նշանի գրանցման վկայագիրը՝ կցվում է չի կցվում, խնդրարկվում է
 դրա կրկնակը (սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը կցվում է)

14. Սույն դիմումին կից ներկայացվում է կոլեկտիվ նշանի օգտագործման կանոնակարգը

(ձևը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

Ձև N 3

<p>Դ Ի Ս ՈՒ Մ կոլեկտիվ նշանի հայտն անձի ապրանքային նշանի հայտի փոխակերպելու մասին</p>	<p>Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակ Երևան 0010, Մհեր Մկրտչյան 5/1</p>
<p>1. Խնդրարկվում է ստորև նշված կոլեկտիվ նշանի հայտը փոխակերպել սույն դիմումում նշված անձի ապրանքային նշանի հայտի</p>	<p>(լրացնում է գրասենյակը)</p>
<p>2. Սույն դիմումը վերաբերում է կոլեկտիվ նշանի հետևյալ հայտին՝ 2.1. հայտի համարը և այն ներկայացնելու թվականը</p>	

<p>2.2. ապրանքները և (կամ) ծառայությունները, որոնց համար գրանցման է ներկայացված կոլեկտիվ նշանը ապրանքները և (կամ) ծառայությունները նշվում են ըստ ԱՕՄԴ-ի դասերի <input type="checkbox"/></p> <p>շարունակությունը տրվում է լրացուցիչ թերթի վրա</p>
<p>3. Կոլեկտիվ նշանի հայտատուն (հայտատուները)</p> <p>3.1. նշվում են իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը</p>
<p>3.2. հայտատուի գտնվելու վայրը (բնակության վայրը)</p> <p>նշվում են հայտատուի գտնվելու վայրը (բնակության վայրը) հեռախոսահամարը ֆաքսը էլ. փոստի հասցեն</p>
<p>4. Անձը, որի ապրանքային նշանի հայտի է փոխակերպվում կոլեկտիվ նշանի հայտը (նոր հայտատու)</p> <p>4.1. նշվում են նոր հայտատուի անվանումը կամ անունը, ազգանունը, հեռախոսահամարը ֆաքսը էլ. փոստի հասցեն</p>
<p>4.2. Նոր հայտատուի գտնվելու վայրը (բնակության վայրը)</p> <p>նշվում են նոր հայտատուի գտնվելու վայրը (բնակության վայրը), հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն</p>
<p>4.3. <input type="checkbox"/> նոր հայտատուները մի քանիսն են (նոր հայտատուների և նրանց ներկայացուցիչների մասին տվյալները, ըստ 4-4.2-րդ և 5-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթերի վրա)</p>
<p>5. Նոր հայտատուի ներկայացուցիչը</p> <p>5.1. նշվում են ներկայացուցչի անվանումը կամ անունը, ազգանունը, հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն</p>
<p>6. Նամակագրության հասցեն՝</p> <p>նշվում են փոստային հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն</p>
<p>7. <input type="checkbox"/> Փոխակերպված հայտը սահմանափակվում է հետևյալ ապրանքների և (կամ) ծառայությունների համար</p> <p>ապրանքները և (կամ) ծառայությունները նշվում են ըստ ԱՕՄԴ-ի դասերի <input type="checkbox"/></p> <p>շարունակությունը տրվում է լրացուցիչ թերթի վրա</p>
<p>8. <input type="checkbox"/> Կոլեկտիվ նշանի հայտում նշված ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկից հանվում են ապրանքները և (կամ) ծառայությունները նշվում են ըստ ԱՕՄԴ-ի դասերի <input type="checkbox"/></p> <p>շարունակությունը տրվում է լրացուցիչ թերթի վրա</p>
<p>9. <input type="checkbox"/> Կոլեկտիվ նշանի հայտի փոխակերպումն իրականացվում է՝</p> <p><input type="checkbox"/> պայմանագրի, <input type="checkbox"/> փոխանցման ակտի, <input type="checkbox"/> այլ փաստաթղթի հիման վրա</p> <p>(<input type="checkbox"/> պայմանագիրը, <input type="checkbox"/> փոխանցման ակտը, <input type="checkbox"/> այլ փաստաթուղթը կամ <input type="checkbox"/> դրա քաղվածքը կցվում են)</p>

10. Ստորագրությունը _____

10.1. _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը, պաշտոնը)

10.2. _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը, պաշտոնը)

10.3. Թվականը _____ 20__ թ.

10.4. Ստորագրողը՝ կոլեկտիվ նշանի հայտատուն է նրա ներկայացուցիչն է (լիազորագիրը կցվում է)
 նոր հայտատուն է նրա ներկայացուցիչն է (լիազորագիրը կցվում է)
 կոլեկտիվ նշանի նոր հայտատուներն են նրանց ներկայացուցիչներն են
 նոր հայտատուները մի քանիսն են (10.1-ին կետի սովյալները տրվում են լրացուցիչ թերթի վրա)

11. Վճարված է _____ պետական տուրք՝
 բանկային սովորական փոխանցմամբ (անդորրագիրը կցվում է) էլեկտրոնային եղանակով

12. Հայտին կից ներկայացվում են _____ լրացուցիչ թերթեր:

(ձևը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

Ձև N 4

<p style="text-align: center;">Դ Ի Մ ՈՒ Մ</p> <p style="text-align: center;">անձի ապրանքային նշանի հայտը կոլեկտիվ նշանի հայտի փոխակերպելու մասին</p>	<p>Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակ</p> <p style="text-align: center;">Երևան 0010, Մհեր Մկրտչյան 5/1</p>
<p>1. Խնդրարկվում է ստորև նշված ապրանքային նշանի հայտը փոխակերպել սույն դիմումում նշված կոլեկտիվ նշանի հայտի</p>	<p style="text-align: center;">(լրացնում է գրասենյակը)</p>
<p>2. Սույն դիմումը վերաբերում է ապրանքային նշանի հետևյալ հայտին՝</p> <p>2.1. հայտի համարը և այն ներկայացնելու թվականը</p>	
<p>2.2. ապրանքները և (կամ) ծառայությունները, որոնց համար գրանցման է ներկայացված ապրանքային նշանը</p> <p>(ապրանքները և (կամ) ծառայությունները նշվում են ըստ ԱՕՄԴ -ի դասերի) <input type="checkbox"/></p> <p>շարունակությունը տրվում է լրացուցիչ թերթի վրա</p>	
<p>3. Ապրանքային նշանի հայտատուն (հայտատու)</p> <p>3.1. նշվում են իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը</p>	
<p>3.2. հայտատուի գտնվելու վայրը (բնակության վայրը)</p> <p>նշվում են հայտատուի գտնվելու վայրը (բնակության վայրը), հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն</p>	

3.3. հայտատուները մի քանիսն են (նրանց մասին տվյալները, ըստ 3.1-3.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթերի վրա)

4. Անձը, որի կողմից նշանի հայտի է փոխակերպվում ապրանքային նշանի հայտը (նոր հայտատու)

4.1. նշվում են նոր հայտատուի անվանումը կամ անունը, ազգանունը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն

4.2. նոր հայտատուի գտնվելու վայրը (բնակության վայրը)

4.3. նշվում են նոր հայտատուի գտնվելու վայրը (բնակության վայրը), հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն

5. Նոր հայտատուի ներկայացուցիչը

5.1. նշվում են ներկայացուցչի անվանումը կամ անունը, ազգանունը, հասցեն, հեռախոսահամարը ֆաքսը էլ. փոստի հասցեն

6. Նամակագրության հասցեն`

նշվում են փոստային հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն

7. Փոխակերպված հայտը սահմանափակվում է հետևյալ ապրանքների և (կամ) ծառայությունների համար

ապրանքները և (կամ) ծառայությունները նշվում են ըստ ԱՕՄԴ-ի դասերի

շարունակությունը տրվում է լրացուցիչ թերթի վրա

8. Ապրանքային նշանի հայտում նշված ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկից հանվում են

ցանկից հանված ապրանքները և (կամ) ծառայությունները նշվում են ըստ ԱՕՄԴ-ի դասերի

շարունակությունը տրվում է լրացուցիչ թերթի վրա

9. Ապրանքային նշանի հայտի փոխակերպումն իրականացվում է`

պայմանագրի, փոխանցման ակտի, այլ փաստաթղթի հիման վրա

(պայմանագիրը, փոխանցման ակտը, այլ փաստաթուղթը կամ դրա քաղվածքը կցվում են)

10. Ստորագրությունը _____

10.1. _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը, պաշտոնը)

10.2. _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը, պաշտոնը)

10.3. Թվականը _____ 20__ թ.

10.4. Ստորագրողը՝ ապրանքային նշանի հայտատուն է նրա ներկայացուցիչն է (լիազորագիրը կցվում է)

նոր հայտատուն է նրա ներկայացուցիչն է (լիազորագիրը կցվում է)

ապրանքային նշանի նոր հայտատուներն են նրանց ներկայացուցիչներն են

ապրանքային նշանի հայտատուները քանիսն են (10.1-ին կետի տվյալները տրվում են լրացուցիչ թերթի վրա)

11. Վճարված է _____ պետական տուրք՝
 Բանկային սովորական փոխանցմամբ (անդորրագիրը կցվում է) Էլեկտրոնային եղանակով

12. Հայտին կից ներկայացվում են _____ լրացուցիչ թերթեր:

(ձևը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

(հավելվածը խմբ. 10.08.17 N 1017-Ն, փոփ. 12.10.23 N 1725-Ն)

Հավելված N 3

ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ, ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են ապրանքային նշանների հայտերը լրացնելու և ներկայացնելու, դրանց նախնական և ըստ էության փորձաքննություններն անցկացնելու, զատելու, ինչպես նաև դրանցում փոփոխություններ կատարելու հետ կապված հարաբերությունները:
2. Սույն կարգում օգտագործված են «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված հասկացությունները:

II. ՀԱՅՏԻ ՁԵՎԸ ԵՎ ԱՅՆ ԼՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3. Ապրանքային նշանի պետական գրանցումն իրականացվում է ներկայացված հայտի հիման վրա՝ համաձայն սույն կարգի N 1 ձևի, որը Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակ (այսուհետ՝ գրասենյակ) է ներկայացվում գրավոր՝ տպագիր ձևով, կամ գրասենյակի էլեկտրոնային համակարգի միջոցով: Հայտը, դրան կից ներկայացվող փաստաթղթերը և, անհրաժեշտության դեպքում, հայտին վերաբերող հետագա հաղորդագրությունները ներկայացվում են հայերեն:

(3-րդ կետը փոփ., լրաց. 12.10.23 N 1725-Ն)

4. Հայտը, որը ներկայացվում է հայտատուի անունից, լրացվում է հետևյալ կարգով՝

- 1) հայտի 2-րդ կետում նշվում են հայտատուի անհատականացման համար անհրաժեշտ հետևյալ տվյալները՝
 - ա. 2.1-ին կետում նշվում են հայտատուի անվանումը, եթե նա իրավաբանական անձ է, կամ անունը, ազգանունը, եթե նա ֆիզիկական անձ է: Ֆիզիկական անձի դեպքում անվան և ազգանվան հետ միասին կարող է նշվել նաև

հայրանունը: Իրավաբանական անձի դեպքում համապատասխան դաշտում նշվում է նաև նրա իրական գործունեության երկրի երկտառ ծածկագիրն ըստ ՄՄՀԿ ST-3 ստանդարտի՝ նշելով համապատասխան վանդակը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ քաղաքացիության կամ բնակության երկրի երկտառ ծածկագիրը՝ նշելով համապատասխան վանդակը,

բ. 2.2-րդ կետում նշվում է հայտատուի գտնվելու վայրը (բնակության վայրը), իսկ 2.3-րդ կետում նշվում են նրա հետ անմիջական կապ հաստատելու միջոցները՝ հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն, որոնց լրացումը պարտադիր է.

գ. 2.4-րդ կետի վանդակը նշվում է այն դեպքում, երբ հայտատուները մեկից ավելի են: Այս դեպքում հայտի 2.1-2.3-րդ կետերում նախատեսված՝ դրանց մասին տվյալները ներկայացվում են լրացուցիչ թերթերի վրա՝ նշելով դրանց թիվը, որոնք կցվում են հայտին.

2) 3-րդ կետը լրացվում է այն դեպքում, երբ հայտատուն ներկայացվում է ներկայացուցչի միջոցով: Որպես ներկայացուցիչ կարող են հանդես գալ գրասենյակում գրանցված ապրանքային նշանների հավատարմատարները, Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայր ունեցող ֆիզիկական անձինք և Հայաստանի Հանրապետությունում փաստացի գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք: Այս դեպքում նշվում է 3-րդ կետի վանդակը և՝

ա. 3.1-ին կետում նշվում են ներկայացուցչի անվանումը, եթե նա իրավաբանական անձ է, կամ անունը, ազգանունը, եթե նա ֆիզիկական անձ է: Ֆիզիկական անձի դեպքում անվան և ազգանվան հետ միասին կարող է նշվել նաև հայրանունը,

բ. 3.2-3.3-րդ կետերը լրացվում են սույն կետի 1-ին ենթակետին համանուն կարգով, իսկ ներկայացուցչի լիազորագիրը ներկայացնելու մասին տեղեկությունը տրվում է համապատասխան վանդակում նշում կատարելու միջոցով.

3) 4-րդ կետում նշվում են ներկայացված հայտով նամակագրություն վարելու և հայտի քննարկման ընթացքում հայտատուի կամ նրա ներկայացուցչի հետ (նշանակված լինելու դեպքում) անմիջական կապ հաստատելու համար անհրաժեշտ տվյալները՝ փոստային հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն (լրացվում է, եթե տարբերվում է 2.2-րդ և 2.3-րդ կետերում նշված տվյալներից, իսկ ներկայացուցչի միջոցով հայտ ներկայացնելու դեպքում՝ 3.2-րդ և 3.3-րդ կետերում նշված տվյալներից).

4) հայտի 5-րդ կետում տրվում են (գետեղվում կամ փակցվում է) հայտարկված ապրանքային նշանի վերաբերյալ պահանջները՝

ա. 5.1-ին կետում գետեղվում է հայտարկված ապրանքային նշանի պատկերը, որի չափերը չպետք է գերազանցեն 8 x 8 սանտիմետրը: Պատկերը պետք է ունենա ժամանակակից տեխնիկական միջոցներով անսահմանափակ վերարտադրման (բազմացման) հնարավորություն, որակյալ և հստակ գրաֆիկական կատարում և ներկայացվի որակյալ, հարթ և սպիտակ թղթի կամ այլ կրիչի վրա,

բ. պիտակը որպես ապրանքային նշան գրանցման ներկայացնելու դեպքում դրա պատկերը կարող է ներկայացվել իր բնական մեծությամբ: Եթե պիտակի չափը գերազանցում է 21 x 29.7 սանտիմետրը, ապա հայտարկվող ապրանքային նշանը ներկայացվում է փոքրացված չափերով,

գ. եթե ապրանքային նշանի չափերը գերազանցում են 8 x 8 սանտիմետրը, ապա նշվում է 5.1-ին կետի վանդակը, և ապրանքային նշանի պատկերը տրվում է առանձին (կցվում է),

դ. եթե որպես ապրանքային նշան ներկայացվում է հողգրաֆիկ նշան, ապա ներկայացվում է նշանի՝ հողգրամի փոփոխության հաջորդականությունը՝ պատկերի տեսքով,

ե. եթե որպես ապրանքային նշան ներկայացվում է ձայնային ապրանքային նշան, ապա որպես պատկեր տրվում է դրա նոտագրությունը (հնարավորության դեպքում), և հայտին կցվում են օպտիկական սկավառակի վրա գրառված, կամ հայտն գրասենյակի էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացվելու դեպքում ֆայլի տեսքով ձայնագրությունը՝ համապատասխան ֆորմատով (MP3) և համապատասխան պարամետրով (128 kbps (Bit rate), գրաֆիկը և նոտագրությունը (հնարավորության դեպքում),

զ. 5.2-րդ կետում տրվում է ապրանքային նշանի համառոտ նկարագրությունը՝ հայտարկվող ապրանքային նշանի էությունը հասկանալու համար, որն ապրանքային նշանի գրանցման դեպքում չի հրապարակվում,

է. նկարագրության մեջ տրվում է հայտարկվող ապրանքային նշանի բնութագիրը՝ բաղկացուցիչ տարրերի նկարագրությունը, ապրանքային նշանի և դրա առանձին մասերի իմաստային նշանակությունը: Եթե բառային ապրանքային նշանը կամ դրա մի մասը չունի իմաստային նշանակություն, ապա տրվում է դրա կազմման եղանակը, օրինակ, մի քանի բառերի առաջին վանկերը, հապավումները, մտացածին բառ և այլն,

ը. եթե բառային ապրանքային նշանը հայերենում հազվադեպ է գործածվում (օրինակ, հատուկ եզրույթ, պատմական անվանում, հնացած բառ), ապա տրվում է դրա իմաստի պարզաբանումը,

թ. եթե բառային ապրանքային նշանը ներկայացվում է ոչ հայերեն, ապա տրվում է դրա տառադարձությունը՝ հայոց լեզվի այբուբենի տառերով, և թարգմանությունը, եթե նշանն ունի բառային իմաստ,

ժ. եթե ապրանքային նշանը կամ դրա մի մասը պատկերային է, ապա տրվում է դրա մեջ մտնող բոլոր տարրերի նկարագրությունը և նշվում դրանց իմաստային նշանակությունը, եթե այդպիսին կա,

ժա. եթե պատկերային ապրանքային նշանը վերացական բնույթի է, ապա նշվում է, թե ինչ է այն խորհրդանշում,

ժբ. եթե որպես ապրանքային նշան ներկայացվում է ձայնային նշանը, ապա տրվում է ձայնի տեսակը (երաժշտական ստեղծագործություն կամ դրա մի մասը, որն է ծագում ունեցող աղմուկ և այլն),

ժգ. 5.3-րդ կետի վանդակը նշվում է, եթե ապրանքային նշանում օգտագործված նիշերը, մասնավորապես, տառերը

չունեն կատարման որոշակի առանձնահատկություններ և ներկայացված են ստանդարտ տեսքով,

ժդ. 5.4-րդ կետի վանդակը նշվում է, եթե ապրանքային նշանը ներկայացված է մեկ գույնով, և դրա պահպանությունը խնդրարկվում է որպես տարբերակիչ տարր,

ժե. 5.5-րդ կետի վանդակը նշվում է, եթե ներկայացված ապրանքային նշանը ծավալային է: Այս դեպքում 5.1-ին դաշտում տրվում է այդ նշանի ընդհանուր տեսքը, իսկ հայտին կից ներկայացվում են նաև հայտարկվող ծավալային նշանի մասին սպառիչ պատկերացում տվող բոլոր անհրաժեշտ պրոյեկցիաները,

ժգ. 5.6-5.9-րդ կետերի վանդակները նշվում են համապատասխան դեպքերում, երբ հայտարկված ապրանքային նշանը վերաբերում է տվյալ կետում նշվածին,

ժէ. 5.10-րդ կետի վանդակը նշվում է կոլեկտիվ նշանի հայտ ներկայացվելու դեպքում՝ կցելով օրենքի 33-րդ հոդվածի պահանջներին համապատասխան ձևակերպված կոլեկտիվ նշանի կանոնակարգը,

ժը. 5.11-րդ կետի վանդակը նշվում է գունավոր ապրանքային նշանների հայտարկման դեպքում՝ նշելով նաև այն գույները, որոնց համար խնդրարկվում է գրանցումը,

ժթ. 5.12-րդ կետի վանդակը նշվում է, եթե հայտարկված ապրանքային նշանը պարունակում է դիսկլամացիայի ենթակա տարրեր, այսինքն՝ տարրեր, որոնց իրավական պահպանությունից հայտատուն հրաժարվում է,

ի. 5.13-րդ կետի վանդակը նշվում է միայն օտարերկրյա հայտատուների դեպքում, եթե տվյալ ապրանքային նշանը գրանցված է ծագման՝ հայտի 2-րդ կետում նշված երկրում: Այս դեպքում հայտին կցվում է այդ գրանցման վկայագրի պատճենը,

իա. 5.14-րդ և 5.15-րդ կետերի վանդակները նշվում են՝ ելնելով հայտարկված ապրանքային նշանի բնույթից.

5) 6-րդ կետը լրացվում է այն դեպքում, երբ, օրենքի 42-րդ հոդվածի համաձայն, հայտարկված ապրանքային նշանի համար խնդրարկվում է առաջնություն: Այս դեպքում նշվում է վանդակը և նշվում է 6.1-ին կետի վանդակը, եթե օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն խնդրարկվում է միջազգային առաջնություն՝ առաջին հայտը ներկայացնելու թվականով, կամ 6.2-րդ կետի վանդակը, եթե օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն խնդրարկվում է ցուցահանդեսային առաջնություն՝ միջազգային ցուցահանդեսում տվյալ ապրանքային նշանի ներքո հայտարկված ապրանքների և (կամ) ծառայությունների առաջին ցուցադրման թվականով: Ընդ որում, նշվում է նաև 6.2-րդ կետի մյուս վանդակներից որևէ մեկը՝ ելնելով համապատասխան փաստաթուղթը ներկայացնելու հանգամանքից.

6) 6.1-ին կետի վանդակը նշելու դեպքում՝

ա. 6.3-րդ կետում տրվում է առաջին հայտի համարը, 6.4-րդ կետում՝ առաջին հայտը ներկայացնելու թվականը, իսկ 6.5-րդ կետում՝ առաջին հայտը ներկայացնելու երկրի երկտառ ծածկագիրն ըստ ՄՄՀԿ ST 3 ստանդարտի, կամ, եթե առաջնությունը խնդրարկվում է որևէ տարածաշրջանային կազմակերպություն ներկայացրած հայտը ներկայացնելու թվականով, նշվում է տվյալ կազմակերպության երկտառ ծածկագիրը, օրինակ, Ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների Բենիլյուքսի կազմակերպություն (BX), Եվրամիության մտավոր սեփականության գրասենյակ (EM),

բ. 6.6-6.9-րդ կետերի վանդակները նշվում են՝ ելնելով համապատասխան փաստաթուղթը ներկայացնելու հանգամանքներից, ընդ որում, 6.7-րդ կետի վանդակը նշելու դեպքում հայտին կցվում է առաջին հայտի պատճենը, որը պետք է վավերացված լինի այն երկրի՝ ապրանքային նշանների գրանցում իրականացնող ազգային կազմակերպության կամ միջազգային կազմակերպության կողմից, որին (որտեղ) ներկայացվել է առաջին հայտը, և 6.9-րդ կետում նշված առաջին հայտի թարգմանությունը,

գ. 6.10-րդ կետի վանդակը նշվում է, եթե խնդրարկվում է մեկից ավելի առաջնություններ, ինչը պայմանավորված է տարբեր ապրանքների և (կամ) ծառայությունների համար տարբեր առաջնությունների խնդրարկմամբ: Այս դեպքում 6.3-6.9-րդ կետերում նշվող տվյալները ներկայացվում են լրացուցիչ թերթերի վրա՝ նշելով դրանց թիվը, որոնք կցվում են հայտին.

7) 7-րդ կետը լրացվում է հայտում նշված աղյուսակի ձևով, որտեղ առաջին պունակում տրվում են այն ապրանքների և (կամ) ծառայությունների ԱՕՄԴ-ի դասերը՝ աճման կարգով, իսկ երկրորդ պունակում՝ առաջին պունակում տրված ԱՕՄԴ-ի յուրաքանչյուր դասին համապատասխան կոնկրետ այն ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը, որոնց համար խնդրարկվում է գրանցումը: Ապրանքները և ծառայությունները տրվում են դրանց նույնականացման հնարավորությունն ապահովող ճշգրիտ եզրույթներով: Այն դեպքում, երբ ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկն ամբողջությամբ չի տեղավորվում հայտի 7-րդ կետում նախատեսված դաշտում, նշվում է վանդակը, և ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկի շարունակությունը տրվում է լրացուցիչ թերթի վրա, որը կցվում է հայտին.

8) հայտի 8-րդ կետում լրացվում են դրա ստորագրմանը վերաբերող տվյալները՝

ա. 8.1-ին կետում դրվում է հայտն ստորագրող ֆիզիկական անձի ստորագրությունը՝ նշելով նրա անունը (ցանկության դեպքում՝ նաև հայրանունը) կամ անվան (հայրանվան) սկզբնատառերը, ազգանունը և պաշտոնը,

բ. 8.2-րդ կետում նշվում է ստորագրման թվականը,

գ. 8.3-րդ կետում համապատասխան վանդակը նշելու միջոցով նշվում է ստորագրող անձի ու լինելը.

9) հայտի 9-րդ կետում նշվում են տվյալներ վճարված պետական տուրքի մասին՝

ա. լրացվում է վճարված պետական տուրքի չափը՝ թվերով: Վանդակը նշվում է, և հայտին կցվում է վճարման անդորրագիրը, քանի դեռ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով այլ բան նախատեսված չէ: Այսինքն՝ նշված օրենքով պետական տուրքի վճարման վերահսկման այլ մեխանիզմի (վճարման անդորրագիր

ներկայացնելը բացառող) ամրագրման դեպքում 9-րդ կետի վանդակը չպետք է նշվի, և վճարման անդորրագիրը չպետք է կցվի,

բ. 9.1-ին կետում նշվում է վճարման ձևը, օրինակ, բանկային անկանխիկ փոխանցում.

10) 10-րդ կետի վանդակը նշվում է այն դեպքում, երբ հայտի 2.4-րդ, 6.2-րդ, 6.10-րդ և 7-րդ կետերի համաձայն հայտին կից ներկայացվում են լրացուցիչ թերթեր և (կամ) փաստաթղթեր, որոնք նշված չեն հայտի նախորդ կետերում, կետերում չնշված այլ փաստաթղթեր՝ լրացնելով դրանց ընդհանուր թիվը:

(4-րդ կետը փոփ., լրաց. 12.10.23 N 1725-Ն)

III. ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5. Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հայտը գրասենյակ է ներկայացնում հայտատուն՝ անմիջականորեն կամ իր ներկայացուցչի միջոցով՝ նրան տրված լիազորագրի հիման վրա: Հայտը մի քանի անձանց կողմից (մի քանի հայտատուներ) ներկայացվելու դեպքում նրանցից յուրաքանչյուրը կարող է հանդես գալ անձամբ կամ իր ներկայացուցչի միջոցով:

(5-րդ կետը փոփ., լրաց. 12.10.23 N 1725-Ն)

6. Օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում մշտական բնակության վայր չունեցող ֆիզիկական անձինք և Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային կամ արդյունաբերական հաստատություն չունեցող օտարերկրյա իրավաբանական անձինք հայտը ներկայացնում և գրասենյակում դրա քննարկման ընթացակարգով նախատեսված գործերը վարում են ապրանքային նշանների հավատարմատարների կամ այլ ներկայացուցչի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում մշտական բնակության վայր ունեցող ֆիզիկական կամ գործող առևտրային կամ արդյունաբերական հաստատություն ունեցող իրավաբանական անձի միջոցով, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

(6-րդ կետը փոփ., լրաց. 12.10.23 N 1725-Ն)

7. Սույն կարգի 6-րդ կետով սահմանված պահանջները կիրառվում են նաև այն դեպքում, երբ հայտատուները մի քանիսն են, և նշված անձինք հայտը ներկայացնում են Հայաստանի Հանրապետության ռեզիդենտների հետ համատեղ:

8. Ապրանքային նշանի հայտը գրասենյակ է ներկայացվում գրավոր՝ տպագիր ձևով, մեկ օրինակից, կամ գրասենյակի էլեկտրոնային համակարգի միջոցով: Օրենքի 40-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն հայտը ներկայացվում է հայերեն: Հայտին կցվող փաստաթղթերը կարող են ներկայացվել այլ լեզվով: Այդ դեպքում Հայաստանի Հանրապետության հայտատուները պարտավոր են դրանց հայերեն թարգմանությունը ներկայացնել հայտի հետ միասին, իսկ օտարերկրյա հայտատուները՝ հայտը ներկայացնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում: Այն դեպքում, երբ հայտի փաստաթղթերը ներկայացվում են ներկայացուցչի միջոցով, դրանց հայերեն թարգմանությունը կարող է ապահովվել և հաստատվել ներկայացուցչի կողմից:

(8-րդ կետը փոփ., լրաց. 12.10.23 N 1725-Ն)

9. Հայտն գրասենյակի էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացնելու համար անհրաժեշտ է այցելել գրասենյակի www.aipo.am կայքը և հայտերի էլեկտրոնային ընդունման համակարգի միջոցով ձևակերպել ու ներկայացնել հայտը՝ առաջնորդվելով համակարգում գետեղված համապատասխան ցուցումներով: Հայտի ձևակերպման նկատմամբ կիրառվում են սույն կարգի 4-րդ կետով սահմանված պահանջները:

(9-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

10. Հայտով գործերը վարելու և հայտի քննարկման ընթացքում իր շահերը ներկայացնելու համար հայտատուն կարող է նշանակել ներկայացուցիչ՝ նրան տալով պատշաճ ձևակերպված լիազորագիր:

11. Հաշվի առնելով սույն կարգի 6-րդ կետի պահանջները՝ հայտատուն կարող է ներկայացուցիչ նշանակել հայտը ներկայացնելիս կամ դրա քննարկման ցանկացած փուլում, իսկ լիազորագիրը ներկայացնել՝ հայտին կից կամ հայտի քննարկման ընթացքում:

12. Մինչև լիազորագիր ներկայացնելը ներկայացուցչի կողմից կատարվող գործողությունները համարվում են անվավեր, և դրանք հայտի քննարկման ընթացքում հաշվի չեն առնվում:

13. Ներկայացուցչի ցանկացած գործողություն՝ նրան տրված լիազորությունների շրջանակներում, կամ նրա նկատմամբ գրասենյակի ցանկացած գործողություն ունի նույն հետևանքները, ինչ հայտատուի գործողությունը կամ հայտատուի նկատմամբ կատարված գործողությունը:

(13-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

14. Ներկայացուցչությունը վավերական է մինչև լիազորագրում նշված լիազորությունների սպառումը կամ դրա գործողության ժամկետի ավարտը:

15. Լիազորագրով տրված լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են հայտատուի կամ նրա իրավահաջորդի կողմից գրասենյակ ներկայացված դիմումի համաձայն (լիազորագրի վերացում):

(15-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

IV. ՀԱՅՏԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

16. Գրասենյակը որպես հայտ ներկայացված նյութերը քննարկում է դրանց ստանալու օրվանից սկսած՝ օրենքի և

սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան:

(16-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

17. Ներկայացված նյութերը որպես հայտ քննարկելու և այն ներկայացնելու թվականը սահմանելու նպատակով՝ դրանք ստանալու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրասենյակն ստուգում է դրանց համապատասխանությունն օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին:

(17-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

18. Եթե ստուգման արդյունքում պարզվում է, որ ներկայացված նյութերը բավարարում են ստորև նշված հետևյալ պայմանները՝

1) ներկայացված նյութերից բխում է, որ խնդրարկվում է ապրանքային նշանի գրանցում, այսինքն՝ ուղղակիորեն նշված է դրա մասին, կամ ներկայացված փաստաթղթերից որևէ մեկի բովանդակությունը հիմք է տալիս ենթադրելու, որ փաստաթղթերը ներկայացվել են ապրանքային նշան գրանցելու նպատակով.

2) նշված են հայտատուի նույնականացման բավարար տվյալներ՝ անունը կամ անվան առաջին տառը, ազգանունը, կամ իրավաբանական անձի անվանումը, կամ ֆիրմային անվանման տարբերակող անունը.

3) նշված են հայտատուի կամ նրա ներկայացուցչի հետ (ներկայացուցչի առկայության դեպքում) կապ հաստատելու համար անհրաժեշտ տվյալներ, մասնավորապես, գտնվելու վայրը (բնակության վայրը) կամ նամակագրության հասցեն, հեռախոսահամարը կամ էլեկտրոնային փոստի հասցեն.

4) գրանցման ներկայացված նիշի հստակ պատկերը՝ վերարտադրելու հնարավորությամբ.

5) այն ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը, որոնց համար խնդրարկվում է ապրանքային նշանի գրանցումը, կամ առնվազն մեկ ապրանքի կամ ծառայության անվանումը.

6) օրենքով սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը, նույնիսկ եթե վճարված գումարի չափը չի համապատասխանում օրենքով սահմանված դրույքաչափին, սպա գրասենյակը սահմանում է հայտը ներկայացնելու թվականը:

(18-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

19. Եթե ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն կարգի 18-րդ կետով սահմանված պահանջներին, սպա գրասենյակը դրանց ստացման օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր ծանուցում է հայտատուին՝ չհամապատասխանող փաստաթղթերը երկամսյա ժամկետում այդ պահանջներին համապատասխանեցնելու վերաբերյալ առաջարկությամբ:

(19-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

20. Նշված երկամսյա ժամկետում՝ սահմանված պահանջներին համապատասխանեցված փաստաթղթերն ստանալու դեպքում օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն գրասենյակը հայտը ներկայացնելու թվականը սահմանում է այդ փաստաթղթերի ստացման թվականով, կամ դրանցից վերջինի ստացման թվականով, եթե դրանք ներկայացվել են ոչ միաժամանակ:

(20-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

21. Սույն կարգի 19-րդ կետի համաձայն պահանջված փաստաթղթերը չներկայացվելու (գրասենյակի ծանուցումն անպատասխան թողնելու կամ պահանջված ոչ բոլոր նյութերը ներկայացնելու) դեպքում, օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, գրասենյակը հայտը ներկայացնելու թվական չի սահմանում, հայտը համարում է չներկայացված, և ներկայացված փաստաթղթերը վերադարձնում է հայտատուին:

(21-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

22. Եթե ներկայացված փաստաթղթերում բացակայում են սույն կարգի 18-րդ կետում նշված՝ հայտատուի կամ նրա ներկայացուցչի հետ կապ հաստատելու համար անհրաժեշտ տվյալները, սպա գրասենյակը հայտը ներկայացնելու թվական չի սահմանում և հայտը համարում է չներկայացված:

(22-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

23. Հայտը ներկայացնելու թվականը սահմանելուց անմիջապես հետո գրասենյակը գրանցում է հայտը՝ դրան տալով հերթական համար, և հայտում ներկայացված տեղեկությունները մուտքագրում է ապրանքային նշանների հայտերի հիմնապաշար:

(23-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

24. Օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հայտի նախնական փորձաքննությունն անցկացվում է հայտը ներկայացնելու թվականը սահմանելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում: Նախնական փորձաքննության ընթացքում գրասենյակն ստուգում է հայտի, դրան կցված փաստաթղթերի և դրանք ներկայացնելու պայմանների համապատասխանությունն օրենքով և սույն կարգով սահմանված պահանջներին:

(24-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

25. Նախնական փորձաքննության ընթացքում գրասենյակն առաջին հերթին ստուգում է սահմանված ձևով ներկայացված հայտի և դրան կից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը: Այնուհետև ստուգվում է դրանց և դրանք ներկայացնելու համապատասխանությունն օրենքի 40-րդ հոդվածով և սույն կարգի 4-9-րդ կետերով սահմանված պահանջներին, մասնավորապես, ստուգվում են՝

1) հայտի 2-4-րդ կետերի լրացման համապատասխանությունը սույն կարգի 4-րդ կետով սահմանված պահանջներին.

2) հայտի 5.2-րդ կետի լրացման համապատասխանությունը, հայտի 5.1-ին, 5.3-5.9-րդ, 5.11-5.12-րդ կետերի վանդակներում նշումների առկայությունը և գրանցման ներկայացված ապրանքային նշանի համապատասխանությունն

այդ նշումներին, ինչպես նաև 5.10-րդ, 5.13-5.15-րդ կետերի վանդակներում նշումների և այդ նշումներին համապատասխան հայտին կցված փաստաթղթերի առկայությունը.

3) հայտի 6-րդ կետի վանդակը նշելու դեպքում՝ 6.1-6.10-րդ կետերի նշումների և համապատասխան սովյալների կամ փաստաթղթերի առկայությունը.

4) հայտի 7-րդ կետում ներկայացված ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկի համապատասխանությունն ԱՕՄԴ-ի դասերին և ապրանքը կամ ծառայությունը նշելու համար օգտագործված եզրույթի միջոցով ԱՕՄԴ-ի այս կամ այն դասի որոշակի ապրանքի կամ ծառայության հետ միանշանակ նույնականացման ապահովումը.

5) հայտատուի կողմից ապրանքների խմբավորման ճշտությունը՝ ըստ ԱՕՄԴ-ի դասերի.

6) հայտի 8-10-րդ կետերի լրացման ճշտությունը և դրանց համապատասխան փաստաթղթերի առկայությունը.

7) վճարված պետական տուրքի համապատասխանությունը «Պետական տուրքի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքով սահմանված չափին:

(25-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

26. Եթե նախնական փորձաքննության արդյունքում պարզվում է, որ հայտը չի համապատասխանում սույն կարգի 25-րդ կետում նշված պահանջներին, և (կամ) բացակայում են դրան կից ներկայացվող որոշ փաստաթղթեր, և (կամ) դրանք չեն համապատասխանում սահմանված պահանջներին, այսինքն՝ լրացված կամ տրված են ոչ լիարժեք կամ թերի են, ապա գրասենյակը հայտատուին երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է նշված անհամապատասխանությունները երկամսյա ժամկետում վերացնելու անհրաժեշտության, ինչպես նաև հայտի համարի և այն ներկայացնելու թվականի մասին:

(26-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

27. Սույն կարգի 26-րդ կետով նախատեսված ծանուցման համաձայն անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չվերացվելու դեպքում գրասենյակը որոշում է ընդունում հայտը հետ կանչված համարելու վերաբերյալ և դրա մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է հայտատուին:

(27-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

28. Եթե նախնական փորձաքննության արդյունքում պարզվում է, որ հայտը համապատասխանում է սահմանված պահանջներին, կամ սույն կարգի 26-րդ կետում նշված երկամսյա ժամկետում վերացվել են ծանուցման մեջ նշված բոլոր անհամապատասխանությունները, ապա գրասենյակը որոշում է ընդունում հայտը հրապարակելու և ըստ էության փորձաքննություն անցկացնելու վերաբերյալ: Գրասենյակը նշված որոշման մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է հայտատուին՝ հայտնելով նաև հայտի համարը և այն ներկայացնելու թվականը:

(28-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

29. Հայտատուի կողմից ներկայացված ապրանքների և (կամ) ծառայությունների (այսուհետ՝ ապրանքներ) ցանկի ճշգրտման անհրաժեշտության դեպքում (եթե հայտում տրված ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը շատ ընդհանրացված է և հնարավորություն չի տալիս միանշանակ որոշելու ապրանքների դասերը) նախնական փորձաքննության արդյունքում հայտատուից պահանջվում է երկամսյա ժամկետում համապատասխան ճշգրտումներ կատարել այդ ցանկում կամ, անհրաժեշտության դեպքում, պարզել ապրանքների կիրառման բնագավառը կամ պահանջել այն նյութերի ցանկը, որոնցից դրանք պատրաստված են: Օրինակ, շատ ընդհանրացված «կարի արտադրանքներ» անվանումը ներառում է կարի արտադրանքի որոշակի տեսակներ, որոնք վերաբերում են ԱՕՄԴ-ի տարբեր դասերի, ինչպես, օրինակ, հագուստ՝ դաս 25, սպիտակեղեն (անկողնային)՝ դաս 24, կտորից պարկեր՝ դաս 22, տիկնիկների հագուստ՝ դաս 28:

(29-րդ կետը լրաց. 12.10.23 N 1725-Ն)

30. Սույն կարգի 29-րդ կետով պահանջվող համապատասխան ճշգրտումները հայտատուի կողմից երկամսյա ժամկետում չկատարվելու դեպքում գրասենյակն ընդունում է որոշում սովյալ ապրանքների մասով հայտը հետ կանչված համարելու մասին, որը երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է հայտատուին:

(30-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

31. Եթե նախնական փորձաքննության արդյունքում պարզվում է, որ հայտատուի կողմից նշված ԱՕՄԴ-ի դասերի իրական թիվն ավելին է ԱՕՄԴ-ի դասերի այն թվից, որոնց համար վճարված է փորձաքննություն անցկացնելու համար պետական տուրքը, ապա հայտատուին երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է ծանուցագիր լրացուցիչ պետական տուրք վճարելու կամ իր հավակնությունների սահմանափակման (ԱՕՄԴ-ի այն դասերի թվի կրճատման, որոնցով խնդրարկվում է նշանի գրանցումը) անհրաժեշտության մասին:

(31-րդ կետը լրաց. 12.10.23 N 1725-Ն)

32. Լրացուցիչ պետական տուրքի վճարումից կամ իր հավակնությունների սահմանափակումից հայտատուի հրաժարվելու կամ ծանուցագիրն անպատասխան թողնելու դեպքում փորձաքննությունն անցկացվում է հայտում առաջինը նշված ԱՕՄԴ-ի այն քանակի դասերի ապրանքների և (կամ) ծառայությունների նկատմամբ, որոնց համար վճարված է պետական տուրքը:

33. Եթե նախնական փորձաքննության արդյունքում պարզվում է, որ հայտատուի կողմից հայտում նշված ապրանքները ճիշտ դասակարգված չեն՝ ըստ ԱՕՄԴ-ի դասերի, և դրանց ճիշտ դասակարգման դեպքում ԱՕՄԴ-ի դասերի թիվն ավելանում է հայտում նշվածներից, որոնց համար վճարված է պետական տուրք, ապա հայտատուին երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է ծանուցագիր երկամսյա ժամկետում լրացուցիչ պետական տուրք վճարելու և վճարման անորոշազրկ ներկայացնելու կամ ապրանքների ցանկի սահմանափակման անհրաժեշտության

մասին:

(33-րդ կետը լրաց. 12.10.23 N 1725-Ն)

34. Լրացուցիչ պետական տուրքի վճարումից կամ ապրանքների ցանկի սահմանափակումից հայտատուի հրաժարվելու կամ ծանուցագիրն անպատասխան թողնելու դեպքում՝ փորձաքննության նպատակներով ապրանքների և (կամ) ծառայությունների դասերը սահմանափակվում են հայտում առաջինը նշված այն թվով, որի համար բավարարում է վճարված պետական տուրքը: Օրինակ, եթե հայտում նշված ապրանքները ներկայացված են որպես 2-րդ և 25-րդ դասի ապրանքներ, և պետական տուրքը վճարված է մեկ լրացուցիչ դասի համար, իսկ գրասենյակի կողմից ճիշտ դասակարգման արդյունքում 2-րդ դասում նշված տեխնիկական յուղերը դասակարգվել են 4-րդ դասում, ինչի հետևանքով հայտում նշված բոլոր ապրանքները դասակարգվում են 2-րդ, 4-րդ և 25-րդ դասերում, ապա տվյալ դեպքում փորձաքննությունը կանցկացվի 2-րդ և 4-րդ դասերի ապրանքների նկատմամբ, կամ, եթե հայտում նշված ապրանքները ներկայացված են որպես 2-րդ դասի ապրանքներ, և մեկ լրացուցիչ դասի համար պետական տուրքը վճարված չէ, իսկ փորձաքննության կողմից ճիշտ դասակարգման արդյունքում 2-րդ դասում նշված առաջին ապրանքը՝ տեխնիկական յուղերը, դասակարգվել են 4-րդ դասում, ապա ապրանքային նշանի փորձաքննությունը կանցկացվի 2-րդ դասի ապրանքների նկատմամբ:

(34-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

35. Եթե պարզվում է, որ հայտին կից ներկայացվել է պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը, ապա գանձապետական առցանց կառավարման համակարգի կամ պետական վճարումների գրասենյակի էլեկտրոնային համակարգի միջոցով գրասենյակը հավաստիանում է պետական տուրքի վճարման մասին: Եթե օրենքով սահմանված պետական տուրքի վճարման մասին տվյալ չի հայտնաբերվում համապատասխան համակարգում, ապա հայտատուին երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է ծանուցում՝ անդորրագրի բնօրինակը կամ տվյալ վճարման իսկությանը վերաբերող ապացույցները երկամսյա ժամկետում ներկայացնելու վերաբերյալ առաջարկությամբ:

(35-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

36. Երկու ամսվա ընթացքում պետական տուրքի վճարման անդորրագրի բնօրինակը չներկայացվելու կամ տվյալ վճարման իսկության մասին համապատասխան համակարգի միջոցով չհավաստիանալու դեպքում հայտը համարվում է հետ կանչված, ինչի մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցվում է հայտատուն:

37. Եթե պետական տուրքի վճարման անդորրագիրը ներկայացվել է, սակայն վճարված գումարը չի համապատասխանում սահմանված պետական տուրքի չափին, ապա հայտատուին երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է ծանուցում՝ պակաս վճարված գումարը ծանուցումն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում վճարելու և դրա անդորրագիրը ներկայացնելու վերաբերյալ առաջարկությամբ:

38. Նշված գումարի վճարման անդորրագիրը գրասենյակ է ներկայացվում մինչև նշված երկամսյա ժամկետի ավարտից 10 օրը լրանալը, եթե այն վճարվել է երկամսյա ժամկետում: Այս ժամկետում վճարման անդորրագիրը չներկայացվելու դեպքում հայտը համարվում է հետ կանչված, ինչի մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցվում է հայտատուն:

(38-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

39. Եթե ներկայացված անդորրագրով հաստատվում է հայտ ներկայացնելու և ԱՕՄԴ-ի մեկ կամ մի քանի դասի ապրանքների և (կամ) ծառայությունների նկատմամբ փորձաքննությունն անցկացնելու համար սահմանված չափով պետական տուրքի վճարումը, սակայն դա չի համապատասխանում ԱՕՄԴ-ի դասերի թվին, որոնցով խնդրարկվում է նշանի գրանցումը, ապա հայտատուին առաջարկվում է համապատասխան ծանուցումն ստանալու օրվանից երկու ամսվա ընթացքում ներկայացնել դասերի թվին համապատասխան լրացուցիչ վճարված պետական տուրքի անդորրագիրը կամ ճշգրտել ԱՕՄԴ-ի դասերի թիվը, որոնցով պետք է կատարվի նշանի գրանցումը:

40. Սույն կարգի 39-րդ կետում նշված ժամկետում պետական տուրքի վճարման անդորրագիրը չներկայացվելու դեպքում հայտատուն երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցվում է, որ հայտի հետագա քննարկումը կիրականացվի նրա կողմից ճշգրտված դասերին համապատասխան, իսկ այդպիսի ճշգրտման բացակայության դեպքում՝ հայտի սկզբնական նյութերում առաջինը նշված այն դասերից ելնելով, որոնց թիվը համապատասխանում է վճարված պետական տուրքի գումարին:

41. Եթե պետական տուրքը վճարվել է գեղչով, ապա ստուգվում է նաև աշխատողների թվի մասին տեղեկանքի առկայությունը, որում նշվում է տվյալ իրավաբանական անձի աշխատողների թիվը՝ պետական տուրքի վճարման օրվա դրությամբ: Տեղեկանքն ստորագրում է տվյալ իրավաբանական անձի ղեկավարը կամ այդպիսի իրավասություն ունեցող այլ անձ:

42. Նշված տեղեկանքի բացակայության դեպքում հայտատուին երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է ծանուցում՝ երկամսյա ժամկետում այն ներկայացնելու կամ պետական տուրքի համապատասխան լրավճարում կատարելու և դրա անդորրագիրը ներկայացնելու կամ վճարված գումարին համապատասխան նրա հավակնությունների ծավալի սահմանափակման վերաբերյալ առաջարկությամբ, եթե դա հնարավոր է:

43. Երկու ամսվա ընթացքում նշված տեղեկանքը կամ պետական տուրքի լրավճարման անդորրագիրը չներկայացվելու դեպքում հայտատուն երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցվում է, որ հայտի հետագա քննարկումը կիրականացվի նրա կողմից ճշգրտված ԱՕՄԴ-ի դասերին համապատասխան, իսկ այդպիսի ճշգրտման բացակայության դեպքում՝ հայտի սկզբնական նյութերում առաջինը նշված այն դասերից ելնելով, որոնց թիվը համապատասխանում է վճարված պետական տուրքի գումարին, իսկ դրա անհնարիության դեպքում՝ հայտը կհամարվի

հետ կանչված:

44. Եթե հայտում նշված է 6-րդ կետի վանդակը, այսինքն՝ խնդրարկվում է առաջնություն, ապա գրասենյակը հայտի նախնական փորձաքննության փուլում ստուգում է նաև հայտի 6.2-6.6-րդ և 6.8-րդ (6-6.9-րդ) կետերում նշված տվյալների և նյութերի առկայությունը: Եթե ստուգման արդյունքում պարզվում է, որ ներկայացված են նաև 6.2-6.6-րդ և 6.8-րդ կետերում կամ 6.2-րդ կետում նշված նյութերը և տվյալները, ապա գրասենյակը հայտարկված ապրանքային նշանի առաջնությունը սահմանում է համապատասխանաբար՝ առաջին հայտը ներկայացնելու թվականով կամ ցուցահանդեսում ցուցանմուշի առաջին ցուցադրման թվականով՝ առաջնության համապատասխան տվյալները ներառելով սույն կարգի 28-րդ կետում նշված հայտը հրապարակելու և ըստ էության փորձաքննություն անցկացնելու մասին որոշման մեջ:

(44-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

45. Եթե ստուգման արդյունքում պարզվում է, որ հայտի 6-6.10-րդ կետերից որևէ մեկի կամ մի քանիսի վանդակը նշված է, սակայն դրան համապատասխան հայտին կցվող փաստաթղթերը կամ տվյալները բացակայում են, ապա գրասենյակը երեք աշխատանքային օրվա ընթացքում հայտատուին ծանուցում է երկամյա ժամկետում բացակայող տվյալները կամ փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության, ինչպես նաև հայտի համարի և այն ներկայացնելու թվականի մասին:

(45-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

46. Սույն կարգի 45-րդ կետով նախատեսված ծանուցման համաձայն անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չվերացվելու դեպքում գրասենյակն առաջնության իրավունքից օգտվելու մասին դիմումը համարում է չներկայացված:

(46-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

47. Սույն կարգի 26-րդ, 29-րդ, 31-րդ, 33-րդ, 35-րդ, 37-րդ, 39-րդ, 45-րդ կետերի համաձայն հայտի նախնական փորձաքննության ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունների և անճշտությունների վերացման վերաբերյալ հայտատուին ներկայացված առաջարկությունները ներառվում են մեկ ծանուցման մեջ:

48. Հայտի նախնական փորձաքննության անցկացման ժամկետի ընթացքը կասեցվում է համապատասխան ծանուցումը հայտատուին, իսկ համապատասխան դեպքերում՝ նրա ներկայացուցչին ուղարկելու օրվանից՝ մինչև դրա պատասխանի ստացման թվականը:

49. Հայտի քննարկման ընթացքում գրասենյակի հետ գրագրությունը կատարում է հայտատուն կամ նրա ներկայացուցիչը, յուրաքանչյուր հայտով՝ առանձին:

(49-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

50. Հայտ ներկայացնելուց հետո գրասենյակ ուղարկվող նյութերում, որոնք ստորագրում է հայտատուն կամ նրա ներկայացուցիչը, նշվում է հայտի համարը:

(50-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

51. Եթե ներկայացված նյութերում նշված չէ հայտի համարը, և այլ կերպ հնարավոր չէ այն պարզել, ապա դրանք վերադարձվում են առանց քննարկման:

52. Հայտի քննարկման ընթացքում գրասենյակ ուղարկվող նյութերը ներկայացվում են օրենքով սահմանված ժամկետում: Եթե ժամկետն արտահայտված է «ընթացքում...» բառով, իսկ ժամկետի վերջին օրը ոչ աշխատանքային է, ապա դրա ավարտը համարվում է ոչ աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրը: Եթե ժամկետի ավարտը վերջանում է այնպիսի ամսում, որում չկա համապատասխան ամսաթիվը, ապա ժամկետը վերջանում է այդ ամսվա վերջին օրը:

(52-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

53. Գրասենյակի գրությանը (ծանուցմանը, որոշմանը և այլն) համապատասխան անհրաժեշտ նյութերը ներկայացնելու ժամկետը հաշվարկվում է հայտատուի կամ համապատասխան դեպքում՝ նրա ներկայացուցչի կողմից նյութերի ստացման օրվանից:

(53-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

54. Եթե գրասենյակի կողմից պատվիրված փոստային առաքմամբ ուղարկված նյութերը հայտատուին կամ համապատասխան դեպքում՝ նրա ներկայացուցչին չեն հասնում նամակագրության հասցեի փոփոխության պատճառով, ինչի մասին հայտատուն կամ համապատասխան դեպքում՝ նրա ներկայացուցիչը տեղյակ չի պահել գրասենյակին, ապա նշված նյութերը պատվիրված փոստային առաքմամբ կամ օրենքի 6.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կապի այլ միջոցներով ուղարկվում են հայտատուին կամ համապատասխան դեպքում՝ նրա ներկայացուցչին՝ գտնվելու (բնակության) վայրով: Եթե նշված նյութերը հայտատուին կամ համապատասխան դեպքում՝ նրա ներկայացուցչին չեն հասնում նրա գտնվելու (բնակության) վայրի փոփոխության պատճառով, ինչի մասին գրասենյակը չի տեղեկացվել, ապա տվյալ հայտով գործավարությունը դադարեցվում է, և հայտը համարվում է հետ կանչված:

(54-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

55. Գրասենյակը հայտի քննարկման հետ կապված գործավարությունն իրականացնում է հայերեն: Հայտատուի կողմից այլ լեզվով ներկայացված նյութին պետք է կցվի դրա հայերեն թարգմանությունը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում նոտարական կարգով հաստատված:

(55-րդ կետը փոփ., լրաց. 12.10.23 N 1725-Ն)

56. Օրենքի 43-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն հայտի քննարկման ցանկացած փուլում, օրենքով սահմանված

պետական տուրքի վճարման պայմանով, հայտատուն կարող է ներկայացնել դիմում հայտում փոփոխություններ կատարելու մասին, որոնք պայմանավորված են հայտատուի անունը, ազգանունը (անվանումը) և (կամ) գտնվելու (բնակության) վայրը ճշգրտելու, ձևակերպումները հստակեցնելու կամ վրիպակները վերացնելու անհրաժեշտությամբ, պայմանով, որ դրանք էապես չեն փոխում հայտարկված ապրանքային նշանի պատկերը կամ չեն ընդլայնում հայտում նշված ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը:

(56-րդ կետը լրաց. 12.10.23 N 1725-Ն)

57. Օրենքի 52-րդ հոդվածի համաձայն հայտատուն գրասենյակին պետք է տեղեկացնի՝

- 1) իր անվան, ազգանվան կամ անվանման կամ գտնվելու վայրի (հասցեի) փոփոխության մասին.
- 2) իր ներկայացուցչի և (կամ) նրա գտնվելու վայրի (հասցեի) փոփոխության մասին.
- 3) հայտարկված կամ գրանցված ապրանքային նշանի առանձին ոչ էական տարրերի փոփոխության մասին, եթե, գրասենյակի կարծիքով, դրանք չեն ազդի ապրանքային նշանի տարբերակիչ հատկության վրա.
- 4) ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկի կրճատման մասին.
- 5) հայտատուի փոփոխության մասին.
- 6) տեխնիկական վրիպակներն ուղղելու մասին:

(57-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

58. Սույն կարգի 57-րդ կետով նախատեսված փոփոխությունները կատարվում են հայտատուի կամ նրա ներկայացուցչի կողմից ներկայացված դիմումի հիման վրա՝ համաձայն սույն կարգի N 2 ձևի: Դիմումը լրացնելու համար կիրառվում են հայտի համապատասխան անվանումներով կետերը լրացնելու համար սույն կարգի 4-րդ կետում նշված կանոնները՝ բացառությամբ 2.1-ին կետի, որտեղ աճման կարգով նշվում են այն հայտերի համարները, որոնց մեջ կատարվում են փոփոխությունները (2.2-րդ կետը նշվում է, եթե հայտերի համարները տրվում են առանձին թերթերի վրա), և 6.1-6.2-րդ կետերի, որտեղ 6.1-ին կետում նշվում է փոփոխվող տվյալը (օրինակ, «հայտատուի անվանումը», իսկ 6.2-րդ կետում տրվում է համապատասխան տվյալը՝ փոփոխված, օրինակ, «Մերկուրի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն):

59. Ներկայացված դիմումը քննարկվում է այն ստանալու օրվանից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Եթե պարզվում է, որ այն ներկայացվել է առանց պետական տուրքի վճարման անդորրագրի, բացառությամբ սույն կարգի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դեպքերի, ապա քննարկման չի ընդունվում, ինչի մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցվում է հայտատուն: Եթե վճարված գումարը չի համապատասխանում սահմանված պետական տուրքի չափին, ապա հայտատուին երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է ծանուցում՝ պակաս վճարված գումարը երկամսյա ժամկետում վճարելու և վճարման անդորրագիրը ներկայացնելու վերաբերյալ առաջարկությամբ: Այս դեպքում փորձաքննության ժամկետի ընթացքը դադարեցվում է մինչև ծանուցման պատասխանի ստացումը: Նշված ժամկետում այդ գումարը չվճարվելու և անդորրագիրը գրասենյակ չներկայացվելու դեպքում դիմումը համարվում է չներկայացված:

(59-րդ կետը փոփ., լրաց. 12.10.23 N 1725-Ն)

60. Դիմումը քննարկման ընդունվելու դեպքում գրասենյակը հաշվի է առնում առաջարկվող փոփոխությունները և դրանց հիման վրա համապատասխան գրառումներ կատարելու միջոցով փոփոխություններ է կատարում հայտերի հիմնապաշարում, եթե այդ փոփոխությունները համապատասխանում են օրենքի 43-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված պահանջներին և, օրենքի 52-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն, լրացուցիչ ապացույցներ պահանջելու հիմքեր չկան:

(60-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

61. Եթե օրենքի 52-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն դիմումում նշված փոփոխությունները հիմնավոր կասկածներ են հարուցում, օրինակ, առաջարկվում է հայտարկված պիտակի տեսքով ապրանքային նշանի պատկերի վրա որպես ապրանքն արտադրողի անվանում ավելացնել կամ փոփոխել և դարձնել հայտատուի անվանումից տարբերվող անվանում, գրասենյակը երեք աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան ծանուցում է ուղարկում դիմում ներկայացնողին՝ համապատասխան ապացույցներ ներկայացնելու պահանջով:

(61-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

62. Դիմումով առաջարկվող փոփոխությունները գրասենյակի կողմից հաշվի չեն առնվում, եթե դրանք էապես փոխում են հայտարկված ապրանքային նշանի պատկերը կամ ընդլայնում են հայտում նշված ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը:

(62-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

63. Օրենքի 43-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, եթե լրացուցիչ նյութերն էապես փոփոխում են գրանցման ներկայացված ապրանքային նշանը, կամ եթե հայտի մեջ նշված ապրանքների ցանկում ավելացնում են նոր ապրանքներ և (կամ) ծառայություններ, ապա դիմումով առաջարկվող փոփոխությունները պետական լիազոր մարմնի կողմից հաշվի չեն առնվում և կարող են հայտատուի կողմից ձևակերպվել որպես ինքնուրույն հայտ, ինչի մասին, համապատասխան հիմնավորմամբ, երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցվում է հայտատուն:

(63-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

64. Հայտարկվող նշանում փոփոխություններ կատարելիս՝ դիմումին կից ներկայացվում են նշանի փոփոխված պատկերը և սույն կարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն նշանի նկարագրությունը՝ մատնանշելով կատարվող փոփոխությունը:

65. Հայտատուի անվանման փոփոխության դեպքում դիմումին կից ներկայացվում է այդ փոփոխությունը հաստատող փաստաթուղթը:

66. Հայտատուի փոփոխության դեպքում դիմումին կից ներկայացվում է հայտի նկատմամբ իրավունքների փոխանցումը հաստատող փաստաթուղթը:

67. Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն երկու կամ ավելի ապրանքների և (կամ) ծառայությունների համար ներկայացված հայտը հայտատուի դիմումի հիման վրա կարող է բաժանվել երկու կամ ավելի հայտերի (զատված հայտեր)՝ սկզբնական հայտում թվարկված ապրանքները և (կամ) ծառայությունները բաշխելով այդ հայտերի միջև:

68. Հայտը զատվում է ներկայացված դիմումի հիման վրա՝ համաձայն սույն կարգի N 3 ձևի, որը համապատասխան պետական տուրքի վճարման անդորրագրի հետ միասին գրասենյակ է ներկայացվում՝

1) մինչև պետական լիազոր մարմնի կողմից ապրանքային նշանի գրանցման կամ գրանցումը հայտում նշված բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների կամ դրանց մի մասի համար մերժելու մասին փորձաքննության որոշման ընդունումը հայտի քննարկման ցանկացած փուլում:

2) ապրանքային նշանի գրանցումը հայտում նշված բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների կամ դրանց մի մասի համար մերժելու մասին որոշման դեմ բողոքների քննարկման ցանկացած փուլում:

(68-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

69. Դիմումը, որը կարող է ներկայացվել նաև հայտատուի ներկայացուցչի միջոցով, գրասենյակ է ներկայացվում առձեռն կամ փոստային առաքմամբ:

(69-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

70. Դիմումը լրացնելու համար կիրառվում են հայտի համապատասխան անվանումներով կետերը լրացնելու համար սույն կարգի 4-րդ կետում նշված կանոնները՝ բացառությամբ 6-րդ կետի: 6.1-ին կետում նշվում է զատված հայտերի թիվը, իսկ 6.2-6.5-րդ կետերում, ինչպես նաև լրացուցիչ թերթի վրա հերթական համար ունեցող կետերում՝ ըստ յուրաքանչյուր զատված հայտի ներկայացվում են սկզբնական հայտում թվարկվածներին համապատասխան ապրանքները և (կամ) ծառայությունները:

71. Գրասենյակը հայտի զատման մասին դիմումը քննարկում է այն ստանալու օրվանից 5-օրյա ժամկետում և, եթե պարզում է, որ ներկայացված դիմումը համապատասխանում է սույն կարգի 68-րդ կետով սահմանված պահանջներին և վճարված է համապատասխան պետական տուրքը՝

1) զատված սկզբնական հայտում կատարում է գրառում զատման մասին՝ ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը սահմանափակելով դիմումի 6.2-րդ կետում նշվածներով, պահպանելով հայտի համարը, ինչպես նաև այն ներկայացնելու թվականը և առաջնության թվականը (այդպիսիք սահմանված լինելու դեպքում):

2) 6.3-6.5-րդ և լրացուցիչ թերթի վրա հերթական համար ունեցող կետերում նշված յուրաքանչյուր զատված հայտին տալիս է նոր համար, որն սկզբնական հայտի գրանցման համարն է՝ գծիկով ավելացված հերթական համարով (օրինակ, 20100025-1, 20100025-2 և այլն):

3) սույն կետի 2-րդ ենթակետում նշված զատված հայտերի տվյալները մուտքագրում է հայտերի հիմնապաշար՝ պահպանելով սկզբնական հայտի բոլոր տվյալները՝ բացառությամբ ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկի, որը յուրաքանչյուր զատված հայտի համար որոշվում է ըստ դիմումի 6.3-6.5-րդ և լրացուցիչ թերթի վրա հերթական համար ունեցող կետերում նշվածների:

4) հայտի զատման մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցում է հայտատուին և յուրաքանչյուր զատված հայտի հետագա քննարկումն իրականացնում է՝ որպես սկզբնական հայտի քննարկման համապատասխան փուլի շարունակություն:

(71-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

72. Եթե գրասենյակը պարզում է, որ ներկայացված դիմումը չի համապատասխանում սույն կարգի 68-70-րդ կետերով սահմանված պահանջներին և (կամ) վճարված պետական տուրքի գումարը չի համապատասխանում օրենքով սահմանված չափին, կամ բացակայում է պետական տուրքի վճարման անդորրագիրը, դիմումն ստանալու օրվանից գրասենյակը երեք աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին ծանուցում է հայտատուին՝ դիմումը սահմանված պահանջներին համապատասխանեցնելու և (կամ) սահմանված պետական տուրքի վճարման բացակայող անդորրագիրը կամ սահմանված չափից պակաս վճարված պետական տուրքի վճարման անդորրագիրը ներկայացնելու վերաբերյալ առաջարկությամբ: Այս դեպքում հայտի զատման մասին դիմումի հետագա քննարկումն իրականացվում է պահանջված նյութերից վերջինի ստացման օրվանից 5-օրյա ժամկետում:

(72-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

V. ՀԱՅՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ, ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՅ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

73. Օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասին և սույն կարգի 28-րդ կետին համապատասխան ընդունված հայտի հրապարակման և ըստ էության փորձաքննություն անցկացնելու մասին որոշման հիման վրա՝ դրա ընդունման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրասենյակը հայտը հրապարակում է «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրում, որտեղ զետեղում է հայտի համարը և այն ներկայացնելու թվականը, հայտատուի անունը, ազգանունը և բնակության վայրը կամ անվանումը և գտնվելու վայրը, հայտարկված ապրանքային նշանի պատկերը և

այն ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը, որոնց համար հայտարկված է ապրանքային նշանի գրանցումը:

(73-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

74. Նշված տվյալների հետ միասին պաշտոնական տեղեկագրում զետեղվում է նաև առաջնության թվականը, եթե հայտի նախնական փորձաքննության փուլում այն սահմանվել է:

75. Օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայտի հրապարակման թվականից երկամսյա ժամկետում հայտարկված ապրանքային նշանի գրանցման դեմ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված հիմքերով ներկայացված գրավոր դիտողության մասին գրասենյակը երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցում է հայտատուին՝ նշված ծանուցագիրն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում իր նկատառումները ներկայացնելու վերաբերյալ առաջարկությամբ:

(75-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

76. Օրենքի 44-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայտի հրապարակման թվականից երկամսյա ժամկետում հայտարկված ապրանքային նշանի գրանցման դեմ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված հիմքերով ներկայացված գրավոր առարկությունն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում գրասենյակն ստուգում է այն, այդ թվում՝ առարկություն ներկայացնելու համար սահմանված պետական տուրքի վճարման անդորրագրի առկայությունը և, օրենքով սահմանված պահանջներին դրանց համապատասխանության դեպքում, երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցում է հայտատուին՝ նշված ծանուցագիրն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում իր նկատառումները ներկայացնելու վերաբերյալ առաջարկությամբ:

(76-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

77. Սույն կարգի 75-րդ և 76-րդ կետերի համաձայն պահանջված նկատառումները հայտատուի կողմից չներկայացվելու դեպքում դիտողություններն ու առարկությունները գրասենյակը քննարկում է դրանք ներկայացնելու ժամկետի ավարտից հետո, առկա նյութերի հիման վրա, որպես օրենքի և սույն կարգի համաձայն հայտի՝ ըստ էության փորձաքննության նպատակներով հայտարկված ապրանքային նշանի գրանցումը մերժելու համար ի հայտ բերված հնարավոր հիմքի:

(77-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

78. Ապրանքային նշանի գրանցման դեմ ներկայացված դիտողություններն ու առարկությունները, ինչպես նաև դրանց վերաբերյալ հայտատուի ներկայացրած նկատառումները գրասենյակն ըստ էության քննարկում է՝ կիրառելով օրենքի 9-րդ ու 10-րդ հոդվածներով և սույն կարգի 5-րդ բաժնում սահմանված դրույթները:

(78-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

79. Օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դիտողության քննարկումը կասեցվում է հայտատուի կողմից հիմնավոր դիմում ներկայացվելու դեպքում: Այս դեպքում դիմումում պետք է նշվի և հիմնավորվի նաև կասեցման ժամկետը: Օրինակ, եթե դիտողությունը վերաբերում է ապրանքային նշանում պետական զինանշաններ, դրոշներ կամ խորհրդանիշներ, պետությունների պաշտոնական անվանումներ կամ դրանց կրճատ ձևեր օգտագործելուն, դիտողության քննարկման ժամկետի կասեցումը կարող է հիմնավորվել համապատասխան իրավասու մարմնի թույլտվություն ստանալու համար պահանջվող ժամանակահատվածով:

80. Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առարկության քննարկումը կասեցվում է հետևյալ դեպքերում և ժամկետներով

1) հակադրվել է ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանի կամ արդյունաբերական դիզայնի գրանցման մասին հայտ՝ մինչև դրա վերաբերյալ վերջնական որոշման ընդունումը.

2) առարկության հիմքում դրված ավելի վաղ ապրանքային նշանը կամ արդյունաբերական դիզայնը գտնվում է գրանցումն անվավեր կամ չեղյալ ճանաչելու գործընթացում՝ մինչև տվյալ գործով վերջնական որոշման ընդունումը.

3) կողմերից մեկը հիմնավորված դիմում է ներկայացրել՝ մինչև դրա մեջ նշված ժամկետի ավարտը:

(80-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

81. Դիտողության և առարկության քննարկման արդյունքում գրասենյակը համապատասխանաբար ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

- 1) դիտողությունը կամ առարկությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարելու և ապրանքային նշանի գրանցումը հայտի մեջ նշված բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների կամ դրանց մի մասի համար մերժելու մասին.
- 2) դիտողությունը կամ առարկությունը մերժելու մասին:

(81-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

82. Օրենքի 46-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն կարգի 81-րդ կետում նշված որոշումները հաշվի են առնվում ներկայացված ապրանքային նշանի գրանցման մասին հայտի՝ ըստ էության փորձաքննության արդյունքում որոշում կայացնելիս, ինչի մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցվում է նաև դիտողություն կամ առարկություն ներկայացնող անձը:

VI. ՀԱՅՏԻ՝ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

83. Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտի՝ ըստ էության փորձաքննության (սույն բաժնում այսուհետ նաև՝ փորձաքննություն) նպատակն է պարզել հայտարկվող նշանի համապատասխանությունն օրենքով սահմանված

պահպանության պայմաններին, այն է՝ օրենքի 9-րդ ու 10-րդ հոդվածների պահանջներին և սահմանել ապրանքային նշանի առաջնությունը, եթե այն չի սահմանվել նախնական փորձաքննության ընթացքում:

84. Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտի հրապարակման օրվանից եռամսյա ժամկետում հայտի՝ ըստ էության փորձաքննությունը գրասենյակն անցկացնում է սույն կարգով սահմանված դրույթներին համապատասխան:

(84-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

85. Փորձաքննության նշված ժամկետի ընթացքը կասեցվում է սվյալ հայտի վերաբերյալ օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերին համապատասխան դիտողության կամ առարկության ստացման կապակցությամբ, նույն հոդվածի 3-րդ և 6-րդ մասերում նշված ժամկետներով, այսինքն՝ մեկ ամսով: Ընդ որում, նույն հայտի վերաբերյալ մեկից ավելի դիտողություն և (կամ) առարկություն ստանալու դեպքում նշված ժամկետի կասեցման սկիզբ համարվում է դրանցից առաջինի ուղարկման թվականը, իսկ ավարտը՝ դրանցից վերջինի ստացման հետ կապված՝ օրենքի 44-րդ հոդվածի 3-րդ կամ 6-րդ մասում նշված ժամկետի ավարտը:

86. Սույն կարգի 83-րդ կետում նշված փորձաքննության նպատակներից ելնելով՝ գրասենյակի խնդիրն է՝

1) ի հայտ բերել օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված՝ հայտարկված ապրանքային նշանի գրանցման-մերժման բացարձակ հիմքերը, այսինքն՝ ստուգել նշված հիմքերի առկայությունը հայտարկված ապրանքային նշանի համար, կամ, որ նույնն է՝ հայտարկված ապրանքային նշանի առնչության աստիճանն այդ հիմքերին՝ օգտագործելով իր տրամադրության տակ գտնվող կամ ցանկացած միջոցներով հասանելի գիտական, տեխնիկական, մշակութային, հոգևոր և այլ բնույթի տեղեկությունները:

2) ի հայտ բերել օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված՝ հայտարկված ապրանքային նշանի գրանցման-մերժման հարաբերական հիմքերը՝ օգտագործելով իր տրամադրության տակ գտնվող բոլոր տեղեկությունները և տեղեկատվական միջոցները, այդ թվում՝ համացանցը:

3) ստուգել օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ ու 4-րդ մասերին համապատասխան ստացված դիտողությունների և առարկությունների հիմքերի առնչությունն օրենքի 9-րդ կամ 10-րդ հոդվածով սահմանված հիմքերին:

(86-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

87. Մինչև հայտի՝ ըստ էության փորձաքննությանն անցնելը գրասենյակը՝

1) ստուգում է հայտի նյութերի համապատասխանությունը սույն կարգով սահմանված պահանջներին՝ բացառությամբ այն նյութերի, որոնք սույն կարգի 24-րդ և 25-րդ կետերի համաձայն ստուգվել են նախնական փորձաքննության ընթացքում:

2) ստուգում է ԱՕՄԴ-ի դասերին համապատասխան խմբավորված ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը:

3) սահմանում է ապրանքային նշանի առաջնությունն օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերին համապատասխան, եթե այն չի սահմանվել նախնական փորձաքննության ընթացքում:

(87-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

88. Սույն կարգի 87-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված ստուգման արդյունքում անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում կիրառվում են սույն կարգի 26-27, 29-34-րդ կետերով նախատեսված մոտեցումները:

89. Գրասենյակը փորձաքննությունն անցկացնում է և հայտարկված ապրանքային նշանի գրանցման վերաբերյալ որոշումն ընդունում է օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասի և սույն կարգի 86-րդ կետի համաձայն կատարված ստուգման արդյունքների հիման վրա՝ հաշվի առնելով նաև օրենքի 46-րդ հոդվածի 4-րդ մասում նշված դիտողությունների և առարկությունների քննարկման արդյունքում ընդունված որոշումները (այդպիսի որոշումների առկայության դեպքում): Փորձաքննության արդյունքում ընդունված որոշման մասին գրասենյակը երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցում է հայտատուին կամ նրա ներկայացուցչին (ներկայացուցչի առկայության դեպքում), ինչպես նաև օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ դիտողություն կամ առարկություն ներկայացրած անձին:

(89-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

90. Գրասենյակը փորձաքննությունն անցկացնում է հետևյալ փուլերով՝

1) հայտարկված նշանը ենթարկում է վերլուծության՝ ինչպես իր ամբողջական, այնպես էլ՝ ըստ բաղկացուցիչ տարրերի և դրանց բովանդակության, որպեսզի հնարավոր լինի պարզել դրա գրանցումը մերժելու բացարձակ հիմքերի առկայության կամ բացակայության հանգամանքը:

2) հայտարկված ապրանքային նշանի գրանցումը մերժելու հարաբերական հիմքերի առկայությունը կամ բացակայությունը պարզելու համար իր կամ իրեն հասանելի համապատասխան տվյալների բազաներում անցկացնում է՝
ա. ավելի վաղ ներկայացնելու թվական ունեցող (կամ առաջնությամբ) Հայաստանի Հանրապետությունում պահպանվող կամ պահպանության ներկայացված և հայտարկված ապրանքային նշանին նույնական կամ նման ապրանքային նշանների որոնում,

բ. հայտարկված ապրանքային նշանին նույնական կամ նման և Հայաստանի Հանրապետությունում պահպանվող աշխարհագրական նշումների կամ ծագման տեղանունների որոնում,

գ. Հայաստանի Հանրապետությունում պահպանվող ավելի վաղ առաջնության թվական ունեցող արդյունաբերական դիզայնների կամ արդյունաբերական սեփականության այլ օբյեկտների որոնում, որոնք վերարտադրված կամ ներառված են հայտարկված ապրանքային նշանում,

դ. հայտը ներկայացնելու թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս

օգտագործվող և դեռևս օգտագործման մեջ գտնվող ապրանքային նշանների որոնում, որոնց նկատմամբ հայտարկված ապրանքային նշանի գրանցումը կարող է շփոթություն առաջացնել:

3) իր տրամադրության տակ ունեցած կամ իրեն հասանելի տեղեկությունների հիման վրա պարզում է հայտարկված ապրանքային նշանում՝

ա. հեղինակային իրավունքով պահպանվող գրականության, գիտության կամ արվեստի ստեղծագործությունների, դրանց անվանումների կամ դրանցից մեջբերումների ու հաստատումների, դրանց հերոսների վերարտադրման կամ ներառման հանգամանքը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ իրավունքները ձեռք են բերված մինչև տվյալ ապրանքային նշանի հայտը ներկայացնելու կամ առաջնության թվականը,

բ. որևէ հայտնի անձի անվան կամ ազգանվան կամ կեղծանվան, կամ որևէ անձի պատկերի վերարտադրման կամ ներառման հանգամանքը՝ հաշվի առնելով այն, որ դրանց հետ նմանությունը շփոթություն է առաջացնում:

4) սույն կարգի համաձայն անցկացնում է հետազոտություն՝ պարզելու համար սույն կետի համաձայն ի հայտ բերված իրավունքներով հայտարկված ապրանքային նշանի գրանցումը մերժելու հնարավորությունը:

(90-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

91. Եթե փորձաքննության արդյունքում պարզվում է, որ՝

1) հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման՝ հայտում նշված բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների համար օրենքի 9-րդ և (կամ) 10-րդ հոդվածներով սահմանված մերժման բացարձակ և (կամ) հարաբերական հիմքերով, գրասենյակն ընդունում է որոշում հայտարկված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին:

2) հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման՝ հայտում նշված ապրանքների և (կամ) ծառայությունների մի մասի համար օրենքի 9-րդ և (կամ) 10-րդ հոդվածներով սահմանված մերժման բացարձակ և (կամ) հարաբերական հիմքերով, գրասենյակն ընդունում է որոշում հայտում նշված մնացած ապրանքների և (կամ) ծառայությունների համար հայտարկված ապրանքային նշանը գրանցելու մասին (մասնակի գրանցում):

3) հայտարկված ապրանքային նշանի գրանցումը ենթակա չէ մերժման՝ հայտում նշված ապրանքների և (կամ) ծառայությունների համար օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածներով սահմանված մերժման բացարձակ և հարաբերական հիմքերի բացակայության պատճառով, գրասենյակն ընդունում է որոշում հայտարկված ապրանքային նշանը հայտում նշված բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների համար գրանցելու մասին:

(91-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

92. Օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն գրասենյակի՝ ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումները, այդ թվում՝ մասնակի գրանցման կամ, որ նույնն է, մասնակի մերժման մասին որոշումները պետք է լինեն հիմնավորված: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ սույն կարգի 91-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված որոշումներում պետք է նշվեն դրանց ընդունման պատճառները և հիմքերը:

(92-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

93. Ապրանքային նշանի գրանցման-մերժման բացարձակ հիմքերը հիմնականում պայմանավորված են նշանի առանձնահատկություններով ու բնույթով և շատ դեպքերում կախված չեն նրանից, թե ինչ ապրանքների և (կամ) ծառայությունների համար է խնդրարկվում դրա գրանցումը (ապրանքի բնույթից): Հայտարկված ապրանքային նշանի ստուգմամբ գրասենյակն առաջին հերթին պարզում է, թե, արդյոք, դա օրենքի 8-րդ հոդվածում նշված նիշերից է, թե՞ որպես տարր ներառում է այդպիսի նիշ: Դրա համար անհրաժեշտ է հաշվի առնել, որ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը՝

1) չի համապատասխանում օրենքի 8-րդ հոդվածի պահանջներին: Որպես այդպիսին կարելի է նշել, օրինակ, հոտային նշանները, որոնց գրանցումը նախատեսված չէ օրենքով:

2) չունի տարբերակիչ հատկություն, օրինակ, սոսկ պարզ երկրաչափական պատկերներից, գծերից, ինչպես նաև դրանց զուգակցումից բաղկացած նիշերը, որոնց համակցությունը չի տալիս դրա մեջ մտնող տարրերի ընկալումից տարբերվող ընկալման այլ որակական մակարդակ, կամ բաղկացած են գրաֆիկական յուրահատուկ ոճ չունեցող առանձին տառերից, թվերից, որպես բառ չընկալվող տառերի զուգակցումից: Դրանց թվին են պատկանում՝

ա. որպես միակ տարր եռանկյունի, շրջան, քառակուսի, գիծ կամ այդ տարրերի պարզ համակցության պատկերները ներառող նիշերը կամ միայն մեկ գույնի պարզ երկրաչափական պատկերներից բաղկացած նիշերը,

բ. այն նիշերը, որոնք գրանցման են ներկայացվել որպես բառային ապրանքային նշաններ, սակայն ունեն հիերոգլիֆներով, արաբական, պարսկական, վրացական և այլ համանման տառերով գրված բառի տեսք և, ընդհանուր առմամբ, որպես այդպիսիք ընկալելի չեն Հայաստանի Հանրապետության սպառողների համար, ինչպես նաև այն նշանները, որոնց մեջ այդպիսի նիշը գերիշխող տարր է: Դա պայմանավորված է նրանով, որ, օրինակ, հիերոգլիֆներով ներկայացված բոլոր բառերն սպառողների կողմից ուղղակի ընկալվում են որպես «հիերոգլիֆներով բառ» կամ «հիերոգլիֆների համակցություն», այսինքն՝ Հայաստանի Հանրապետության սպառողի համար բացակայում է որպես բառի ընկալման հատկությունը, մասնավորապես, արտասանության կամ իմաստային,

գ. նաև ապրանք արտադրողի մասին տեղեկությունները՝ արտադրության ստեղծման պատմությանը, հասցեին և այլնին վերաբերող տվյալները, օրինակ, «հիմնադրված է 1951 թ.» կամ «1887» և այլն:

3) բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, ապրանքի կամ ծառայության տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ ապրանքների և (կամ) ծառայությունների այլ բնութագրեր նշելու համար:

Այդպիսի նիշերից են, օրինակ, նկարագրական կամ գովաբանական բնույթի նիշերը, այսինքն՝ այն նիշերը, որոնք ուղղակիորեն նկարագրում կամ ցույց են տալիս նշված բնութագրերը, օրինակ, «արտադրված է Երևանում» կամ «Երևան, 2010», «հակաբորբոքիչ միջոց» կամ «թեթև» (LIGEROS) սիգարետների համար՝ բնորոշում է որակը, «Էքստրան» (ՅԿՏՐԱ), «լյուքսը» (ЛЮКС), «սուպերը» (SUPER) համընդհանուր օգտագործվող գովաբանական բնույթի հատկանիշները, «շաքարի երկվորյակը» (SUGAR WIN) արհեստականորեն քաղցրացնող նյութի համար՝ կիրառությունը, «գալվանապատման եղանակով ստացվողը» (GALVANAL) մետաղաթերթերի համար՝ արտադրման եղանակը, «մետաղը» (METALL) ձևավոր ձուլվածքի համար՝ նյութը և այլն.

4) բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից կամ ցուցումներից, որոնք համընդհանուր են դարձել խոսակցական կամ առևտրային պրակտիկայում: Այդպիսի նիշեր են, մասնավորապես

ա. այն նիշերը, որոնք, օրինակ, համընդհանուր ընդունված անվանումներ են, որոնք, որպես կանոն, ապրանքների կամ դրանց արտադրության (մատուցման) հաստատության պարզ նշումներ են, կազմակերպությունների, ընկերությունների, բնագավառների, համընդհանուր ընդունված անվանումներ (գործարան, ֆաբրիկա, ընկերություն, միություն, առողջապահություն) և այլն,

բ. գիտության և տեխնիկայի մեջ օգտագործվող պայմանական նշանները, օրինակ, քիմիական տարրերի սիմվոլները (Fe, Ca), կոնստրուկտորական փաստաթղթերի միասնական համակարգի (ԿՓՄՇ, ԺՇԽԺ) սկզբունքային սխեմաների գրաֆիկական նշանները, գիտության և տեխնիկայի մասնագիտացված ճյուղերին վերաբերող բառապաշարային միավորները, ինչպես նաև ընդունված խորհրդանիշները, օրինակ, կենտրոնախույս աղեղներից բաղկացած շրջանաձև պատկերը, որը խորհրդանշում է հավերժությունը, գլոբուսի պատկերը մայր ցամաքների ուրվագծերով՝ որպես երկիր մոլորակի խորհրդանիշ, գավաթին փաթաթված օձի պատկերը, որը խորհրդանշում է բժշկությունը և այլն,

գ. ապրանքների տեսակների անվանումները, որոնք ներկայացվում են գրանցման՝ որպես ապրանքային նշաններ՝ այդ նույն ապրանքների նշումով, օրինակ, մեղվի մեղր, օշարակ, խնձորի հյութ և այլն,

դ. որոշակի գործունեության հետ կապված՝ համընդհանուր ճանաչում ստացած այն նշանները, որոնք մատնանշում են ապրանքների ցանկում ընդգրկված տնտեսության կամ գործունեության այն ճյուղը, բնագավառը, որին վերաբերում է հայտարարվող նշանը, օրինակ, թեղու ասեղի կամ մկրատի պատկերները՝ կարի արտադրության համար, ատամնանիվը՝ մեքենաշինության համար, կարկինը՝ նախագծային կազմակերպության համար, որոնք չեն կարող ծառայել որպես անհատականացման միջոց.

5) բացառապես ներկայացնում է ապրանքի արտաքին ձևը, որը բխում է գուտ ապրանքի բնույթից (հատկություններից), տեխնիկական արդյունքի հասնելու անհրաժեշտությունից կամ բնորոշում է ապրանքի նշանակությունը (գործառնությունը), կամ ապրանքին տալիս է էական արժեք, մասնավորապես, այն նիշերը, որոնք վերարտադրում են ապրանքի պատկերը և ներկայացվում են գրանցման՝ այդ նույն ապրանքների համար, օրինակ, աթոռի պատկերը՝ կահույքի համար, ծանրաձողի պատկերը՝ մարզական միջոցառումների համար և այլն.

6) հակասում է հասարակական կարգին, մարդասիրության կամ բարոյականության սկզբունքներին, ինչպես նաև անհարիր է ազգային կամ հոգևոր արժեքներին, ինչպիսիք են, օրինակ, այն նկարները, պատկերները, բառերը կամ բառային արտահայտություններն ու դրանց համակցությունները, որոնց տեսքը, բովանդակությունը կամ իմաստը հակասում են հասարակական կարգին, մարդասիրության կամ բարոյականության սկզբունքներին, օրինակ, մարդու գնդակահարության տեսարան պատկերող նկարը, զանազան հայհոյանքի խոսքերը և այլն: Այս կապակցությամբ

ա. փորձաքննության ժամանակ հաշվի է առնվում այն, որ ազգային և հոգևոր արժեքներ են համարվում նյութական, գիտական, մշակութային արժեքները, ինչպես նաև հոգևոր արժեքները: «Արժեք» հասկացությամբ նշվում է այն հանգամանքը, որ մարդկային գործունեության մեջ ներգրավված իրականությունը ձեռք է բերում մի նոր հատկանիշ, այն իմաստավորվում է հասարակական-մշակութային և հոգևոր ենթատեքստում և դառնում որոշակի գնահատականների առարկա: Օրինակ, խաչքարը ճարտարապետական հուշարձան է, սակայն հայ ժողովրդի իրականության մեջ այն ձեռք է բերել մի նոր հատկանիշ: Մեր ազգային մտածելակերպին անհարիր է, օրինակ, օդու պիտակի վրա գետեղել մեր սրբերից որևէ մեկի անունը կամ պատկերը, եկեղեցու պատկերը կամ հայ ժողովրդի պատմության և գրականության մեջ նշանակալի ու առանձնահատուկ տեղ զբաղեցնող անձանց, ինչպես, օրինակ, Ներսես Շնորհալու, Կոմիտասի կամ Գրիգոր Նարեկացու անունները,

բ. անհրաժեշտ է, որ ապրանքային նշանների փորձաքննության ընթացքում հաշվի առնվեն հատկապես այն ապրանքների արտադրության, ապահովման և կիրառման առանձնահատկությունները, որոնց համար գրանցվում է տվյալ ապրանքային նշանը,

գ. հարցին առնչվող ապրանքային նշանների փորձաքննության ընթացքում կողմնորոշման համար հաշվի են առնվում նաև համապատասխան իրավասու մարմինների և կառույցների (պետական համապատասխան մարմիններ, հասարակական կազմակերպություններ, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի և այլն) եզրակացություններն ու պարզաբանումները.

7) բաղկացած կամ պարունակում է կեղծ և (կամ) սպառողներին մոլորության մեջ գցող տվյալներ՝ ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակի, ապրանքի կամ ծառայության տեսակի, բնույթի, որակի, քանակի, ստեղծման նպատակի, արժեքի, աշխարհագրական ծագման կամ ապրանքն արտադրողի (ծառայություն մատուցողի) վերաբերյալ հարցերում: Այսպիսի նիշերից են այն նիշերը, որոնք իրենց բնույթով կամ ներառված առանձին տարրերով սպառողին կարող են մոլորության մեջ գցել: Օրինակ, «Ռուսական դասական» (Русская классика) բառակապակցություն պարունակող ապրանքային նշանն օդու համար չի կարող գրանցվել հայկական ընկերության

անվանամար, քանի որ այն սպառողին մոլորության մեջ կզցի, որ սպրանքն արտադրված է Ռուսաստանի Դաշնությունում, կամ աստամի մածուկի համար չի կարող գրանցվել սրվակի պատկեր, որի վրա գրված է «օծանելիք» բառը, քանի որ դա սպառողին մոլորության մեջ կզցի սպրանքի հարցում և այլն.

8) վերարտադրում կամ պարունակում է պետական զինանշաններ, դրոշներ կամ խորհրդանիշներ, պետությունների պաշտոնական անվանումներ կամ դրանց կրճատ ձևեր, միջազգային և միջպետական կազմակերպությունների լրիվ կամ կրճատ անվանումներ, պաշտոնական խորհրդանիշներ, պաշտոնական վերահսկողական, երաշխիքային և հարգորշիչ դրոշմներ, կնիքներ, պարզևներ և այլ տարբերանշաններ (Փարիզյան կոնվենցիայի 6^{եր} հոդվածի համաձայն) կամ շփոթելու աստիճան նման է դրանց.

9) վերարտադրում է նշաններ կամ խորհրդանիշներ, որոնք չեն պահպանվում Փարիզյան կոնվենցիայի 6^{եր} հոդվածով, սակայն ներկայացնում են հատուկ հասարակական հետաքրքրություն, օրինակ, Մեծ եղեռնի հուշահամալիրի պատկերը, կամ Սարդարապատի հուշահամալիրի պատկերը, Արցախի խորհրդանիշը հանդիսացող «Պապի ու տատի» հուշարձանը և այլն.

10) պարունակում է մեծ նշանակություն ունեցող՝ հոգևոր կամ մշակութային ժառանգություն հանդիսացող խորհրդանիշներ, մասնավորապես, կրոնական, եթե այն պարունակում է կրոնական կամ բարոյական արժեքները նսեմացնող տարրեր.

11) վերարտադրում կամ պարունակում է տարրեր, որոնք նույնական կամ շփոթելու աստիճան նման են Հայաստանի Հանրապետության կամ համաշխարհային մշակութային ժառանգության պատկերներին կամ դրանց պաշտոնական անվանումներին, ինչպես նաև ֆոնդերում և հավաքածուներում պահպանվող մշակութային արժեքների պատկերներին, եթե գրանցումը հայտարկվում է այն անձի անվամբ, որը դրա իրավատերը չէ կամ չունի համապատասխան թույլտվություն: Այս նիշերը կարող են ներառվել սպրանքային նշանի մեջ որպես չպահպանվող տարրեր, եթե դրանք սպրանքային նշանում գերիշխող մաս չեն զբաղեցնում, և եթե առկա է համապատասխան թույլտվություն տրված իրավասու մարմնի կամ անձի կողմից.

12) *(էնթակետն ուժը կորցրել է 12.10.23 N 1725-Ն)*

13) բաղկացած է կամ պարունակում է՝

ա. գինիների կամ ալկոհոլային խմիչքների նույնականացման համար նախատեսված աշխարհագրական նշում՝ պայմանով, որ սպրանքային նշանի գրանցման հայտը ներկայացվում է ավելի ուշ, քան աշխարհագրական նշման կամ ծագման տեղանվան գրանցման հայտն այն դեպքերում, երբ սպրանքները չեն ծագել տվյալ աշխարհագրական վայրից, նույնիսկ եթե նշվում է սպրանքների իրական ծագումը կամ աշխարհագրական նշումն օգտագործվում է թարգմանաբար կամ «տեսակ», «տիպ», «ոճ», «նմանակում» և այլ նման արտահայտությունների գուգակցմամբ, կամ

բ. նշում, որը նույնական կամ շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող աշխարհագրական նշմանը, ծագման տեղանվանը կամ երաշխավորված ավանդական արտադրանքին այն դեպքերում, երբ սպրանքները չեն ծագել տվյալ աշխարհագրական վայրից, նույնիսկ եթե նշվում է սպրանքի իրական ծագումը, կամ աշխարհագրական նշումն օգտագործվում է թարգմանաբար կամ «տեսակ», «տիպ», «ոճ», «նմանակում» և այլ նման արտահայտությունների գուգակցմամբ:

(93-րդ կետը փոփ., լրաց., խմբ. 12.10.23 N 1725-Ն)

94. Աշխարհագրական նշումները և ծագման տեղանունները, որոնք պահպանվում են Հայաստանի Հանրապետությունում, կարող են ներառվել սպրանքային նշանի մեջ՝ միայն այն դեպքում, երբ հայտատուն օրենքով սահմանված կարգով ստացել է դրանց օգտագործման իրավունք: Այսինքն՝ նման դեպքերում անհրաժեշտ է, որ հայտատուն ներկայացնի նաև տվյալ աշխարհագրական նշման կամ ծագման տեղանվան օգտագործման իրավունքը հաստատող փաստաթուղթ, եթե խոսքը վերաբերում է ծագման երկրում գրանցված այլ երկրի աշխարհագրական նշումներին և ծագման տեղանուններին: Սպրանքային նշանում ներառված՝ գրանցված աշխարհագրական նշումները և ծագման տեղանուններն սպրանքային նշանի չպահպանվող տարրեր են:

95. Սույն կարգի 93-րդ կետի 2-5-րդ ենթակետերը չեն կիրառվում, եթե հայտատուն բավարար ապացույցներ է ներկայացնում այն մասին, որ օգտագործման արդյունքում, մինչև հայտը ներկայացնելու թվականը տվյալ սպրանքային նշանը տարբերակիչ հատկություն է ձեռք բերել այն սպրանքների և (կամ) ծառայությունների նկատմամբ, որոնց համար գրանցման է ներկայացվել: Մնացած դեպքերում նշված նիշերը, որպես չպահպանվող տարրեր, կարող են ներառվել սպրանքային նշանում, եթե դրանք չեն կազմում նշանի գերիշխող մասը:

(95-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

96. Սույն կարգի 93-րդ կետի 8-րդ և 9-րդ ենթակետերում նշված նիշերը, բացառությամբ պետությունների պաշտոնական անվանումների, դրանց կրճատ ձևերի և շփոթելու աստիճան նման նիշերի, կարող են ներառվել սպրանքային նշանի մեջ՝ որպես չպահպանվող տարրեր, եթե դրանք գերիշխող մաս չեն զբաղեցնում, և եթե առկա է համապատասխան իրավասու մարմնի թույլտվությունը:

97. Պետությունների պաշտոնական անվանումները, դրանց կրճատ ձևերը կամ դրանց շփոթելու աստիճան նման նիշերը կարող են ներառվել սպրանքային նշանի մեջ՝ որպես չպահպանվող տարրեր, եթե դրանք գերիշխող մաս չեն զբաղեցնում, և այդ սպրանքային նշանի օգտագործումն անհարիր չէ պետության հեղինակության համար և չի նսեմացնի այն:

98. Սպրանքային նշանը գրանցելիս՝ սույն կարգի 95-րդ, 96-րդ և 97-րդ կետերի համաձայն՝ նշվում է, որ այդպիսի տարրերը հանվում են պահպանությունից (հայտատուի համապատասխան հայտարարության հիման վրա), եթե դրանք

նշանի մյուս տարրերի հետ հորինվածքային կապ չունեն: Այն դեպքում, երբ այդպիսի տարրերն ապրանքային նշանի մյուս տարրերի հետ գտնվում են հորինվածքային կապի մեջ, այսինքն՝ արտահայտում են նոր միտք, իմաստ կամ նշանակություն են հաղորդում այդպիսի կապի արդյունքում, համարվում է որ ապրանքային նշանը պահպանվում է իր ամբողջության մեջ, և այդ տարրերը պահպանությունից կարող են չհանվել: Այդպիսի նշանների հիմնական տեսակներն են՝

- 1) ապրանքների անվանումները, որոնց համար գրանցվում է ապրանքային նշանը, օրինակ, «սիգարետներ», «բրենդի», «օծանելիք» և այլն.
- 2) ապրանքներ բնորոշող պատկերները, որոնց համար գրանցվում է ապրանքային նշանը.
- 3) նկարագրական նշանները, որոնք նշում են ապրանքի արտադրման կամ ապառման ժամանակը, տեղը, եղանակը, տեսքը կամ ձևը, որակը, հատկությունները, բաղադրությունը, ստեղծման նպատակը, արժեքը, օրինակ, «միկրոնիտային ֆիլտրով» (with the micronite filter), «օվալային ֆորմատ» (format oval), «պատրաստված է ԱՄՆ-ում» (made in USA), «թորած» (distilled), «պրոֆիլակտիկ ատամի մածուկ» (профилактическая зубная паста), «սեղանի սպիտակ» և այլն.
- 4) որևէ իրավաբանական անձի մասին տեղեկություն տվող նշանները. օրինակ, ապրանքի կամ իրավաբանական անձի ստեղծման պատմությունը, թվականը, իրավաբանական անձի հիմնադրումը, օրինակ, «Հայկական կոնյակի արտադրությունն սկսվել է 1887 թ.» և այլն.
- 5) տարբերակիչ բնույթ չունեցող ընդհանուր նշանակության բառերը, օրինակ, «ֆորմուլա 70».
- 6) ապրանքի որակի գովաբանական բնույթի նշումը, օրինակ, «լուքս դասի» (luxury class), «լավագույն որակի զարեջուր» (finest quality beer), «բարձր տեսակի» և այլն.
- 7) աշխարհագրական անվանումներն այն դեպքում, երբ դրանք աշխարհագրական նշումներ կամ ծագման տեղանուններ են, օրինակ, «Կոնյակ» (Cognac), «Սանտիագո դե Կուբա» (Santiago de Cuba).
- 8) երկրի պատկերն աշխարհագրական քարտեզի վրա.
- 9) առանձին տառերը և թվերը, առանձնահատուկ նշանակություն չունեցող դժվար արտասանելի տառերի գուգակցումը.
- 10) պարզ երկրաչափական պատկերները, օրինակ, եռանկյունի, շրջանագիծ, քառակուսի և այլն:

99. Ապրանքային նշանի կազմի մեջ մտնող ոչ պահպանունակ տարրի բացառումը պահպանությունից ձևակերպվում է դրա մասին հատուկ գրառմամբ՝ ապրանքային նշանի գրանցման մասին որոշման մեջ, ապրանքային նշանների պետական գրանցամատյանում, ապրանքային նշանի վկայագրում և գրասենյակի «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրում:

(99-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

100. Եթե հայտարկված ապրանքային նշանը որպես տարրեր ներառում է սույն կարգի 93-րդ կետի 6-րդ, 7-րդ, 10-րդ, 12-րդ և 13-րդ ենթակետերում նշված տարրերից գոնե մեկը կամ կազմված է միայն նույն կետի 2-5-րդ ենթակետերում նշված ոչ պահպանունակ տարրերից, ապա ապրանքային նշանի գրանցումը մերժվում է:

101. Եթե հայտարկված ապրանքային նշանում առկա են սույն կարգի 93-րդ կետի 2-5-րդ, 8-9-րդ ու 11-րդ ենթակետերում նշված նիշերը կամ դրանցից գոնե մեկը, ապա՝

- 1) սույն կարգի 93-րդ կետի 2-5-րդ ենթակետերում նշված ոչ պահպանունակ տարրերի ներառման դեպքում ստուգվում է, թե, արդյո՞ք, դրանք չեն կազմում նշանի գերիշխող մասը: Այդ նպատակով հաշվի է առնվում տվյալ տարրի իմաստային և (կամ) տարածական նշանակությունը.
- 2) ապրանքային նշանը միայն սույն կարգի 93-րդ կետի 11-րդ ենթակետում նշված նիշից կազմված (վերարտադրված) լինելու դեպքում ստուգվում է դրա սեփականատիրոջ (իրավատիրոջ) կամ համապատասխան իրավասու մարմնի համաձայնությունը հաստատող փաստաթղթի առկայությունը.
- 3) ապրանքային նշանի մեջ սույն կարգի 93-րդ կետի 8-րդ ու 9-րդ և 11-րդ ենթակետերում նշված տարրերի ներառման դեպքում ստուգվում է դրա սեփականատիրոջ (իրավատիրոջ) կամ համապատասխան իրավասու մարմնի համաձայնությունը հաստատող փաստաթղթի առկայությունը (բնօրինակը)՝ հաշվի առնելով սույն կարգի 97-րդ կետի պահանջները:

102. Եթե տվյալ չպահպանվող տարրը տարածական առումով ավելի մեծ տեղ է զբաղեցնում ապրանքային նշանի ընդհանուր պատկերի մեջ («ստվերում է» մնացած տարրերը) կամ ապրանքային նշանի բոլոր տարրերով արտահայտված հավաքական իմաստը տվյալ տարրի իմաստից բացի այլ իմաստ չի արտահայտում, այսինքն՝ սպառողին այլ իմաստ, միտք չի հաղորդում, քան հաղորդում է տվյալ ոչ պահպանունակ տարրը, և այդ պատճառով սպառողի մեջ այլ պատկերացում (ասոցիացիա) չի առաջացնում, ապա համարվում է, որ տվյալ չպահպանվող տարրն ապրանքային նշանի գերիշխող մաս է կազմում:

103. Չպահպանվող տարրի գերիշխող լինելը կարող է պայմանավորված լինել նաև տվյալ տարրի գունային կատարմամբ: Այսինքն՝ եթե տվյալ չպահպանվող տարրն ապրանքային նշանի պատկերի ընդհանուր ֆոնի վրա կատարված է խիստ ընդգծված (վառ) գունային լուծմամբ և դրանով իսկ ձեռք է բերել «առաջնահերթ» ընկալման հատկանիշ, ապա համարվում է, որ տվյալ տարրն ապրանքային նշանի գերիշխող մաս է կազմում:

104. Եթե չպահպանվող տարրը կազմում է ապրանքային նշանի գերիշխող մասը, ապա եզրակացություն է արվում տվյալ նշանը որպես ապրանքային նշան գրանցելու անհնարինության մասին և որոշում է ընդունվում ապրանքային նշանի գրանցումը մերժելու վերաբերյալ:

105. Չպահպանվող տարրի առկայությունն ու դրա հորինվածքային կապերը մնացած տարրերի հետ ապահովում են

տվյալ ապրանքային նշանի տարբերակիչ հատկությունը, սակայն չպահպանվող տարրն այլ սուբյեկտների կողմից ևս կարող է բարեխղճորեն օգտագործվել: Այս դեպքում չպահպանվող տարրերն սպառողի մեջ չպետք է շփոթություն առաջացնեն տարբեր արտադրողների, նրանց գտնվելու վայրի, կամ ապրանքի արտադրության հարցում:

106. Մասնավորապես, շատ կարևոր է ապրանքային նշաններում աշխարհագրական անվանումների ներառման հարցն այն դեպքերում, երբ առկա է արդեն գրանցված ապրանքային նշան, որի մեջ աշխարհագրական անվանումը կենտրոնական տեղ է զբաղեցնում (օրինակ, Երևանի կոնյակի գործարանի անվանմամբ թիվ 3192 գրանցում ունեցող պիտակի տեսքով ապրանքային նշանի մեջ օգտագործված են «Երևան» և «ЕРЕВАН» բառերը, որոնք պահպանությունից հանված են) և ծառայում է որպես տվյալ ապրանքի յուրատեսակ առևտրային անվանում: Այս դեպքում մյուս տնտեսավարող սուբյեկտներն իրենց ապրանքային նշաններում կարող են օգտագործել «Երևան» անվանումը (այդ թվում՝ այլ լեզուներով)՝ նշելու համար իրենց գտնվելու կամ ապրանքի արտադրության վայրը, կամ իրենց ֆիրմային անվանումը, որում առկա են «Երևան» անվանումը և այլ տվյալներ, սակայն նրանք ապրանքային նշաններում չեն կարող օգտագործել «Երևան» անվանումը (այդ թվում՝ այլ լեզուներով), եթե այդ անվանումն սպառողի կողմից ըստ էության չի կարող ընկալվել այլ կերպ, քան նույնատիպ ապրանքների առևտրային անվանում, հետևապես՝ այսպիսի ապրանքային նշանների գրանցումը ենթակա է մերժման:

107. Օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, եթե հայտարկված ապրանքային նշանը պարունակում է տարրեր, որոնք օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-5-րդ կետերով սահմանված հիմքերով չեն կարող առանձին գրանցվել որպես ապրանքային նշան, և դրանց ներառումն ապրանքային նշանում կարող է ազդել ապրանքային նշանի գրանցման վավերականության վրա, իսկ հայտատուն չի հայտարարել դրանց ինքնուրույն պահպանություն չտրամադրելու մասին, ապա գրասենյակը երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է հայտատուին՝ առաջարկելով ծանուցումն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում հայտարարություն ներկայացնել այդ տարրերի նկատմամբ բացառիկ իրավունքի հայտարկումից հրաժարվելու մասին:

(107-րդ կետը խմբ. 12.10.23 N 1725-Ն)

108. Օրենքի 45-րդ հոդվածի համաձայն, եթե սահմանված ժամկետում հայտատուն հայտարարություն չի ներկայացնում նշված տարրերից հրաժարվելու մասին, ապա՝

1) պետական լիազոր մարմինը համարում է, որ հայտատուն համաձայն է ներկայացված հիմքերի հետ և մերժման այլ հիմքերի բացակայության դեպքում որոշում է կայացնում հայտում նշված բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների համար ապրանքային նշանը գրանցելու մասին՝ նշում կատարելով նշված տարրերին ինքնուրույն պահպանություն չտրամադրելու մասին, կամ

2) պետական լիազոր մարմինը համարում է, որ հայտատուն համաձայն է ներկայացված հիմքերին, և հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման հայտում նշված ապրանքների և (կամ) ծառայությունների մի մասի համար, իսկ ապրանքների և (կամ) ծառայությունների մյուս մասի համար մերժման այլ հիմքերի բացակայության դեպքում որոշում է կայացնում հայտում նշված բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների համար ապրանքային նշանը գրանցելու մասին՝ նշում կատարելով նշված տարրերին ինքնուրույն պահպանություն չտրամադրելու մասին:

(108-րդ կետը խմբ. 12.10.23 N 1725-Ն)

108.1. Օրենքի 45-րդ հոդվածի համաձայն, եթե սահմանված ժամկետում հայտատուն հայտարարություն է ներկայացնում միայն նշված տարրերից մի մասի նկատմամբ կամ հայտարարություն է ներկայացնում նշված տարրերից մի մասի նկատմամբ, իսկ մյուս մասի նկատմամբ ներկայացնում է պետական լիազոր մարմնի համար անընդունելի առարկություն կամ նշված բոլոր տարրերի կամ դրանց մի մասի նկատմամբ ներկայացնում է պետական լիազոր մարմնի համար անընդունելի առարկություն, ապա պետական լիազոր մարմինը մերժման այլ հիմքերի բացակայության դեպքում որոշում է կայացնում ապրանքային նշանը մասնակի գրանցելու մասին՝ նշում կատարելով նշված տարրերին ինքնուրույն պահպանություն չտրամադրելու մասին:

(108.1-ին կետը լրաց. 12.10.23 N 1725-Ն)

109. Օրենքի 45-րդ հոդվածի համաձայն սահմանված ժամկետում հայտատուն հայտարարություն ներկայացնում է նշված բոլոր տարրերի նկատմամբ կամ հայտարարություն ներկայացնում է նշված տարրերից մի մասի նկատմամբ, իսկ մյուս մասի նկատմամբ ներկայացնում է գրասենյակի համար ընդունելի առարկություն, կամ նշված բոլոր տարրերի նկատմամբ ներկայացնում է գրասենյակի համար ընդունելի առարկություն, ապա գրասենյակն ապրանքային նշանի գրանցման կամ մասնակի գրանցման մասին որոշման մեջ նշում է կատարում միայն այն տարրերին ինքնուրույն պահպանություն չտրամադրելու մասին, որոնց նկատմամբ հայտարարություն է ներկայացվել՝ այդ նշումը ներառելով ապրանքային նշանի գրանցման մասին հրապարակվող պաշտոնական տեղեկությունների մեջ: Այն տարրերի մասին, որոնց նկատմամբ ներկայացվել է գրասենյակի համար ընդունելի առարկություն, ապրանքային նշանի գրանցման կամ մասնակի գրանցման մասին որոշման մեջ որևէ գրառում չի կատարվում, և դրանք պահպանություն ստանում են ապրանքային նշանի գրանցման փաստի ուժով:

(109-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

110. Ապրանքային նշանի գրանցումը մերժելու հարաբերական հիմքերի առկայությունն ստուգելու համար գրասենյակը կատարում է հետևյալ գործողությունները՝

1) իր տվյալների բազաներում անցկացնում է հայտարկված ապրանքային նշանին նույնական կամ նման ավելի վաղ ապրանքային նշանների որոնում: Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ավելի վաղ ապրանքային նշաններն իրենցից ներկայացնում են՝

ա. ապրանքային նշաններ, որոնց հայտը ներկայացնելու թվականը կամ, եթե օրենքի 42-րդ հոդվածի համաձայն խնդրարկվել է առաջնություն, այդ առաջնության թվականը նախորդում է քննարկվող հայտը ներկայացնելու թվականին կամ, եթե օրենքի 42-րդ հոդվածի համաձայն այդ հայտով խնդրարկվել է առաջնություն այդ առաջնության թվականին, և հանդիսանում են Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա կամ միջազգային գրանցման հիման վրա կամ ԵՏՍ պայմանագրով սահմանված կարգով դրա գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող ապրանքային նշաններ,

բ. սույն կետի 1-ին ենթակետում նշված իրավական պահպանություն ստանալու համար հայտարկված ապրանքային նշաններ՝ հետագայում դրանց իրավական պահպանություն տրամադրելու պայմանով.

գ. ապրանքային նշաններ, որոնք օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ են ճանաչված հայտարկված ապրանքային նշանի հայտը ներկայացնելու կամ օրենքի 42-րդ հոդվածի համաձայն խնդրարկված առաջնության թվականի դրությամբ.

2) անցկացնում է հայտարկված ապրանքային նշանին նույնական կամ շփոթելու աստիճանի նման ապրանքային նշանների որոնում, որոնք գրանցվել են նույն կամ նույնատիպ ապրանքների և (կամ) ծառայությունների համար և որոնց գրանցման գործողությունը չերկարաձգվելու պատճառով դադարեցվել է քննարկվող հայտը ներկայացնելու թվականին նախորդող երկամյա ժամկետում, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է ավելի վաղ ապրանքային նշանի իրավատիրոջ համաձայնությունը, կամ վերջինս չի օգտագործում իր ապրանքային նշանը.

3) իր տվյալների բազաներում անցկացնում է Հայաստանի Հանրապետությունում պահպանվող և հայտարկված ապրանքային նշանին նույնական կամ նման աշխարհագրական նշումների և ծագման տեղանունների որոնում.

4) իր տվյալների բազաներում անցկացնում է Հայաստանի Հանրապետությունում պահպանվող ավելի վաղ առաջնության թվական ունեցող արդյունաբերական դիզայնների կամ արդյունաբերական սեփականության ցանկացած այլ օբյեկտների որոնում, որոնք վերարտադրված կամ ներառված են հայտարկված ապրանքային նշանում.

5) իր տրամադրության տակ գտնվող տեղեկություններում և իր ունեցած միջոցներով անցկացնում է Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանների որոնում, որոնք դեռևս օգտագործման մեջ են գտնվում.

6) իր տրամադրության տակ գտնվող տեղեկություններից ելնելով՝ ի հայտ է բերում մինչև տվյալ ապրանքային նշանի հայտը ներկայացնելու կամ խնդրարկված առաջնության դեպքում առաջնության թվականը (եթե այդպիսին կա) ձեռք բերված հեղինակային իրավունքով պահպանվող գրականության, գիտության կամ արվեստի ստեղծագործությունները, դրանց անվանումները կամ դրանցից մեջբերումներն ու հատվածները, դրանց հերոսները, որոնք վերարտադրված կամ ներառված են հայտարկված ապրանքային նշանում.

7) պարզում է հայտարկված ապրանքային նշանում որևէ հայտնի անձի անուն կամ ազգանուն կամ կեղծանուն, կամ որևէ անձի պատկերի վերարտադրված կամ ներառված լինելու հանգամանքի առկայությունը.

8) սույն կետի 1-7-րդ ենթակետերի համաձայն ի հայտ բերված ապրանքային նշանները, անունները, անվանումները, պատկերները, արդյունաբերական սեփականության օբյեկտները և իրավունքի այլ օբյեկտները համեմատում է հայտարկված ապրանքային նշանի հետ և դրա արդյունքում որոշում է ընդունում վերջինիս գրանցման վերաբերյալ.

9) որոշվում է քննարկվող հայտում նշված ապրանքների և (կամ) ծառայությունների նույնատիպ լինելն այն ապրանքներին և (կամ) ծառայություններին, որոնց համար գրանցված կամ գրանցման են ներկայացված (այդ թվում՝ միջազգային ընթացակարգով) ավելի վաղ ապրանքային նշանները:

(110-րդ կետը փոփ., լրաց. 12.10.23 N 1725-Ն)

111. Եթե սույն կարգի 110-րդ կետի համաձայն ստուգման արդյունքում կամ ներկայացված առարկությունների և դիտողությունների հիման վրա գրասենյակը պարզում է, որ՝

1) հայտարկված ապրանքային նշանը նույնական է նույն կամ նույնատիպ ապրանքների և (կամ) ծառայությունների համար Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա կամ միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող այլ անձի ապրանքային նշանին, որոշում է ընդունում հայտարկված ապրանքային նշանի գրանցումը բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների համար մերժելու մասին.

2) հայտարկված ապրանքային նշանը նույնական է նույն կամ նույնատիպ ապրանքների և (կամ) ծառայությունների մի մասի համար Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա կամ միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող այլ անձի ապրանքային նշանին, որոշում է ընդունում հայտում նշված մնացած ապրանքների և (կամ) ծառայությունների համար հայտարկված ապրանքային նշանը գրանցելու մասին (մասնակի գրանցում).

3) հայտարկված ապրանքային նշանը շփոթելու աստիճանի նման է նույն կամ նույնատիպ ապրանքների և (կամ) ծառայությունների համար Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա կամ միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող ապրանքային նշանին, որոշում է ընդունում հայտարկված ապրանքային նշանի գրանցումը բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների համար մերժելու մասին.

4) հայտարկված ապրանքային նշանը շփոթելու աստիճանի նման է նույն կամ նույնատիպ ապրանքների և (կամ) ծառայությունների մի մասի համար Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա կամ միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող այլ անձի ապրանքային նշանին, որոշում է ընդունում հայտում նշված մնացած ապրանքների և (կամ) ծառայությունների համար հայտարկված ապրանքային նշանը գրանցելու մասին (մասնակի գրանցում).

5) հայտարկված ապրանքային նշանը շփոթելու աստիճանի նման է նույն կամ նույնատիպ ապրանքների և (կամ) ծառայությունների համար գրանցման ներկայացված ապրանքային նշանին, որի հայտը (ավելի վաղ հայտ) ներկայացնելու թվականը կամ, եթե օրենքի 42-րդ հոդվածի համաձայն խնդրարկվել է առաջնություն՝ այդ առաջնության թվականը նախորդում է քննարկվող հայտը ներկայացնելու թվականին կամ, եթե օրենքի 42-րդ հոդվածի համաձայն խնդրարկվել է առաջնություն այդ առաջնության թվականին՝ որոշում է ընդունվում հայտարկված ապրանքային նշանի գրանցման վերաբերյալ որոշման ընդունումը հետաձգելու մասին՝ դրա մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցելով հայտատուին: Այս դեպքում նշված որոշման ընդունումը հետաձգվում է մինչև ավելի վաղ հայտով ապրանքային նշանի գրանցումը կամ գրանցումը մերժելու մասին որոշման վիճարկման հնարավորությունների սպառումը: Սույն ենթակետի իմաստով ավելի վաղ հայտին հավասարեցվում է նաև հայտարկված ապրանքային նշանի հայտը ներկայացնելու թվականին կամ, եթե օրենքի 42-րդ հոդվածի համաձայն խնդրարկվել է առաջնություն՝ այդ առաջնության թվականին նախորդող՝

ա. ապրանքային նշանի միջազգային գրանցման թվական կամ, եթե խնդրարկվել է առաջնություն՝ առաջնություն ունեցող միջազգային գրանցումը, որի մեջ Հայաստանի Հանրապետությունը նշված է որպես «նշված երկիր», այսինքն՝ տվյալ ապրանքային նշանի պահպանություն խնդրարկվում է նաև Հայաստանի Հանրապետությունում,

բ. Հայաստանի Հանրապետության նկատմամբ տարածքային ընդարձակման թվական ունեցող միջազգային գրանցումը, որոնց հիման վրա գրասենյակն ապրանքային նշանին Հայաստանի Հանրապետությունում պահպանություն տրամադրելու մասին որոշում չի ընդունել, կամ պահպանության տրամադրումն ամբողջովին կամ մասնակիորեն մերժելու մասին գրասենյակի որոշման վիճարկման հնարավորությունները սպառված չեն.

6) հայտարկված ապրանքային նշանը նույնական կամ շփոթելու աստիճանի նման է այլ անձի ֆիրմային անվանմանը, որը Հայաստանի Հանրապետությունում այդ անվանման նկատմամբ իրավունք է ձեռք բերել մինչև ապրանքային նշանի հայտը ներկայացնելու թվականը կամ առաջնության թվականը, որոշում է ընդունում հայտարկված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին, եթե գրասենյակի տրամադրության տակ գտնվող տեղեկություններից հետևում է, որ տվյալ անձը մինչև այդ թվականն իրական գործունեություն է իրականացրել նույն կամ նույնատիպ ապրանքների (որոնց համար գրանցման է ներկայացվել ապրանքային նշանը) արտադրության կամ ծառայությունների մատուցման բնագավառում և այդ նույնականությունը կամ նմանությունը կվնասի ֆիրմային անվանման բարի համբավին.

7) հայտարկված ապրանքային նշանը նույնական կամ շփոթելու աստիճանի նման է ավելի վաղ ապրանքային նշանին և գրանցման է ներկայացված ապրանքների և (կամ) ծառայությունների համար, որոնք նույնը կամ նույնատիպ չեն այն ապրանքներին և (կամ) ծառայություններին, որոնց համար գրանցված է ավելի վաղ ապրանքային նշանը, որոշում է ընդունում հայտարկված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին, եթե գրասենյակի տրամադրության տակ գտնվող տեղեկություններից հետևում է, որ ավելի վաղ ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում ունի բարի համբավ և, եթե հայտարկված ապրանքային նշանի օգտագործումն անհիմն առավելությունների կհանգեցնի՝ ավելի վաղ ապրանքային նշանի տարբերակիչ հատկության կամ բարի համբավի շնորհիվ կամ վնաս կհասցնի ավելի վաղ ապրանքային նշանի տարբերակիչ հատկությանը կամ բարի համբավին.

8) հայտարկված ապրանքային նշանը նույնական է կամ շփոթելու աստիճանի նման է հայտարկված ապրանքային նշանի հայտը ներկայացնելու կամ, եթե օրենքի 42-րդ հոդվածի համաձայն խնդրարկվել է առաջնություն այդ առաջնության թվականի դրությամբ նույն կամ նույնատիպ ապրանքների և (կամ) ծառայությունների համար օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչված ապրանքային նշանին, որոշում է ընդունում հայտարկված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին: Եթե ի հայտ բերված ապրանքային նշանը հանրահայտ է ճանաչված հայտում նշված ոչ բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների համար, ապա որոշում է ընդունում մասնակի գրանցման՝ հայտում նշված մնացած ապրանքների և (կամ) ծառայությունների համար հայտարկված ապրանքային նշանը գրանցելու մասին: Նշված մասնակի գրանցման որոշման ընդունման ժամանակ գրասենյակը հաշվի է առնում մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին (ԹՐԻՓՍ (TRIPS) համաձայնագրի (ԹՐԻՓՍ (TRIPS) ստորագրված է 1994 թ. ապրիլի 15-ին՝ Մարաքեշում) 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, որոնց համաձայն հանրահայտ ապրանքային նշանի նկատմամբ իրավունքները գործում են նաև ոչ նույնատիպ ապրանքների և (կամ) ծառայությունների նկատմամբ՝ պայմանով, որ հանրահայտ ապրանքային նշանի օգտագործումը ոչ նույնատիպ ապրանքների և (կամ) ծառայությունների նկատմամբ ցույց կտա դրանց և գրանցված ապրանքային նշանի իրավատիրոջ փոխկապվածություն.

9) հայտարկված ապրանքային նշանը նույնական է կամ շփոթելու աստիճանի նման է ավելի վաղ ապրանքային նշանին, որը գրանցվել է նույն կամ նույնատիպ ապրանքների և (կամ) ծառայությունների համար և չերկարաձգման պատճառով այդ գրանցման գործողությունը դադարեցվել է ապրանքային նշանի հայտը ներկայացնելու թվականին նախորդող երկամյա ժամկետում, որոշում է ընդունում հայտարկված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է ավելի վաղ ապրանքային նշանի իրավատիրոջ համաձայնությունը կամ ապացույց այն մասին, որ վերջինս չի օգտագործում իր ապրանքային նշանը: Եթե ստուգման արդյունքում պարզվում է, որ ավելի վաղ ապրանքային նշանը գրանցվել է քննարկվող հայտում նշված ապրանքների և (կամ) ծառայությունների մի մասի համար, ապա գրասենյակի նշված մոտեցումը կիրառվում է միայն այդ ապրանքների և (կամ) ծառայությունների մասով.

10) հայտարկված ապրանքային նշանը նույնական է կամ նման է Հայաստանի Հանրապետությունում պահպանվող

աշխարհագրական նշմանը ծագման տեղանվանը կամ երաշխավորված ավանդական արտադրանքին, որոշում է ընդունում հայտարկված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին, եթե հայտը ներկայացված է աշխարհագրական նշման ծագման տեղանվանը կամ երաշխավորված ավանդական արտադրանք օգտագործման իրավունք չունեցող անձի կողմից՝ անկախ պահպանությունից հանելու մասին գրառման առկայությունից, ընդ որում՝

ա. մի քանի հայտատուների դեպքում հայտարկված ապրանքային նշանի գրանցումը մերժվում է, եթե նրանցից առնվազն մեկը չունի աշխարհագրական նշման ծագման տեղանվանը կամ երաշխավորված ավանդական արտադրանքի օգտագործման իրավունք,

բ. սույն ենթակետի իմաստով ապրանքային նշանը համարվում է աշխարհագրական նշմանը ծագման տեղանվանը կամ երաշխավորված ավանդական արտադրանքին նման, եթե վերջիններս ներառված են ապրանքային նշանում, և դա պայմանավորված չէ հայտատուի անվանումը կամ գտնվելու վայրը նշելու անհրաժեշտությամբ.

11) հայտարկված ապրանքային նշանը վերարտադրում կամ ներառում է Հայաստանի Հանրապետությունում պահպանվող ավելի վաղ առաջնության թվական ունեցող արդյունաբերական դիզայն կամ արդյունաբերական սեփականության ցանկացած այլ օբյեկտ, որի նկատմամբ բացառիկ իրավունքը պատկանում է այլ անձի, որոշում է ընդունում հայտարկված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին.

12) հայտարկված ապրանքային նշանը վերարտադրում կամ ներառում է հեղինակային իրավունքով պահպանվող գրականության, գիտության կամ արվեստի ստեղծագործություններ, դրանց անվանումներ կամ դրանցից մեջբերումներ ու հատվածներ, դրանց հերոսներ և այդ իրավունքները ձեռք են բերվել մինչև տվյալ ապրանքային նշանի հայտը ներկայացնելու կամ առաջնության թվականը (եթե այդպիսին կա), որոշում է ընդունում հայտարկված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին.

13) հայտարկված ապրանքային նշանը վերարտադրում կամ ներառում է որևէ հայտնի անձի անուն կամ ազգանուն կամ կեղծանուն կամ որևէ անձի պատկեր, եթե դրանց հետ նմանությունը շփոթություն է առաջացնում, որոշում է ընդունում հայտարկված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին.

14) հայտարկված ապրանքային նշանը կարող է շփոթություն առաջացնել հայտը ներկայացնելու թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, որոշում է ընդունում հայտարկված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին, եթե գրասենյակի տրամադրության տակ գտնվող տեղեկություններից հետևում է, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ նաև, եթե ապրանքային նշանի գրանցման նպատակներով հայտատուն ներկայացրել է այնպիսի կեղծ և անհիմն փաստաթղթեր և (կամ) տեղեկություններ, առանց որոնց հնարավոր չէր լինի ապրանքային նշանի գրանցումը:

(111-րդ կետը փոփ., լրաց. 12.10.23 N 1725-Ն)

112. Սույն կարգի 111-րդ կետի 3-4-րդ, 6-րդ և 11-13-րդ ենթակետերում նշված դեպքերում հայտարկված ապրանքային նշանի գրանցումը չի մերժվում, եթե ավելի վաղ ապրանքային նշանի կամ ավելի վաղ իրավունքի տիրապետողը, կամ նրա իրավահաջորդը կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ համապատասխան լիազորություն ունեցող պետական մարմինը տվել է իր գրավոր համաձայնությունը (ներկայացվում է բնօրինակը):

113. Սույն կարգի 111-րդ կետի 6-րդ և 7-րդ ու 14-րդ ենթակետերի իմաստով գրասենյակի տրամադրության տակ գտնվող տեղեկություն համարվում է ցանկացած միջոցներով գրասենյակին հասանելի տեղեկությունը, այդ թվում՝ օրենքի և սույն կարգի համաձայն ստացված առարկությունների ու դիտողությունների մեջ տեղ գտածները:

(113-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

114. Ապրանքային նշանը համարվում է այլ նշանին նույնական, եթե դրանք համընկնում են իրենց բոլոր տարրերով, դրանց փոխդասավորվածությամբ, գույներով և մնացած բոլոր առանձնահատկություններով:

115. Ապրանքային նշանը համարվում է այլ նշանին շփոթելու աստիճանի նման, եթե այն ընդհանուր առմամբ զուգորդվում է դրա հետ (այսինքն՝ մարդու (միջին սպառողի) մոտ առաջացնում է նույն պատկերի, բառի, գույների, դրանց համակցության, իմաստի ընկալման գագաղություն)՝ չնայած առանձին տարբերությունների առկայությանը: Ընդ որում, նշանները համարվում են ընդհանուր առմամբ զուգորդվող, եթե տվյալ նշանների հիմնական տարրերը կամ մասը համընկնում կամ կատարված են այնպես, որ, տեսնելով դրանցից մեկը, միջին սպառողի (այսուհետ՝ սպառող) մոտ առաջանում է պատկերացում մտապատկերված մեկ այլ նշանի մասին, որին ինքն արդեն առնչվել է (ճանաչում է, իրեն հայտնի է): Պետք է հաշվի առնել, որ ապրանքային նշանների առանձին տարբերությունների առկայությունը, որոնք էական դեր չեն կատարում նշանի ընկալման համար, սովորաբար որոշվում է դրանց անմիջական համեմատության արդյունքում և միջին սպառողի համար, որպես կանոն, ընկալելի չեն ապրանքի ընտրության ժամանակ:

116. Սույն կարգի համաձայն ապրանքային նշանների որակումը որպես շփոթելու աստիճանի նման, իրականացվում է միջին սպառողի վրա նրանց թողած տպավորության գնահատմամբ՝ հաշվի առնելով սույն կարգի 118-րդ կետի պահանջները:

117. Սույն կարգի իմաստով միջին սպառողն այն սպառողն է, ում հիշողությունը, ունակություններն ու մասնագիտական պատրաստվածությունը, ընդհանուր վերաբերմունքը գրաֆիկական պատկերների մշակման, համեմատության և գնահատման հարցում խիստ ուղղորդված և արտահայտված չեն:

118. Ապրանքային նշանների շփոթելու աստիճանի նմանությունը որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն

ապրանքների առանձնահատկությունը, որոնց համար գրանցման է ներկայացված նշանը: Եթե նշանը գրանցման է ներկայացված այնպիսի ապրանքների համար, որոնց քաղաքացիական շրջանառությունն իրականացվում է մասնագիտացված կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց միջոցով կամ հատուկ կարգով՝ բացառելով սպառողին շփոթության մեջ գցելու հնարավորությունը, մասնավորապես, հատուկ մասնագետների կամ միայն մասնագիտացված կազմակերպությունների միջոցով, օրինակ՝ բժշկի դեղատոմսերով, դեղատոմսերի գործունեություն իրականացնող կազմակերպությունների միջոցով՝ դեղագետների և դեղագործների կողմից, կամ լավ տեղեկացված կամ մասնագիտացված կազմակերպություններին և (կամ) ֆիզիկական անձանց իրացվող հատուկ ապրանքները, ապա անհրաժեշտ է հաշվի առնել, որ տվյալ պարագայում «շփոթելու աստիճանի նմանությունը» տարածվում և կիրառվում է հատկապես այդ մասնագետների կամ կազմակերպությունների նկատմամբ, այլ ոչ թե բոլոր հնարավոր սպառողների: Եթե նշանը գրանցման է ներկայացված թանկարժեք ապրանքների կամ այնպիսի ապրանքների համար, որոնք չեն համարվում լայն սպառման ապրանքներ, այսինքն՝ յուրաքանչյուր դեպքում, մինչև տվյալ ապրանքի ձեռքբերումը, սպառողը մանրազնին ուսումնասիրում է ապրանքը, ապա շփոթելու աստիճանի նմանությունը որոշելիս պետք է նկատի ունենալ նաև սպառողի անխուսափելի աչալուրջ վերաբերմունքը:

119. Բառային ապրանքային նշաններին նման կարող են համարվել՝

- 1) բառային ապրանքային նշանները.
- 2) համակցված ապրանքային նշանները, որոնց մեջ ընդգրկված են բառային տարրեր.
- 3) ֆիլմային անվանումները:

120. Բառային ապրանքային նշանի և սույն կարգի 119-րդ կետում նշված ապրանքային նշանների և ֆիլմային անվանման նմանությունը որոշելու համար բառային ապրանքային նշանները համեմատվում են՝

- 1) բառային ապրանքային նշանների հետ.
- 2) համակցված ապրանքային նշանների մեջ ընդգրկված բառային տարրերի հետ.
- 3) ֆիլմային անվանումների հետ:

121. Ապրանքային նշանի նմանությունը կարող է լինել ձայնային (հնչյունային), գրաֆիկական (տեսողական) և իմաստային (արտահայտած մտքի):

122. Ձայնային նմանությունը հիմնականում որոշվում է հետևյալ հատկանիշներով՝

- 1) համեմատվող նշաններում մոտ և համընկնող հնչյունների առկայությամբ.
- 2) նշանը կազմող մոտ և համընկնող հնչյունների մոտիկությամբ.
- 3) մոտ հնչյունների և հնչյունային կապակցությունների միմյանց նկատմամբ դասավորվածությամբ.
- 4) համընկնող վանկերի առկայությամբ և դրանց դասավորվածությամբ.
- 5) նշանի մեջ պարունակվող վանկերի ընդհանուր քանակով.
- 6) նշաններում համընկնող հնչյունային կապակցությունների տեղով.
- 7) ձայնավորների կազմի մոտիկությամբ.
- 8) բաղաձայնների կազմի մոտիկությամբ.
- 9) նշանների համընկնող մասերի բնույթով.

10) նշաններից մեկը մյուսի մեջ մտնելով, հատկապես բառային արտահայտությունների, այդ թվում՝ ֆիլմային անվանումների մեջ: Այս դեպքում համընկնող վանկերի առկայության կամ մի նշանը մեկ այլ նշանի մեջ մտնելու դեպքում նմանության ծագման հարցում որոշիչ գործոն է համարվում համընկնող մասերի սկզբնական դիրքը: Որոշ դեպքերում նշանների նման ճանաչման հիմք կարող է հանդիսանալ ինչպես սկզբնամասերի, այնպես էլ վերջնամասերի համընկնումը՝ տարբեր միջնամասերի դեպքում.

11) շեշտադրությամբ:

123. Գրաֆիկական նմանությունը որոշվում է հետևյալ չափանիշներով՝

- 1) ընդհանուր տեսողական տպավորությամբ.
- 2) օգտագործված տառատեսակով.
- 3) տառերի բնույթով պայմանավորված գրաֆիկական գրելաձևով (օրինակ՝ տպագիր կամ ձեռագիր, մեծատառ կամ փոքրատառ, ոճավորումը և այլն).

4) միմյանց նկատմամբ տառերի դասավորվածությամբ.

5) այբուբենով, որի տառերով գրված է բառը.

6) գույնով կամ գունային համակցությամբ:

124. Իմաստային նմանությունը որոշվում է հետևյալ հատկանիշների հիման վրա՝

1) նշանների մեջ դրված նման հասկացության, գաղափարի, այդ թվում՝ տարբեր լեզուներով նշանների համընկնող իմաստի.

2) նշանների տարրերից որևէ համընկնող տարրի, որն առանձին իմաստ ունի և որի վրա ընկնում է տրամաբանական շեշտադրումը.

3) նշանների մեջ դրված հասկացությունների, գաղափարների հակադրության:

125. Սույն կարգի 122-124-րդ կետերում թվարկված հատկանիշները հաշվի են առնվում ինչպես առանձին, այնպես էլ տարբեր համակցություններում:

126. Պատկերային և ծավալային ապրանքային նշաններին նման կարող են լինել՝

- 1) պատկերային ապրանքային նշանները.

- 2) ծավալայինների ապրանքային նշանները.
- 3) համակցված ապրանքային նշանները, որոնց կազմության մեջ մտնում են պատկերային կամ ծավալային տարրեր: 127. Պատկերային և ծավալային նշանների նմանությունը որոշվում է հետևյալ հատկանիշներով՝

- 1) արտաքին տեսքով.
- 2) սիմետրիայի առկայությամբ կամ բացակայությամբ.
- 3) իմաստային նշանակությամբ.
- 4) պատկերի տեսքով և բնույթով (նատուրալիստական, ոճավորված, ծաղրանկարային և այլն).
- 5) գույների և երանգների գուգադրմամբ.

6) համեմատվող նշաններում մոտ և համընկնող պատկերների (տարրերի) առկայությամբ և միմյանց նկատմամբ դասավորվածությամբ.

7) նշանների համընկնող մասերի բնույթով.

8) նշաններից մեկը մյուսի մեջ մտնելով.

9) նշանների տարրերից (պատկերներից) որևէ համընկնող տարրով (պատկերով), որն առանձին իմաստ ունի, և որի վրա ընկնում է տրամաբանական շեշտը:

128. Թվարկված հատկանիշները հաշվի են առնվում ինչպես առանձին, այնպես էլ տարբեր գուգակցություններով: Նշանների նմանությունը նմանակելու երևույթ է, որն առաջանում է նշանների տարրերի միատեսակ ընկալման արդյունքում: Նշանների նմանությունը որոշվում է դրանց տարրերի ընդհանրությամբ: Նմանության աստիճանի վրա ազդեցություն է թողնում համընկնող և չհամընկնող տարրերի հարաբերակցությունը, ինչպես նաև դրանց նշանակությունը նշանի ընդհանուր հորինվածքում:

129. Ապրանքային նշանների նմանության առավել ընդհանուր չափանիշը սնտեսական շրջանառության ընթացքում սպառողի կողմից դրանք շփոթելու հնարավորությունն է: Նշանի նմանությունը որոշելիս հաշվի է առնվում, որ սպառողը, որպես կանոն, հնարավորություն չունի համեմատելու երկու նշանները, այլ առաջնորդվում է նախկինում տեսած նշանի մասին ունեցած ընդհանուր տպավորությամբ:

130. Համակցված ապրանքային նշաններին նման կարող են լինել՝

- 1) համակցված ապրանքային նշանները.
- 2) ապրանքային նշանների այն տեսակները, որոնք որպես տարրեր ներառված են ստուգվող համակցված ապրանքային նշանի մեջ:

131. Համակցված նշանների նմանությունը որոշելիս օգտագործվում են սույն կարգի 120-128-րդ կետերում թվարկված հատկանիշները, ինչպես նաև ուսումնասիրվում է հայտարկված ապրանքային նշանի մեջ նույնական կամ նման տարրի զբաղեցրած տեղի (դիրքի) նշանակությունը:

132. Համակցված ապրանքային նշանների նմանությունը որոշելիս հաշվի է առնվում դրանց մեջ առկա բառային տարրերի նմանության հարցն առանձին վերցված, եթե դրանց մեջ տվյալ տարրերը հանդիսանում են հիմնական ընկալման տարրեր կամ տվյալ նշանների այնպես կոչված «առաջնային ընկալման» տարրեր կամ «անվանումներ»:

133. Համակցված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե առկա է ավելի վաղ առաջնության թվական ունեցող իրավական պահպանություն ստացած ապրանքային նշան, որի հիմնական ընկալման բառային տարրը շփոթելու աստիճանի նման է հայտարկված նշանի հիմնական ընկալման բառային տարրին, այդ թվում՝ նաև այն դեպքերում, երբ այդ բառային տարրերը գրված են տարբեր լեզուներով: Այս դեպքում հայտարկված ապրանքային նշանը կարող է գրանցվել միայն ավելի վաղ առաջնության թվական ունեցող իրավական պահպանություն ստացած ապրանքային նշանի իրավատիրոջ համաձայնությամբ (ներկայացվում է փաստաթղթի բնօրինակը):

134. Ապրանքների նույնատիպությունը որոշելիս պարզվում է նույն կամ շփոթելու աստիճանի նման նշաններով դրանց վաճառքի ժամանակ նույն անձի (արտադրողի) կողմից թողարկվելու հարցում սպառողի մոտ պատկերացում առաջանալու սկզբունքային հնարավորությունը: Փորձաքննության ընթացքում փորձագետը հաշվի է առնում այն հանգամանքը, թե որքանով է հայտնի գրանցման ներկայացված, ինչպես նաև հայտնաբերված նույնական և շփոթելու աստիճանի նման նշանը: Եթե ի հայտ է եկել ավելի վաղ առաջնությամբ սահմանված կարգով հանրահայտ ճանաչված նշան, ապա նոր ներկայացված նշանի գրանցումը մերժվում է նույնիսկ այն դեպքում, երբ ապրանքները, որոնք նշված են այդ նշանով, նույնատիպ չեն, եթե դա սպառողին մոլորության մեջ է գցում և պատճառ դառնում այդ ապրանքների և գրանցված կամ առանց գրանցման պահպանվող կամ Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ համարվող ապրանքային նշանի սեփականատիրոջ միջև կապ ենթադրելու՝ հաշվի առնելով, որ դա կարող է վնաս հասցնել վերջինիս շահերին:

135. Ապրանքի ծագման հարցում շփոթություն առաջացնելու հնարավորությունը քիչ հավանական է, եթե նույնիսկ միմյանցից զգալիորեն տարբերվող ապրանքների նկատմամբ կիրառված են նույնական նշաններ: Այս կապակցությամբ ապրանքների նույնատիպ լինելը որոշելիս հաշվի է առնվում ապրանքի տեսակն ու սովորական ծագումը, ապրանքի օգտագործման բնագավառը, նյութի տեսակը, որից դրանք պատրաստված են, ապրանքի իրացման կետերը (ցանցը) և պայմանները, սպառողների շրջանակը և այլ հատկանիշներ:

136. Եթե տարբեր ապրանքներ պատրաստվում են նույն տեսակի սուբյեկտների կողմից, կամ եթե սպառողները հակված են կարծելու, որ սովորաբար դրանք թողարկվում են նույն սուբյեկտի կողմից, հիմնականում կհամարվի, որ դրանք ընդհանուր ծագում ունեն:

137. Նույնատիպ ապրանքներ համարվում են նույն սեռին, տեսակին վերաբերող այն ապրանքները, որոնք նման

ապրանքային նշանով նշելու դեպքում սպառողի կողմից ընկալվում են որպես նույն ընկերության արտադրանք:

138. Ապրանքների նույնատիպ լինելը որոշելիս հաշվի են առնվում ապրանքի տեսակը, ապրանքի պատրաստման առանձնահատկությունները (տեխնոլոգիական), ապրանքի օգտագործման բնագավառը, ապրանքի իրացման պայմանները (իրացման ոլորտը և կարգը):

139. Ապրանքների նույնականությունը և նույնատիպությունը որոշելիս փորձաքննության ընթացքում հաշվի է առնվում, որ նույնատիպ ապրանքները, որոնց համար անցկացվում է ներկայացված ապրանքային նշանի փորձաքննությունը, վերաբերում են տարբեր դասերի: Այդ պատճառով նույնական կամ շփոթելու աստիճանի նման ապրանքային նշան հայտնաբերելիս փորձագետն անմիջականորեն ստուգում է ապրանքների ցանկով անկախ այն դասերից, որոնց վերաբերում է տվյալ ապրանքային նշանը: Օրինակ՝ վառիչներն ընդհանրապես վերաբերում են 11-րդ դասին, իսկ ծխողների համար վառիչները՝ 34-ին, կտորից պայուսակները վերաբերում են 24-րդ դասին, իսկ կաշվից պայուսակները՝ 18-ին:

140. Եթե փորձաքննության ընթացքում պարզվում է, որ սույն կարգի 111-րդ կետի 1-4-րդ, 6-14-րդ ենթակետերի համաձայն ներկայացված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման ամբողջովին կամ մասնակիորեն, գրանցումը կարող է կատարվել հայտատուի որոշակի իրավունքների սահմանափակմամբ, օրինակ՝ առաջնության իրավունքի, օրենքի 45-րդ հոդվածի 13-րդ մասին համապատասխան գրասենյակը դրա մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է հայտատուին կամ նրա ներկայացուցչին (համապատասխան դեպքում)՝ այդ կապակցությամբ իր նկատառումները կամ ապրանքային նշանի գրանցման օգտին իր փաստարկները կամ լրացուցիչ նյութերը երկամսյա ժամկետում ներկայացնելու առաջարկությամբ:

(140-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

141. Ծանուցման մեջ նշված գրասենյակի կարծիքը որևէ հարցի շուրջ պետք է հիմնավորված լինի, մասնավորապես, օրենքից, սույն կարգից կամ այլ իրավական ակտից՝ համապատասխան վկայակոչումներով:

(141-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

142. Եթե փորձաքննության ընթացքում հայտատուի ներկայացրած ցանկացած փաստաթղթի կամ տեղեկության հավաստիության նկատմամբ ծագում են հիմնավոր կասկածներ, փորձագետն իրավունք ունի հայտատուից պահանջելու անհրաժեշտ հիմնավորումներ:

143. Մահմանված ժամկետում ծանուցումն անպատասխան թողնվելու և այդ ընթացքում նշված ժամկետը երկարաձգելու մասին դիմում չներկայացվելու դեպքում ծանուցմանը համապատասխան ներկայացված ապրանքային նշանի գրանցումը մերժվում է, կամ գրանցումը կատարվում է մասնակի կամ իրավունքի սահմանափակմամբ:

144. Եթե փորձաքննության արդյունքում պարզվում է, որ՝

1) հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ մերժման հայտում նշված բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների համար օրենքի 9-րդ կամ 10-րդ հոդվածներով (հաշվի առնելով սույն կարգի 24-46-րդ և 75-138-րդ կետերը) սահմանված մերժման բացարձակ և (կամ) հարաբերական հիմքերի բացակայության պատճառով, ապա գրասենյակը որոշում է ընդունում հայտում նշված բոլոր ապրանքների համար ապրանքային նշանը գրանցելու մասին.

2) հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ մերժման՝ հայտում նշված ապրանքների և (կամ) ծառայությունների մի մասի համար օրենքի 9-րդ և (կամ) 10-րդ հոդվածներով (հաշվի առնելով սույն կարգի 24-46-րդ և 75-138-րդ կետերը) սահմանված մերժման բացարձակ և (կամ) հարաբերական հիմքերի առկայության պատճառով, ապա գրասենյակը որոշում է ընդունում հայտում նշված ապրանքների և (կամ) ծառայությունների մի մասի համար հայտարկված ապրանքային նշանը գրանցելու մասին (մասնակի գրանցում).

3) հայտարկված ապրանքային նշանը պարունակում է տարբեր, որոնք տարբերակիչ հատկություն չունեն ու օրենքի 9-րդ հոդվածով սահմանված հիմքերով չեն կարող առանձին գրանցվել որպես ապրանքային նշան, և դրանց ներառումն ապրանքային նշանում կարող է կասկածներ առաջացնել ապրանքային նշանի պահպանության ծավալի վերաբերյալ, իսկ հայտատուն չի հայտարարել դրանց ինքնուրույն պահպանություն չտրամադրելու մասին, և սույն կարգի 107-րդ կետի համաձայն հայտատուն ծանուցվել է, ապա ապրանքային նշանի գրանցման մասին որոշում ընդունվում է՝ համաձայն սույն կարգի 108-109-րդ կետերի: Ընդ որում, ապրանքային նշանի չպահպանվող տարրերի հետ միասին, օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված նախագրուշական գրառումները, որոնք, չնայած, ըստ էության չպահպանվող տարրեր են, կարող են չնշվել որպես այդպիսիք, քանի որ օրենքի 12-րդ հոդվածով դրանց օգտագործումը թույլատրված է բոլոր ապրանքային նշանների իրավատերերին:

(144-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

145. Եթե գրանցվող ապրանքային նշանը բառային արտահայտություն է, որն ունի որևէ իմաստ, ապա ապրանքային նշանը պահպանվում է իր ամբողջության մեջ, առանց դրանում ներառված առանձին բառերին կամ բառակապակցություններին ինքնուրույն պահպանություն ընձեռելու՝ անկախ որոշման մեջ դրա մասին հատուկ գրառման առկայությունից: Այսինքն՝ իմաստ ունեցող բառային արտահայտության գրանցման դեպքում ապրանքային նշանի նկատմամբ դրա իրավատիրոջ բացառիկ իրավունքը տարածվում է միայն տվյալ բառային արտահայտության վրա, այլ ոչ թե նաև՝ դրանում ներառված առանձին բառերի կամ բառակապակցությունների վրա:

146. Եթե գրանցվող ապրանքային նշանն իմաստ չունեցող բառային արտահայտություն է (բառերի խումբ), ապա ապրանքային նշանը պահպանվում է իր ամբողջության մեջ, իսկ որոշման մեջ նշվում են այն բառերը, որոնք առանձին պահպանության ենթակա չեն, եթե այդպիսիք կան: Այս դեպքում արտահայտության մեջ մտնող առանձին բառերից կազմված հնարավոր կապակցությունները (խմբերը) ևս ինքնուրույն պահպանության ենթակա չեն՝ անկախ որոշման մեջ

դրա մասին հատուկ գրառման առկայությունից:

147. Եթե գրանցվող ապրանքային նշանը բառային է, որը տարբեր լեզուներով նույն բառի կամ բառային արտահայտության թարգմանությունների կամ տառադարձությունների համակցություն է, ապա ապրանքային նշանին պահպանություն տրամադրվում է իր ամբողջության մեջ: Այս դեպքում ապրանքային նշանում ներառված բառի կամ բառային արտահայտության որևէ լեզվով թարգմանությունը կամ տառադարձությունը չի դիտարկվում որպես առանձին գրանցված ապրանքային նշան:

148. Մույն կարգի 145-րդ և 146-րդ կետերում նշված մոտեցումները կիրառվում են նաև ապրանքային նշանում ներառված թվային արտահայտությունների և տառակապակցությունների նկատմամբ:

149. Ապրանքային նշանի գրանցման մասին որոշման մեջ թվարկվում է նաև այն գույնը կամ գույների համակցությունը, որով կատարված է գրանցվող նշանը: Ընդ որում, սև-սպիտակ նշանների դեպքում որևէ գրառում չի կատարվում:

150. Ապրանքային նշանի գրանցման մասին որոշումը կարող է վերանայվել մինչև դրա պետական գրանցման թվականը՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան ավելի վաղ առաջնությամբ հայտի ստացման կապակցությամբ, մասնավորապես, «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» փարիզյան կոնվենցիային, «Նշանների միջազգային գրանցման մասին» մադրիդյան համաձայնագրին կամ դրա արձանագրությանը համապատասխան:

151. Հայտի ըստ էության փորձաքննության արդյունքում սույն կարգի 111-րդ կետի 1-ին, 3-րդ, 6-14-րդ ենթակետերին համապատասխան ապրանքային նշանի գրանցումը մերժելու կամ մասնակի գրանցելու մասին որոշումն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում, օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն, հայտատուն կամ նրա ներկայացուցիչը կարող է դիմում ներկայացնել գրասենյակ՝ կրկնական փորձաքննություն անցկացնելու խնդրանքով՝ բերելով հիմնավոր փաստարկներ:

(151-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

152. Օրենքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նշված ժամկետը հայտատուի խնդրանքով կարող է երկարաձգվել ոչ ավելի, քան 6 ամսով, եթե դրա մասին դիմումն ստացվել է մինչև այդ ժամկետի ավարտը:

153. Եթե հայտատուի խնդրանքով կրկնական փորձաքննություն խնդրարկելու ժամկետը երկարաձգվում է, սակայն մինչև դրա լրանալը հայտատուն կրկնական փորձաքննություն չի խնդրարկում, ապա տվյալ հայտով գործավարությունն այլևս չի շարունակվում, և փորձաքննության որոշումը մնում է անփոփոխ, ինչի մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցվում է հայտատուն:

154. Գրասենյակը կրկնական փորձաքննություն անցկացնելու մասին դիմումն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում քննարկում է ներկայացված փաստարկները և որոշում է ընդունում՝

- 1) չեղյալ ճանաչել նախորդ որոշումը և գրանցել ապրանքային նշանը հայտում նշված բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների կամ դրանց մի մասի համար, կամ
- 2) ուժի մեջ թողնել ապրանքային նշանի գրանցումը մերժելու կամ մասնակի գրանցման մասին որոշումը:

(154-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

155. Կրկնական փորձաքննության արդյունքում ընդունված որոշման մասին գրասենյակը երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցում է հայտատուին կամ նրա ներկայացուցչին (ներկայացուցչի առկայության դեպքում):

(155-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

156. Ապրանքային նշանի մասնակի գրանցման մասին որոշումն ստանալուց հետո հայտատուի կողմից ապրանքային նշանի գրանցման համար պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը սահմանված ժամկետում ներկայացնելը գնահատվում է որպես տվյալ որոշման հետ համաձայնություն և կրկնական փորձաքննության խնդրարկման իրավունքից հրաժարման հաստատում, որից հետո կրկնական փորձաքննություն խնդրարկելու մասին դիմումը չի ընդունվում քննարկման:

157. Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ապրանքային նշանի առաջնությունը սահմանվում է հայտը գրասենյակ ներկայացնելու թվականով, այսինքն՝ հայտը ներկայացնելու թվականով:

(157-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

158. Մույն կարգի 157-րդ կետի համաձայն ապրանքային նշանի առաջնությունը սահմանելու դեպքում ապրանքային նշանի տվյալ հայտի քննարկման ընթացքում ընդունված որոշումներում, ուղարկվող ծանուցումներում, հայտը և գրանցման մասին տվյալները հրապարակելիս առաջնության թվականը գրասենյակին առանձին չի նշում:

(158-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

159. Օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ապրանքային նշանի միջազգային առաջնություն խնդրարկվելու դեպքում գրասենյակին ապրանքային նշանի առաջնությունը սահմանում է հետևյալ կերպ՝

1) եթե նախնական փորձաքննության ընթացքում պարզվում է, որ նշված են հայտի 6-րդ, 6.1-ին կետերի վանդակները, լրացված են 6.3-6.5-րդ կետերը, ինչպես նաև նշված են 6.6-րդ, 6.8-րդ կետերի վանդակները և դրանց համապատասխան ներկայացված հայտին կցված են առաջին հայտի պատճենը, որը վավերացված է այն մարմնի կողմից, որտեղ այն ներկայացված է և դրա թարգմանությունը, ինչպես նաև օրենքով սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը, գրասենյակին ստուգում է ներկայացված հայտում նշված ապրանքների և (կամ) ծառայությունների համապատասխանությունն առաջին հայտում նշվածներին և վճարված պետական տուրքի համապատասխանությունն օրենքով սահմանված չափին: Պետական տուրքի վճարման ստուգումն իրականացվում է՝

կիրառելով սույն կարգի 35-37-րդ կետերի դրույթները: Եթե ստուգման արդյունքում պարզվում է, որ վճարված պետական տուրքը համապատասխանում է օրենքով սահմանված չափին, կամ դա համապատասխանեցվել է սույն կարգի 37-րդ կետի դրույթների համաձայն, և՛

ա. քննարկվող հայտում նշված բոլոր ապրանքները և (կամ) ծառայությունները համընկնում են առաջին հայտում նշված ապրանքներին և (կամ) ծառայություններին կամ ներառված են դրանց ցանկում՝ հայտարկված ապրանքային նշանի առաջնությունը գրասենյակը սահմանում է առաջին հայտը ներկայացնելու թվականով,

բ. առաջին հայտում առկա են միայն քննարկվող հայտում նշված ապրանքների և (կամ) ծառայությունների մի մասը՝ համընկնող ապրանքների և (կամ) ծառայությունների համար հայտարկված ապրանքային նշանի առաջնությունը գրասենյակը սահմանում է առաջին հայտը ներկայացնելու թվականով: Այս դեպքում քննարկվող հայտում նշված մնացած ապրանքների և (կամ) ծառայությունների համար հայտարկված ապրանքային նշանի առաջնությունը սահմանվում է սույն կարգի 157-րդ կետի համաձայն.

2) եթե նախնական փորձաքննության ընթացքում պարզվում է, որ նշված են հայտի 6-րդ և 6.2-րդ կետերը և դրան կից ներկայացված են միջազգային ցուցահանդեսի կազմակերպչի կողմից տրված հավաստագրի (վկայագրի)՝ սահմանված կարգով վավերացված պատճենը, որտեղ առաջին անգամ այդ ապրանքային նշանի ներքո ցուցադրվել են ապրանքները և (կամ) ծառայությունները և դրան վերաբերող անհրաժեշտ մանրամասներ, մասնավորապես, ցուցահանդեսի կազմակերպչի կողմից տրված՝ ցուցահանդեսում ցուցադրված ապրանքների և (կամ) ծառայությունների նույնականացումը հաստատող փաստաթղթեր և տվյալներ (այսուհետ՝ նույնականացման փաստաթուղթ), գրասենյակն ստուգում է ներկայացված հայտում նշված ապրանքների և (կամ) ծառայությունների համապատասխանությունը ցուցահանդեսում այդ ապրանքային նշանի ներքո ցուցադրված ապրանքներին և (կամ) ծառայություններին: Եթե ստուգման արդյունքում պարզվում է, որ՝

ա. քննարկվող հայտում նշված բոլոր ապրանքները և (կամ) ծառայությունները համընկնում են նույնականացման փաստաթղթում նշված ապրանքներին և (կամ) ծառայություններին կամ ներառված են դրանց ցանկում՝ հայտարկված ապրանքային նշանի առաջնությունը գրասենյակը սահմանում է ցուցահանդեսում հայտարկված ապրանքային նշանի ներքո ապրանքները և (կամ) ծառայությունները ցուցադրելու թվականով,

բ. նույնականացման փաստաթղթում առկա են միայն քննարկվող հայտում նշված ապրանքների և (կամ) ծառայությունների մի մասը՝ համընկնող ապրանքների և (կամ) ծառայությունների համար հայտարկված ապրանքային նշանի առաջնությունը գրասենյակը սահմանում է ցուցահանդեսում հայտարկված ապրանքային նշանի ներքո ապրանքները և (կամ) ծառայությունները ցուցադրելու թվականով: Այս դեպքում քննարկվող հայտում նշված մնացած ապրանքների և (կամ) ծառայությունների համար հայտարկված ապրանքային նշանի առաջնությունը սահմանվում է սույն կարգի 157-րդ կետի համաձայն:

(159-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

160. Սույն կարգի 159-րդ կետի համաձայն սահմանված միջազգային առաջնության կամ ցուցահանդեսային առաջնության տվյալները նշվում են հայտը հրապարակելիս, ինչպես նաև ապրանքային նշանի՝ տվյալ հայտի քննարկման ընթացքում հետագայում ընդունված որոշումներում և ապրանքային նշանի գրանցման մեջ, դրա մասին տվյալները հրապարակելիս, ինչպես նաև գրանցման վկայագրում:

161. Եթե ապրանքային նշանի միջազգային կամ ցուցահանդեսային առաջնություն խնդրարկելու մասին դիմումը և օրենքի 42-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված փաստաթղթերը ներկայացվում են հայտը ներկայացվելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն կարգի 28-րդ կետին համապատասխան հայտը հրապարակելու և, ըստ էության, փորձաքննություն անցկացնելու մասին որոշման ընդունումը, ապա գրասենյակը դրանք քննարկում է սույն կարգի 159-րդ կետի համաձայն՝ նախապես ստուգելով դրանք ներկայացնելու ժամկետների համապատասխանությունը օրենքի 42-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջներին, և սահմանված առաջնության տվյալները հետագայում նշվում են սույն կարգի 160-րդ կետի համաձայն:

(161-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

162. Եթե ապրանքային նշանի միջազգային կամ ցուցահանդեսային առաջնություն խնդրարկելու մասին դիմումը և օրենքի 42-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված փաստաթղթերը ներկայացվում են հայտը ներկայացվելուց հետո, սույն կարգի 28-րդ կետին համապատասխան հայտը հրապարակելու և, ըստ էության, փորձաքննություն անցկացնելու մասին որոշման ընդունումից հետո, ապա գրասենյակը դրանք քննարկում է սույն կարգի 159-րդ կետի համաձայն՝ նախապես ստուգելով դրանք ներկայացնելու ժամկետների համապատասխանությունը օրենքի 42-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջներին: Այս դեպքում սահմանված առաջնության տվյալները նշվում են սույն կարգի 160-րդ կետի համաձայն՝ բացառությամբ հայտը հրապարակելիս:

(162-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

163. Սույն կարգի 159-162-րդ կետերի դրույթները կիրառվում են բոլոր այն դեպքերում, երբ ապրանքային նշանի միջազգային կամ ցուցահանդեսային առաջնություն խնդրարկվում է առնվազն մեկ ապրանքի կամ ծառայության համար, որը նշված է հայտում՝ անկախ դրա մեջ այլ ապրանքների և (կամ) ծառայությունների նշված լինելու հանգամանքից:

164. Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան, հայտատուի գրավոր դիմումի համաձայն, գրասենյակի ծանուցմամբ պահանջված նյութերը ներկայացնելու կամ օրենքով սահմանված և (կամ) դրանից բխող այլ գործողության իրականացման համար նախատեսված ժամկետը երկարաձգվում է ոչ ավելի, քան 6 ամսով:

(164-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

165. Դիմումը, որին կցվում է այն ներկայացնելու համար սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը, գրասենյակ ներկայացվում է մինչև նախատեսված ժամկետի ավարտը:

(165-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

166. Ժամկետի երկարաձգման մասին դիմումի մեջ նշվում է, թե ինչքան ժամանակով է խնդրարկվում ժամկետի երկարաձգումը, որը չի կարող 6 ամսվանից ավելի լինել: Դիմումի մեջ նման նշում չլինելու դեպքում գրասենյակը ժամկետը երկարաձգում է 6 ամսով: Նախատեսված ժամկետի երկարաձգման մասին հայտատուն երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցվում է գրավոր:

(166-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

167. Նախատեսված ժամկետը չի երկարաձգվում, եթե դիմումն ստացվել է այն ներկայացնելու համար սահմանված ժամկետի խախտմամբ կամ չի ներկայացվել սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը: Եթե վճարված պետական տուրքի գումարը չի համապատասխանում «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափին, հայտատուին երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է ծանուցագիր՝ պակաս վճարված գումարը երկամսյա ժամկետում վճարելու առաջարկությամբ: Այդ ժամկետում նշված գումարը չվճարելու դեպքում դիմումը մերժվում է, և նախատեսված ժամկետը չի երկարաձգվում, ինչի մասին հայտատուն երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցվում է:

168. Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն որևէ գործողության իրականացման համար նախատեսված ժամկետը չպահպանելու դեպքում հայտատուն կարող է դիմում ներկայացնել գրասենյակ՝ բաց թողնված ժամկետի վերականգնման և գործընթացը շարունակելու համար՝ չկատարված գործողությունը երկամսյա ժամկետում իրականացնելու պայմանով:

(168-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

169. Դիմումը, որին կցվում է այն ներկայացնելու համար սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը, գրասենյակ ներկայացվում է բաց թողնված ժամկետի ավարտից երկամսյա ժամկետում, որի համաձայն վերականգնված ժամկետի մասին գրասենյակը երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է հայտատուին:

(169-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

170. Բաց թողնված ժամկետը չի վերականգնվում, եթե դիմումն ստացվել է այն ներկայացնելու համար սահմանված ժամկետի խախտմամբ, կամ չի ներկայացվել սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը: Եթե վճարված պետական տուրքի գումարը չի համապատասխանում «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափին, հայտատուին երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է ծանուցագիր՝ պակաս վճարված գումարը երկամսյա ժամկետում վճարելու առաջարկությամբ: Այդ ժամկետում նշված գումարը չվճարելու դեպքում դիմումը մերժվում է, և բաց թողնված ժամկետը չի վերականգնվում, ինչի մասին հայտատուն երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցվում է:

171. Օրենքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն չեն երկարաձգվում և չեն վերականգնվում այն ժամկետները, որոնք սահմանված են օրենքի՝

1) 55-րդ հոդվածի 1-ին մասով՝

ա. օրենքով սահմանված և (կամ) դրանից բխող գործողության իրականացման համար նախատեսված ժամկետի երկարաձգման ժամկետը,

բ. որևէ գործողության իրականացման համար նախատեսված ժամկետը չպահպանելու դեպքում բաց թողնված ժամկետի վերականգնման ժամկետը.

2) 19-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը երկարաձգելու մասին դիմումն ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետի ավարտից հետո վեց ամսվա ընթացքում ներկայացնելու ժամկետը.

3) 41-րդ հոդվածի 2-րդ մասով՝ հայտը ներկայացնելու թվականը սահմանելու համար ներկայացված փաստաթղթերը սահմանված պահանջներին համապատասխանեցնելու համար երկամսյա ժամկետը.

4) 42-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերով՝ միջազգային և ցուցահանդեսային առաջնություն սահմանելու համար 6-ամսյա ժամկետը և համապատասխան դիմումը և հիմքերը ներկայացնելու երկամսյա և եռամսյա ժամկետները.

5) 43-րդ հոդվածի 2-րդ մասով՝ հայտի նախնական փորձաքննության ընթացքում գրասենյակի ծանուցման համաձայն հայտատուի կողմից անհամապատասխանությունները վերացնելու երկամսյա ժամկետը.

6) 47-րդ հոդվածի 5-րդ մասով՝ բողոքարկման խորհրդի որոշումը դատական կարգով վիճարկելու 6-ամսյա ժամկետը.

7) 44-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով՝ ապրանքային նշանի գրանցման դեմ առարկությունների և դիտողությունները ներկայացնելու, հայտի հրապարակման օրվանից երկամսյա ժամկետը.

8) 46-րդ հոդվածի 5-րդ մասով՝ առարկությունների և դիտողությունների քննարկման արդյունքում գրասենյակի որոշումները դատական կարգով վիճարկելու անվավեր ճանաչելու ժամկետները.

9) 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ապրանքային նշանների միջազգային գրանցման դեմ առարկություններ և դիտողություններ ներկայացնելու 6-ամսյա ժամկետը.

10) 65-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ միջազգային գրանցումն ազգային փոխակերպման համար հայտ ներկայացնելու եռամսյա ժամկետը:

(171-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

172. Օրենքի 54-րդ հոդվածի համաձայն հայտատուն կամ նրա ներկայացուցիչը, որը չնայած բարեխիղճ ձեռնարկած միջոցներին չի կարողացել պահպանել գրասենյակում գործընթացի իրականացման ժամկետները, կարող է իր իրավունքների վերականգնման մասին դիմում ներկայացնել, եթե ժամկետի բացթողումը հանգեցնում է օրենքի համաձայն որևէ իրավունքի կամ բողոքարկման հնարավորության ուղղակի կորստի:

(172-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

173. Իրավունքների վերականգնման մասին դիմումը գրասենյակ ներկայացվում է գրավոր, ժամկետների բացթողմանը հանգեցնող հանգամանքների դադարման թվականից երկամսյա ժամկետում, որի ընթացքում իրականացվում է նաև չկատարված գործողությունը: Իրավունքների վերականգնման մասին դիմումը կարող է ներկայացվել ոչ ուշ, քան բաց թողնված ժամկետը լրանալու օրվանից մեկ տարվա ընթացքում: Իրավունքների վերականգնման մասին դիմումը պետք է լինի հիմնավորված ու պարունակի փաստեր և ապացույցներ, որոնք կարողարացնեն ժամկետները չպահպանելը: Դիմումը համարվում է ներկայացված՝ օրենքով սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը ներկայացնելու դեպքում:

(173-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

174. Իրավունքների վերականգնման մասին դիմումը գրասենյակը քննարկում է այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե քննարկման արդյունքում պարզվում է, որ դիմումը ներկայացվել է սահմանված ժամկետի խախտմամբ, կամ բացակայում են ժամկետների բացթողումն արդարացնող փաստեր և ապացույցներ, կամ այն վերաբերում է ապրանքային նշանի գրանցման դեմ դիտողություններ և առարկություններ ներկայացնելու՝ հայտի հրապարակման թվականից երկամսյա ժամկետը չպահպանելուն, կամ օրենքի 63-րդ հոդվածում նշված՝ ապրանքային նշանի միջազգային գրանցմանը վերաբերող ժամկետները չպահպանելուն, գրասենյակը որոշում է ընդունում դիմումը մերժելու մասին:

(174-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

175. Օրենքի 54-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն իրավունքների վերականգնման մասին դիմումը մերժվում է նաև այն դեպքում, երբ հայտի նկատմամբ իրավունքի դադարեցման թվականից մինչև իրավունքի վերականգնման մասին դիմում ներկայացնելու թվականն ընկած ժամանակահատվածում ապրանքային նշանի գրանցման այլ հայտ է ներկայացվել, որն օրենքի և սույն կարգի համաձայն կարող է հակադրվել:

176. Գրասենյակի ծանուցման հիման վրա հայտատուի կողմից լրացուցիչ նյութեր ներկայացնելու դեպքում ստուգվում է դրանք ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետի պահպանումը, որը նշված նյութերը ներկայացնելու մասին ծանուցումը հայտատուի կողմից ստանալու օրվանից հաշված երկու ամիս է:

(176-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

177. Եթե հայտատուն խախտել է սահմանված ժամկետը և սույն կարգի 164-167-րդ կետերին համապատասխան չի ներկայացրել դրա երկարաձգման մասին խնդրագիր, կամ փորձաքննության ծանուցումը թողել է անպատասխան, ապա հայտը համարվում է հետ կանչված, ինչի մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցվում է հայտատուն:

178. Փորձաքննության ծանուցմանը համապատասխան կամ հայտատուի նախաձեռնությամբ ներկայացված լրացուցիչ նյութերը քննարկման ընդունվելու դեպքում ստուգվում է, թե արդյոք այդ նյութերն էապես չեն փոխում ներկայացված հայտը:

179. Լրացուցիչ նյութերը ճանաչվում են հայտն ըստ էության փոփոխող, եթե փոփոխությունը վերաբերում է հայտարկված նշանի ամբողջական կամ նրա հիմնական ընկալման (այսինքն՝ կենտրոնական դիրք զբաղեցնող) տարրին, ինչպես նաև գերիշխող տարրերի ընկալմանը: Այդպիսի փոփոխությունների թվին են պատկանում, մասնավորապես, բառային կամ հիմնական պատկերային տարրը նշանի մեջ ընդգրկելը կամ նշանից հանելը, բառի տարրի հնչյունաբանական կամ իմաստային փոփոխությունը, հիմնական պատկերային տարրի գրաֆիկական կամ իմաստային փոփոխությունը:

180. Լրացուցիչ նյութերը ճանաչվում են հայտն ըստ էության փոփոխող նաև այն դեպքում, եթե դրանք ենթադրում են ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկի համալրում՝ հայտում նշված ապրանքներին և (կամ) ծառայություններին ոչ նույնատիպ ապրանքներով և (կամ) ծառայություններով:

181. Եթե լրացուցիչ նյութերը ճանաչվել են որպես հայտն ըստ էության փոփոխող, ապա մինչև գրանցման մասին կամ գրանցման մերժման մասին որոշում ընդունելը հայտատուն երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցվում է այն մասին, թե լրացուցիչ նյութերի որ տվյալներն են հիմք ծառայել փորձաքննության այդպիսի եզրակացության համար: Մնացած տեղեկությունները հաշվի են առնվում փորձաքննության ընթացքում:

182. Օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն հայտի քննարկման ցանկացած փուլում հայտատուն կամ նրա ներկայացուցիչը կարող է հետ կանչել հայտը:

183. Գրասենյակը հայտը հետ կանչված համարում է դրա մասին հայտատուի կամ նրա ներկայացուցչի ներկայացրած գրավոր դիմումի հիման վրա ընդունված որոշմամբ: Հայտը հետ կանչված համարվում է գրասենյակի որոշման ընդունման օրվանից, որում նշվում է հետկանչման հիմքը:

(183-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

184. Հետ կանչված համարված հայտով գործավարությունը դադարեցվում է, իրավաբանական նշանակություն ունեցող որևէ գործողություն չի կատարվում, փորձաքննություն չի անցկացվում, և ապրանքային նշանը չի գրանցվում: Այլ հայտերի փորձաքննության ընթացքում հետ կանչված համարված հայտը հաշվի չի առնվում:

185. Սույն կարգի 184-րդ կետի դրույթները գործում են նաև այն հայտերի նկատմամբ, որոնք սույն կարգի 27-րդ, 36-րդ, 38-րդ, 43-րդ, 54-րդ և 177-րդ կետերի համաձայն համարվել են հետ կանչված: Նշված հայտերը հետ կանչված համարվում են գրասենյակի կողմից դրա մասին որոշման ընդունման օրվանից, որում նշվում են հետ կանչված համարելու հիմքերը:

(185-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

186. Հայտը հետ կանչված համարելու մասին գրասենյակը երեք աշխատանքային օրվա ընթացքում հայտատուին ծանուցում է համապատասխան որոշման ընդունման մասին:

(186-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

VII. ՀԱՅՏԵՐՈՎ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

187. Որպես հայտ գրասենյակում ստացված նյութերը մուտքագրվում են առանձին, դրանց տրվում է մտից համար ու նշվում է ստացման թվականը:

(187-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

188. Առձեռն հանձնված հայտն ընդունվում է ստացակնամով, որում նշվում է հայտատուն, հայտարկված ապրանքային նշանի անվանումը (բառային տարրը, եթե այդպիսին կա կամ «պատկերային», եթե նիշը պատկերային է), ԱՕՄԴ դասերը (նշված լինելու դեպքում), հայտի նյութերի թերթերի ընդհանուր թիվը, ինչպես նաև ստացման թվականը և մտից համարը, որը, որպես ապրանքային նշանի հայտ, ստացված նյութի հերթական համարն է:

189. Գրասենյակի էլեկտրոնային համակարգի միջոցով ստացված հայտի մտից համարը և ստացման թվականն ամրագրվում են համակարգչային ծրագրով:

(189-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

190. Որպես հայտ ստացված նյութերը քննարկվում են գրասենյակի ապրանքային նշանների փորձաքննության ստորաբաժանման կողմից (այսուհետ՝ փորձաքննության ստորաբաժանում)՝ սույն կարգի 16-22-րդ կետերին համապատասխան: Քննարկումն իրականացնում է փորձաքննության ստորաբաժանման փորձագետը՝ տվյալ ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությամբ:

(190-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

191. Սույն կարգի 18-20-րդ կետերին համապատասխան հայտը ներկայացնելու թվականը սահմանելուց հետո, փորձաքննության ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությամբ, տվյալ ստորաբաժանման փորձագետը սույն կարգի 23-րդ կետին համապատասխան գրանցում է հայտը՝ դրան տալով հերթական համար, և հայտում ներկայացված տեղեկությունները մուտքագրում է ապրանքային նշանների հայտերի հիմնապաշար:

192. Հայտի նախնական փորձաքննությունն իրականացնում է փորձաքննության ստորաբաժանման փորձագետը՝ տվյալ ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությամբ, սույն կարգի 24-55-րդ կետերին համապատասխան՝ իրականացնելով նաև սույն կարգի 56-72-րդ կետերի հետ կապված անհրաժեշտ գործառույթները:

193. Հայտի՝ ըստ էության փորձաքննությունն իրականացնում է փորձաքննության ստորաբաժանման փորձագետը՝ տվյալ ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությամբ, սույն կարգի 83-156-րդ կետերին համապատասխան՝ իրականացնելով նաև սույն կարգի 74-82-րդ կետերի հետ կապված անհրաժեշտ գործառույթները:

194. Սույն կարգի 190-րդ կետին համապատասխան իրականացվող հայտի նյութերի քննարկման և 191-193-րդ կետերին համապատասխան իրականացվող փորձաքննության արդյունքների հիման վրա գրասենյակի որոշումները և ծանուցումներն ընդունվում են տվյալ հայտի նյութերի քննարկումը կամ հայտի փորձաքննությունն իրականացնող փորձագետի (այսուհետ՝ փորձագետ) նախապատրաստած համապատասխան նախագծի հիման վրա:

(194-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

195. Սույն կարգի համաձայն ծանուցումների նախագծերը նախապատրաստում է փորձագետը և ներկայացնում է փորձաքննության ստորաբաժանման ղեկավարին:

196. Սույն կարգի համաձայն հայտի՝ փորձաքննության արդյունքներով որոշումների նախագծերը նախապատրաստում է փորձագետը և ներկայացնում է փորձաքննության ստորաբաժանման ղեկավարին:

197. Ապրանքային նշանի գրանցման, մասնակի գրանցման կամ գրանցումը մերժելու մասին որոշումների նախագծերին պետք է կցվի փորձագետի հաշվետվությունը՝ տվյալ ապրանքային նշանի մերժման հարաբերական հիմքերի որոնման արդյունքների մասին՝ նշելով միայն այն հիմքերը, որոնք ի հայտ են բերվել և համեմատվել են հայտարկված նշանի հետ, այսինքն այն հիմքերը, որոնք անմիջական առնչություն ունեն հայտարկված ապրանքային նշանին, այդպիսիք լինելու դեպքում:

198. Օրենքի և սույն կարգի համաձայն հետ կանչված համարելու մասին որոշումները, որոնցում նշվում են դրա հիմքերը, նախապատրաստվում են սույն կարգի 196-րդ կետի դրույթների համաձայն:

199. Փորձաքննության ստորաբաժանման ղեկավարի հետ համաձայնեցված որոշման նախագծերը ներկայացվում են գրասենյակի պետի (կամ նրա հանձնարարությամբ՝ նրա տեղակալի) հաստատմանը:

(199-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

200. Սույն կարգի 195-րդ կետում նշված ծանուցումներում պարտադիր նշվում են հայտատուն, հայտի համարը և ներկայացնելու թվականը, ապրանքային նշանի պատկերը:

201. Սույն կարգի 197-րդ կետում նշված՝ ապրանքային նշանի գրանցման մասին կամ մասնակի գրանցման մասին

որոշումներում նշվում են՝

- 1) հայտատուն և նրա գտնվելու վայրը (բնակության վայրը).
- 2) հայտի համարը.
- 3) հայտը ներկայացնելու թվականը.
- 4) ապրանքային նշանի պատկերը.
- 5) միջազգային կամ ցուցահանդեսային առաջնությանը վերաբերող տվյալները (եթե դրանք կան).
- 6) ԱՕՄԴ-ի դասերին համապատասխան խմբավորված ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը.
- 7) չպահպանվող տարրերի նշումը (եթե դրանք կան).
- 8) նշանի գույնը կամ գունային համակցությունը (եթե խնդրարկվում է գունավոր ապրանքային նշան).
- 9) ապրանքային նշանի տեսակը (ձայնային, հոլոգրաֆիական, ծավալային և այլն).
- 10) կողեկտիվ կամ հավաստագրային լինելու մասին:

202. Օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ապրանքային նշանը հայտում նշված բոլոր ապրանքների կամ դրանց մի մասի համար գրանցելու մասին որոշման ընդունման դեպքում գրասենյակը երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է հայտատուին կամ նրա ներկայացուցչին՝ ծանուցագիրն ստանալու օրվանից եռամսյա ժամկետում ապրանքային նշանի գրանցման համար օրենքով սահմանված պետական տուրքը վճարելու և վճարման անդորրագիրը ներկայացնելու անհրաժեշտության մասին:

(202-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

203. Գրասենյակի կողմից ընդունված որոշումները, ծանուցումները ուղարկվում են հայտատուին նրա կողմից փաստաթուղթը ներկայացվելու համար ընտրված սկզբնական եղանակով կամ իր կողմից հետագայում ընտրված եղանակներից մեկով՝ փոստով կամ կապի միջոցների օգտագործմամբ կամ գրասենյակի էլեկտրոնային համակարգի միջոցով (այդ թվում՝ հայտատուի նշած էլեկտրոնային փոստի միջոցով), ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված էլեկտրոնային կապի այլ միջոցներով: Հայտատուն սույն կարգի համաձայն ստացած ծանուցումների պատասխանները, ինչպես նաև ապրանքային նշանի գրանցման համար օրենքով սահմանված պետական տուրքի վճարման անդորրագրերը և դրանց կից փաստաթղթերը կարող է ներկայացնել գրասենյակ՝ իր կողմից նախընտրած եղանակով՝ փոստով կամ կապի միջոցների օգտագործմամբ կամ գրասենյակի էլեկտրոնային համակարգի միջոցով (այդ թվում՝ էլեկտրոնային փոստի միջոցով), ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված էլեկտրոնային կապի այլ միջոցներով:

(203-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

VIII. ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

204. Օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ապրանքային նշանը գրանցելու մասին որոշման հիման վրա, սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում գրասենյակը հերթական համարի տակ ապրանքային նշանը գրանցում է ապրանքային նշանների պետական գրանցամատյանում:

(204-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

205. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ապրանքային նշանը գրանցելու համար պետական տուրքը վճարվում է նշանի գրանցման մասին որոշումը, կամ եթե հայտատուն այդ որոշմանը չհամաձայնելով (ոչ բոլոր ապրանքների համար) դիմել է գրասենյակի բողոքարկման խորհուրդ կամ դատարան բողոքարկման խորհրդի կամ դատարանի որոշումը հայտատուի կողմից ստանալուց հետո 3-ամսյա ժամկետում: Նշված պետական տուրքը կարող է վճարվել նաև այդ ժամկետը լրանալուց հետո 6 ամսվա ընթացքում, որի դեպքում դրա չափն ավելացվում է 20 տոկոսով: Նշված ժամկետներում պետական տուրքը չվճարելու և այդ վճարման անդորրագիրը սահմանված ժամկետում (առավելագույնը 3 ամիս + 10 օր, եթե պետական տուրքը վճարված է 3 ամսվա ընթացքում և 9 ամիս + 10 օր, եթե պետական տուրքը վճարված է 3 + 6 ամսվա ընթացքում) չներկայացնելու դեպքում պետական տուրքը համարվում է չվճարված, ապրանքային նշանի գրանցումը չի կատարվում, հայտը համարվում է հետ կանչված՝ նշանի գրանցման մասին որոշումը հայտատուի կողմից ստանալուց հետո 3 ամիսը լրանալուն հաջորդող օրվանից:

(205-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

206. Ապրանքային նշանի գրանցման մասին որոշումը հայտատուին ուղարկելուց հետո վերջինիս կողմից առաջարկվող ցանկացած փոփոխություն (եթե դա գրասենյակի կողմից թույլ տրված վրիպակ չէ) քննարկվում է որպես պետական գրանցամատյանում կատարվող փոփոխություն, եթե վճարված է սահմանված պետական տուրքը: Եթե առաջարկվող փոփոխությունը ներկայացվել է ապրանքային նշանի գրանցման և վկայագիր տալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը ներկայացնելուց ոչ ուշ, քան այն քննարկվում է փորձաքննության ստորաբաժանման կողմից և, անհրաժեշտության դեպքում, ճշգրտում է կատարվում նշանի գրանցման մասին որոշման մեջ, ինչի մասին հայտատուն երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցվում է: Հայտատուն ծանուցվում է նաև առաջարկված փոփոխությունները հաշվի չառնելու մասին:

(206-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

207. Եթե առաջարկվող փոփոխությունը վերաբերում է գրասենյակի կողմից թույլ տրված վրիպակին, ապա գրասենյակն ուղղում է տվյալ վրիպակը:

(207-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

IX. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԶԱՅՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

208. Նշանների միջազգային գրանցման մասին համաձայնագրի (այսուհետ՝ համաձայնագիր) 1(2)-րդ հոդվածի, ինչպես նաև դրա արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) 2(1)-րդ հոդվածի համաձայն մասնակից որևէ պետության ցանկացած անձ մնացած մասնակից պետություններում իր ապրանքային նշանի պահպանությունն ապահովելու նպատակով կարող է նշանի միջազգային գրանցման մասին հայտ (այսուհետ՝ միջազգային հայտ) ներկայացնել միջազգային բյուրո: Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է համաձայնագրի և արձանագրության անդամ, օրենքի 56-րդ հոդվածի համաձայն միջազգային հայտ կարող է ներկայացնել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող ցանկացած անձ՝ որը Հայաստանի Հանրապետության տարածքում ունի գործող արդյունաբերական կամ առևտրային հաստատություն, կամ դրա բացակայության դեպքում՝ բնակության վայր Հայաստանի Հանրապետությունում կամ դրա բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացի է կամ ծագումով Հայաստանի Հանրապետությունից է:

209. Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ապրանքային նշանի միջազգային հայտը ներկայացվում է գրասենյակի միջոցով: Միջազգային հայտը, որին կցվում է սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը, գրասենյակ ներկայացնում է հայտատուն անձամբ կամ գրասենյակում գրանցված ապրանքային նշանների հավատարմատարի արտոնագրային հավատարմատարի միջոցով, անգլերենով կամ ֆրանսերենով: Միջազգային հայտին կցվում են նաև համաձայնագրով կամ, համապատասխան դեպքում, արձանագրությամբ նախատեսված Միջազգային բյուրոյի հաշվին վճարված գումարների վճարումը հաստատող փաստաթուղթը:

(209-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

210. Միջազգային հայտը համաձայնագրի շրջանակներում ներկայացվում է միայն ազգային գրանցման հիման վրա, այսինքն՝ տվյալ ապրանքային նշանը պետք է գրանցված լինի պետական գրանցամատյանում, իսկ արձանագրության շրջանակներում՝ ազգային հայտի հիման վրա, այսինքն բավարար է, որ տվյալ ապրանքային նշանի գրանցման համար գրասենյակ ներկայացված հայտը համապատասխանի օրենքի և սույն կարգի 18-րդ կետի պահանջներին:

(210-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

211. Միջազգային հայտը և դրան կից փաստաթղթերը գրասենյակ ներկայացվում են երկու օրինակից՝ տպագրված և էլեկտրոնային տարբերակներով, որոնք բավարարում են համաձայնագրի և արձանագրության 3-րդ հոդվածների, ընդհանուր հրահանգի 8-13-րդ կանոններով և սույն կարգի 212-րդ կետով սահմանված պահանջները:

(211-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

212. Միջազգային հայտը լրացվում է «Նշանների միջազգային գրանցման մասին» մադրիդյան համաձայնագրի և դրա արձանագրության հայտերի վարչական հրահանգի (այսուհետ՝ վարչական հրահանգ) 2-րդ մասի 2-րդ բաժնի համաձայն: Միջազգային հայտը, որը պետք է վերաբերի մեկ ապրանքային նշանի, ներկայացվում է համապատասխան ձևաթղթի վրա (MM2), եթե հայտը ներկայացվում է արձանագրության շրջանակներում:

213. Միջազգային հայտը կարող է հիմնվել նույն ապրանքային նշանի՝ Հայաստանի Հանրապետության մի քանի ազգային գրանցումների կամ հայտերի վրա: Այսինքն այն գրանցումների, երբ նույն ապրանքային նշանը գրանցվել է տարբեր ապրանքների և (կամ) ծառայությունների համար կամ այն հայտերի, որոնք ներկայացված են նույն ապրանքային նշանը տարբեր ապրանքների և (կամ) ծառայությունների համար գրանցելու նպատակով:

214. Միջազգային հայտն ստանալու օրվանից քսան աշխատանքային օրվա ընթացքում փորձաքննության ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությամբ փորձագետն ստուգում է հայտի համապատասխանությունը սույն կարգի 211-212-րդ կետերի պահանջներին, ինչպես նաև միջազգային հայտում նշված տեղեկությունների համապատասխանությունը պետական գրանցամատյանի տվյալներին կամ համապատասխան դեպքերում՝ ապրանքային նշանների հայտերի հիմնապաշարի տվյալներին:

215. Եթե ստուգման արդյունքում փորձագետը պարզում է, որ՝

- 1) միջազգային հայտը համապատասխանում է օրենքի ու սույն կարգի պահանջներին և ընդհանուր հրահանգի պայմաններին, ապա նրա առաջարկությամբ փորձաքննության ստորաբաժանման ղեկավարը նշում է միջազգային հայտը գրասենյակ ներկայացնելու թվականը, որից հետո միջազգային հայտի մեկ օրինակն ուղարկում է Միջազգային բյուրո, իսկ մյուսը՝ հայտատուին, որպես հայտի ընդունված լինելու հավաստում.
- 2) միջազգային հայտում առկա են սխալներ կամ անճշտություններ, որոնց ուղղումը մտնում է իր իրավասության շրջանակների մեջ և չի պահանջում հայտատուի կամ իրավատիրոջ համաձայնությունը, ապա նրա առաջարկությամբ փորձաքննության ստորաբաժանման ղեկավարը կատարում է համապատասխան ուղղումները, որից հետո միջազգային հայտի մեկ օրինակն ուղարկում է Միջազգային բյուրո, իսկ մյուսը՝ հայտատուին, որպես հայտի ընդունված լինելու հավաստում.
- 3) առկա են սխալներ կամ անճշտություններ, որոնց ուղղումը պահանջում է հայտատուի համաձայնությունը, մասնավորապես, ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկի ճշգրտում, ապա գրասենյակը երեք աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին ծանուցում է հայտատուին՝ առաջարկելով ողջամիտ ժամկետում ուղղել սխալները կամ

անճշտությունները: Տվյալ դեպքում ողջամիտ ժամկետ համարվում է այն ժամկետը, որից հետո հնարավոր կլինի միջազգային հայտը Միջազգային բյուրո ներկայացնել գրասենյակի կողմից հայտն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում: Այս դեպքում միջազգային գրանցման թվականը համարվում է գրասենյակի կողմից հայտն ստանալու թվականը: Մնացած դեպքերում միջազգային գրանցման թվականը համարվում է Միջազգային բյուրոյի կողմից միջազգային հայտի ստացման թվականը:

(215-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

216. Համաձայնագրի 1(2)-րդ, 2-րդ և արձանագրության 2-րդ հոդվածների համաձայն, միջազգային գրանցման միջոցով Հայաստանի Հանրապետությունում ապրանքային նշանին իրավական պահպանությունը տրամադրվում է միջազգային գրանցման կամ տարածքային ընդարձակման մասին Միջազգային բյուրոյի ծանուցումներին համապատասխան գրասենյակի անցկացրած փորձաքննության արդյունքների հիման վրա:

(216-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

217. Փորձաքննությունը, որի ընթացքում ստուգվում է միջազգային գրանցման համապատասխանությունը օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածների պահանջներին, գրասենյակն անցկացնում է սույն կարգի 75-82-րդ և 83-155-րդ կետերով սահմանված դրույթները մութաթիս մութանդիս (mutatis mutandis) կիրառելով՝ հաշվի առնելով սույն կարգի 194-199-րդ կետերի պահանջները:

(217-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

218. Սույն կարգի 216-217-րդ կետերին համապատասխան՝ գրասենյակը փորձաքննությունն անցկացնում և ընդունած որոշման մասին Միջազգային բյուրոյին ծանուցում է 1.5 տարվա ընթացքում՝ արձանագրության շրջանակներում, 1 տարվա ընթացքում՝ համաձայնագրի շրջանակներում:

(218-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

219. Փորձաքննության ընթացքում միջազգային գրանցումների նկատմամբ գրասենյակն ընդունում է հետևյալ որոշումները

- 1) ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրելու մասին.
- 2) ապրանքային նշանին իրավական պահպանության տրամադրումը միջազգային գրանցման մեջ նշված բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների կամ դրանց մի մասի համար նախնական մերժման մասին (նախնական մերժման մասին որոշում):

(219-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

220. Նախնական մերժման մասին որոշումից հետո, երբ սպառվել են նշված որոշումը վիճարկելու համար օրենքով նախատեսված հնարավորությունները (միջազգային գրանցման իրավատիրոջ կողմից նշված որոշումն ստանալու օրվանից առնվազն 3 + 6 ամիսը լրանալուց հետո, ինչը կազմում է մոտավորապես 10 ամիս, հաշված գրասենյակի կողմից որոշման մասին ծանուցումը Միջազգային բյուրոյին ուղարկելու թվականից), կամ օրենքի համաձայն կրկնական փորձաքննության անցկացման, կամ նշված որոշման վիճարկման արդյունքում օրենքի և սույն կարգի համաձայն որոշում է ընդունվել, օրենքի 62-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, գրասենյակը Միջազգային բյուրոյին ծանուցում է հետևյալ վերջնական որոշումների մասին՝

- 1) միջազգային գրանցման մեջ նշված բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների համար ապրանքային նշանին պահպանության տրամադրումը մերժելու մասին, կամ՝
- 2) միջազգային գրանցման մեջ նշված ապրանքների և (կամ) ծառայությունների մի մասի համար ապրանքային նշանին պահպանություն տրամադրելու մասին, կամ՝
- 3) միջազգային գրանցման մեջ նշված բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների համար ապրանքային նշանին պահպանություն տրամադրելու մասին:

(220-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

221. Գրասենյակը Միջազգային բյուրոյին ծանուցում է նաև միջազգային գրանցման գործողության ամբողջ ընթացքում դրա վերաբերյալ դատարանների կայացրած բոլոր վերջնական որոշումների մասին:

(221-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

<p>Հայտ ապրանքային նշանի</p>	<p>Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակ Երևան 0010, Մհեր Մկրտչյան 5/1</p>	
<p>1. Սույնով խնդրարկվում է ներկայացված ապրանքային նշանի գրանցում</p>	<p>(լրացնում է գրասենյակը)</p>	<p>(լրացնում է գրասենյակը)</p>
<p> </p>		

<p>2. Հայտատու՝ 2.1. իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը՝</p>	<p>երկրի ծածկագիրն ըստ ՄՍՀԿ ST 3-ի</p> <p><input type="checkbox"/> քաղաքացիության <input type="checkbox"/> բնակության երկրի <input type="checkbox"/> իրական գործունեության</p>
<p>2.2. հայտատուի գտնվելու վայրը (բնակության վայրը)՝</p> <p>2.3. հեռախոսահամարը ֆաքսը էլ. փոստի հասցեն</p>	
<p>2.4. <input type="checkbox"/> մեկից ավելի հայտատուներ (հայտատուների մասին տվյալներն ըստ 2.1-2.3-րդ կետերի տրվում են լրացուցիչ թերթի վրա)</p>	
<p>3. <input type="checkbox"/> Հայտատուի ներկայացուցիչը՝ 3.1. ներկայացուցչի անվանումը կամ անունը, ազգանունը՝</p>	
<p>3.2. ներկայացուցչի գտնվելու վայրը (բնակության վայրը)</p> <p>3.3. հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն</p>	<p><input type="checkbox"/> լիազորագիրը գրասենյակում է, հայտ N <input type="checkbox"/> լիազորագիրը կցվում է <input type="checkbox"/> լիազորագիրը կներկայացվի ավելի ուշ</p>
<p>4. Նամակագրության հասցեն (փոստային հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն)</p>	
<p>5. Ապրանքային նշանը՝ 5.1. ապրանքային նշանի պատկերը <input type="checkbox"/> չափերը գերազանցում են 8 x 8 սմ (պատկերը կցվում է)</p>	<p>5.2. ապրանքային նշանի համառոտ նկարագրությունը, տառադարձությունն ու թարգմանությունը</p>
<p>5.3. <input type="checkbox"/> նշանը գրանցել և հրապարակել ստանդարտ նիշերով</p>	<p>5.11. <input type="checkbox"/> նշանը գունավոր է, գույները, որոնց համար խնդրարկվում է պահպանությունը՝</p>
<p>5.4. <input type="checkbox"/> որպես տարբերակիչ տարր խնդրարկվում է գույնի պահպանություն</p>	
<p>5.5. <input type="checkbox"/> նշանը ծավալային է (լրացուցիչ պատկերները կցվում են)</p>	<p>5.12. <input type="checkbox"/> չպահպանվող տարրերն են՝</p>
<p>5.6. <input type="checkbox"/> նշանը հոլոգրաֆիական է</p>	
<p>5.7. <input type="checkbox"/> նշանը տեղադրական է</p>	
<p>5.8. <input type="checkbox"/> նշանը ձայնային է</p>	<p>5.13. <input type="checkbox"/> նշանը գրանցված է ծագման երկրում, վկայագրի պատճենը կցվում է</p>

5.9. <input type="checkbox"/> նշանը հավաստագրային է		5.14. <input type="checkbox"/> կցվում է նշանի սև-սպիտակ պատկեր	
5.10. <input type="checkbox"/> նշանը կոլեկտիվ է, կանոնակարգը կցվում է		5.15. <input type="checkbox"/> կցվում է նշանի գունավոր պատկեր	
6. <input type="checkbox"/> Խնդրարկվում է առաջնություն 6.1. <input type="checkbox"/> առաջին հայտի ներկայացման թվականով		6.2. <input type="checkbox"/> ցուցահանդեսում ցուցանմուշի առաջին ցուցադրման թվականով. մանրամասները լրացուցիչ թերթի վրա և ցուցահանդեսի կազմակերպչի տված հավաստագիրը <input type="checkbox"/> կցվում են <input type="checkbox"/> կներկայացվեն սույն հայտի ներկայացման օրվանից 3 ամսվա ընթացքում	
6.3. առաջին հայտի N	6.4. առաջին հայտի ներկայացման թվականը	6.5. առաջին հայտի ներկայացման երկիրը (կազմակերպությունը) ըստ ՄՄՀԿ ST3-ի	
6.6. <input type="checkbox"/> առաջին հայտի վավերացված պատճենը կցվում է 6.7. <input type="checkbox"/> առաջին հայտի պատճենը կներկայացվի սույն հայտի ներկայացման օրվանից 3 ամսվա ընթացքում		6.8. <input type="checkbox"/> առաջին հայտի թարգմանությունը կցվում է 6.9. <input type="checkbox"/> առաջին հայտի թարգմանությունը կներկայացվի սույն հայտի ներկայացման օրվանից 3 ամսվա ընթացքում	
6.10. <input type="checkbox"/> մեկից ավելի առաջնություններ (6.3-6.9-րդ կետերի տվյալները ներկայացվում են լրացուցիչ թերթի վրա)			
7. ԱՕՄԴ-ի դասերին համապատասխան խմբավորված ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը, որոնց համար խնդրարկվում է գրանցումը			
ԱՕՄԴ-ի դասը		ապրանքները և (կամ) ծառայությունները	
		<input type="checkbox"/> ապրանքների և ծառայությունների ցանկի շարունակությունը տրված է լրացուցիչ թերթի վրա	

8. Ստորագրությունը _____

8.1. _____
(անունը, ազգանունը, պաշտոնը)

8.2. թվականը _____ 20 թ.

8.3. ստորագրողը հայտատուն է հայտատուի ներկայացուցիչն է

9. Վճարված է դրամ պետական տուրք՝ անդորրագիրը կցվում է

9.1. վճարման ձևը _____

10. Հայտին կից ներկայացվում են՝ _____ լրացուցիչ թերթեր, այլ փաստաթղթեր _____

(յուրաքանչյուր փաստաթղթի անվանումը և թերթերի քանակը)

(ձևը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

Ձև N 2

<p>Դ Ի Մ ՈՒ Մ ապրանքային նշանի հայտում փոփոխություններ կատարելու մասին</p>	<p>Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակ Երևան 0010, Մեեր Մկրտչյան 5/1</p>
<p>1. Խնդրարկվում է ստորև նշված հայտում կատարել սույն դիմումում նշված փոփոխությունները</p>	<p>(լրացնում է գրասենյակը)</p>
<p>2. Սույն դիմումը վերաբերում է հետևյալ հայտին (հայտերին) 2.1. հայտի համարը (հայտերի համարները)</p>	
<p>2.2. <input type="checkbox"/> հայտերի համարները տրված են առանձին թերթի վրա</p>	
<p>3. Հայտատու (հայտատուներ) 3.1. իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը</p>	
<p>3.2. հայտատուի գտնվելու վայրը (բնակության վայրը) հեռախոսահամարը ֆաքսը էլ. փոստի հասցեն</p>	
<p>3.3. <input type="checkbox"/> մեկից ավելի հայտատուներ (հայտատուների մասին տվյալներն ըստ 3.1-ին և 3.2-րդ կետերի տրվում են առանձին թերթի վրա)</p>	
<p>4. Հայտատուի ներկայացուցիչը՝ 4.1. ներկայացուցչի անվանումը կամ անունը, ազգանունը</p>	

5. Նամակագրության հասցեն՝ (փոստային հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն)	
6. Փոփոխությունը (ներք)	
6.1. տվյալները, որոնք պետք է փոփոխվեն՝	6.2 փոփոխված տեսքով տվյալները
<input type="checkbox"/> փոփոխության հիմքը կցվում է	
<input type="checkbox"/> 6.1-ին և 6.2-րդ կետերում նշված տվյալների շարունակությունը տրվում է առանձին թերթի վրա	
7. Ստորագրությունը _____	
7.1. _____ (անունը, ազգանունը, պաշտոնը)	
7.2. թվականը _____ 20 թ.	
7.3. ստորագրողը <input type="checkbox"/> հայտատուն է <input type="checkbox"/> հայտատուի ներկայացուցիչն է	
8. <input type="checkbox"/> Վճարված է _____ դրամ պետական տուրք՝	
<input type="checkbox"/> անդորրագիրը կցվում է	
8.1. վճարման ձևը _____	
9. Դիմումին կից ներկայացվում են _____ լրացուցիչ թերթեր <input type="checkbox"/> այլ փաստաթղթեր	
(յուրաքանչյուր փաստաթղթի անվանումը և թերթերի քանակը)	

(ձևը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

Ձև N 3

Դ Ի Մ ՈՒ Մ	Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակ
ապրանքային նշանի հայտի գատման մասին	Երևան 0010, Մհեր Մկրտչյան 5/1

<p>1. Խնդրարկվում է ստորև նշված հայտի գատում</p>	<p>(լրացնում է գրասենյակը)</p>
<p>2. Սույն դիմումը վերաբերում է հետևյալ հայտի բաժանմանը</p> <p>2.1. հայտի համարը _____ ներկայացման թվականը _____</p>	
<p>3. Հայտատու (հայտատուներ)՝</p> <p>3.1. իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը՝</p>	
<p>3.2. հայտատուի գտնվելու վայրը (բնակության վայրը)՝</p> <p>հեռախոսահամարը ֆաքսը էլ. փոստի հասցեն</p>	
<p>3.3. <input type="checkbox"/> մեկից ավելի հայտատուներ (հայտատուների մասին տվյալներն ըստ 3.1-ին և 3.2-րդ կետերի տրվում են առանձին թերթի վրա)</p>	
<p>4. Հայտատուի ներկայացուցիչը՝</p> <p>4.1. ներկայացուցչի անվանումը կամ անունը, ազգանունը՝</p>	
<p>5. Նամակագրության հասցեն (փոստային հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն)</p>	
<p>6. 2.1-ին կետում նշված հայտը բաժանվում է՝</p> <p>6.1. _____ հայտերի, դրա մեջ թվարկված սպրանքները և (կամ) ծառայությունները բաշխելով հետևյալ կերպ՝</p>	
<p>Հայտը</p>	<p>Սպրանքները և (կամ) ծառայությունները</p>
<p>6.2. սկզբնական հայտ</p>	
<p>6.3. գատված 1-ին հայտ</p>	
<p>6.4. գատված 2-րդ հայտ</p>	
<p>6.5. գատված 3-րդ հայտ</p>	

Մնացած գատված հայտերի տվյալները ներկայացվում են լրացուցիչ թերթի վրա

7. Ստորագրությունը _____

7.1. _____
(անունը, ազգանունը, պաշտոնը)

7.2. թվականը _____ 20 թ.

7.3. ստորագրողը հայտատուն է հայտատուի ներկայացուցիչն է

8. Վճարված է _____ դրամ պետական տուրք՝
 անդորրագիրը կցվում է

8.1. վճարման ձևը _____

9. Դիմումին կից ներկայացվում են _____ լրացուցիչ թերթեր այլ փաստաթղթեր

(յուրաքանչյուր փաստաթղթի անվանումը և թերթերի քանակը)

(ձևը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

(հավելվածը խմբ. 10.08.17 N 1017-Ն, փոփ., լրաց., խմբ. 12.10.23 N 1725-Ն)

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2010 թվականի
նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ, ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են գրանցված ապրանքային նշանների լիցենզիաները (այսուհետ՝ լիցենզիա), դրանց փոփոխությունները և չեղյալ հայտարարելը գրանցելու մասին դիմումները լրացնելու, ինչպես նաև դրանք ներկայացնելու և քննարկելու հետ կապված հարաբերությունները:
2. Սույն կարգում օգտագործված են «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված հասկացությունները:
3. «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի համաձայն պետական լիազոր մարմնի կողմից գրանցման ենթակա են ապրանքային նշանների Հայաստանի Հանրապետության պետական գրանցամատյանում (այսուհետ՝ պետական գրանցամատյան) գրանցված ապրանքային նշանների լիցենզիաները, այդ թվում՝ ֆրանչայզինգի պայմանագրով ապրանքային նշանների օգտագործման իրավունքի վերապահումը, Հայաստանի Հանրապետությունում առանց գրանցման՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ուժով պահպանվող ապրանքային նշանների լիցենզիաները, դրանց փոփոխությունները և չեղյալ հայտարարելը: Գրանցումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակը (այսուհետ՝ գրասենյակ):

(3-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

4. Լիցենզիաների գրանցումն իրականացվում է ներկայացված դիմումի հիման վրա՝ համաձայն սույն կարգի N 1 ձևի, որը պետք է վերաբերի մեկ պայմանագրով նախատեսված լիցենզիային, իսկ ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների փոխանցման գրանցումն իրականացվում է ներկայացված դիմումի հիման վրա՝ համաձայն սույն կարգի N 2 ձևի:

5. Լիցենզիայի գրանցման մասին դիմումը լրացվում է հետևյալ ձևով՝

1) 2.1-ին կետում նշվում են ապրանքային նշանների պետական գրանցման համարները, որոնց համար խնդրարկվում է գրանցել լիցենզիա.

2) եթե ապրանքային նշանի իրավատերը ֆիզիկական անձ է, լրացվում է 3.1-ին կետը՝ նշելով նրա անունն ու ազգանունը, իսկ եթե իրավաբանական անձ է՝ անվանումը.

3) 3.2-րդ կետում լրացվում է ապրանքային նշանի իրավատիրոջ գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը և էլեկտրոնային փոստի հասցեն.

4) 3.3-րդ կետի վանդակը նշվում է, եթե ապրանքային նշանն ունի մեկից ավելի իրավատերեր և լրացուցիչ թերթի վրա ներկայացվում են նրանց տվյալները՝ համաձայն 3.1-ին և 3.2-րդ կետերի.

5) 4.1-ին և 4.2-րդ կետերում համապատասխանաբար լրացվում են ապրանքային նշանի իրավատիրոջ ներկայացուցչի տվյալները, եթե դիմումը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով: Որպես ներկայացուցիչ կարող են հանդես գալ գրասենյակում գրանցված հավատարմատարները, Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայր ունեցող ֆիզիկական անձինք և Հայաստանի Հանրապետությունում իրական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք՝ կից ներկայացնելով իրենց իրավասությունները հաստատող փաստաթուղթը (լիազորագիրը).

6) 4.3-րդ կետի վանդակը նշվում է, եթե ապրանքային նշանն ունի մի քանի իրավատեր և նրանցից յուրաքանչյուրին կամ մի քանիսին ներկայացնում են իրենց ներկայացուցիչները, ապա այդ դեպքում լրացուցիչ թերթի վրա ներկայացվում են իրավատերերի ներկայացուցիչների տվյալները՝ համաձայն 4.1-ին և 4.2-րդ կետերի.

7) 5.1-5.3-րդ կետերում լրացվում են լիցենզատուի տվյալները՝ սույն կետի 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետերին համահման ձևով.

8) 6.1-6.3-րդ կետերում լրացվում են լիցենզատուի ներկայացուցչի տվյալները՝ սույն կետի 5-րդ և 6-րդ ենթակետերին համահման ձևով.

9) 7-րդ կետում նշվում են նամակագրություն վարելու և դիմումի քննարկման ընթացքում դիմումն ստորագրող իրավասու անձի հետ անմիջական կապ հաստատելու վերաբերյալ անհրաժեշտ տվյալները՝ փոստային հասցեն, հեռախոսահամարը և ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն.

10) 8.1-ին կետի վանդակը նշվում է, եթե լիցենզիան տրամադրված է 2.1-ին կետում նշված ապրանքային նշանի (նշանների) գրանցման (գրանցումների) մեջ նշված բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների համար՝ առանց բացառության.

11) 8.2-րդ կետի վանդակը նշվում է, եթե 2.1-ին կետում նշված է միայն մեկ ապրանքային նշանի գրանցման համար, և լիցենզիան տրամադրված է այդ գրանցման մեջ նշված ապրանքների և (կամ) ծառայությունների մի մասի համար, և հատկացված մասում լրացվում են այդ ապրանքները և (կամ) ծառայությունները.

12) 8.3-րդ կետի վանդակը նշվում է, եթե 2.1-ին կետում նշված են մեկից ավելի ապրանքային նշանների գրանցումներ, և դրանցից առնվազն մեկում նշված ոչ բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների համար է տրամադրված լիցենզիա, և հատկացված մասում լրացվում են այդ ապրանքները և (կամ) ծառայությունները՝ ըստ ԱՕՄԴ-ի դասերի.

13) կախված լիցենզիայի տեսակից՝ նշվում է 9.1-9.3-րդ կետերի վանդակներից մեկը.

14) 10.1-ին և 10.2-րդ կետերում նշվում և լրացվում է լիցենզիայի գործողության այն ժամկետը, որը նշված է լիցենզային պայմանագրում, լիցենզային պայմանագրից քաղվածքում կամ լիցենզիայի տրամադրման մասին հայտարարության մեջ.

15) 11-րդ կետում լրացվում է այն տարածքը, որտեղ գործում է լիցենզիան (երկիրը, մարզը, քաղաքը և այլն).

16) 12.1-ին կետի համապատասխան վանդակը նշելու միջոցով նշվում է դիմումն ստորագրող անձի ով լինելը.

17) 12.2-րդ կետում լրացվում են դիմումն ստորագրող ֆիզիկական անձի անունը կամ անվան սկզբնատառը, ազգանունը և պաշտոնը.

18) 12.2.1-ին կետում դրվում է դիմումն ստորագրող ֆիզիկական անձի ստորագրությունը և նշվում ստորագրման թվականը.

19) 13.1-ին կետում լրացվում է վճարված պետական տուրքի չափը՝ թվերով: Վանդակը նշվում է, և դիմումին կցվում է վճարման անդորրագիրը, քանի դեռ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով այլ բան նախատեսված չէ: Նշված օրենքով պետական տուրքի վճարման վերահսկման այլ մեխանիզմ (վճարման անդորրագիր ներկայացնելը բացառող) ամրագրելու դեպքում 13.1-ին կետի վանդակը չպետք է նշվի, և վճարման անդորրագիրը չպետք է կցվի.

20) 13.2-րդ կետում նշվում է վճարման ձևը, օրինակ՝ բանկային անկանխիկ փոխանցում.

21) 14-րդ կետում նշվում և լրացվում է կից ներկայացվող լրացուցիչ թերթերի ընդհանուր թիվը, եթե դրանք կան:

(5-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

6. Դիմումը կարող է գրասենյակ ներկայացվել անմիջականորեն կամ փոստով, որին կցվում են՝

1) ապրանքային նշանների լիցենզային պայմանագիրը կամ լիցենզային պայմանագրից քաղվածքը կամ լիցենզիայի տրամադրման մասին հայտարարությունը (հայտարարությունը ներկայացվում է օրինակելի ձևին համապատասխան համաձայն սույն կարգի N 3 ձևի, ստորագրված իրավատիրոջ (լիցենզատուի) և լիցենզատուի կողմից՝ առանց ջնջումների, կարված և համարակալված էջերով (3 օրինակ, որոնցից առնվազն մեկը բնօրինակն է)։

2) օրենքով սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը։

3) լիազորությունները հաստատող փաստաթուղթը, եթե դիմումը ներկայացված է իրավատիրոջ կամ լիցենզատուի ներկայացուցչի միջոցով։

(6-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

7. Դիմումին կարող է կցվել նաև ապրանքային նշանի վկայագիրը (վկայագրերը)։

8. Դիմումը ներկայացվում է հայերենով։ Դիմումին կցվող փաստաթղթերը կարող են ներկայացվել այլ լեզվով։ Այս դեպքում տվյալ փաստաթղթին կցվում է դրա հայերեն թարգմանությունը։

9. Դիմումն ստանալուց հետո ստուգվում է դիմումի և դրան կից ներկայացված նյութերի համապատասխանությունը սույն կարգի 4-6-րդ կետերով սահմանված պահանջներին։

10. Եթե պարզվում է, որ ներկայացված նյութերը չեն համապատասխանում 4-6-րդ կետերով սահմանված պահանջներին, ապա երեք աշխատանքային օրվա ընթացքում հարցում է արվում դիմումը ներկայացնողին՝ բացակայող կամ ճշգրտված նյութերը՝ հարցումն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում ներկայացնելու վերաբերյալ առաջարկությամբ։

11. Նշված ժամկետում պահանջված նյութերը չներկայացնելու դեպքում դիմումը քննարկման չի ընդունվում, և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝ պետական տուրքի վճարման անդորրագիրը, լիցենզային պայմանագրի կամ լիցենզային պայմանագրից քաղվածքի, կամ լիցենզիայի տրամադրման մասին հայտարարության երկու օրինակները և լիազորագիրը, եթե այն առկա է, վերադարձվում են։

12. Դիմումը և դրան կից ներկայացված նյութերը սույն կարգի 4-6-րդ կետերով սահմանված պահանջներին համապատասխանելու դեպքում փաստաթղթերն ստանալու օրվանից յոթ աշխատանքային օրվա ընթացքում իրականացվում է փորձաքննություն և օրենքով սահմանված պահանջները բավարարելու դեպքում կայացվում է որոշում լիցենզիան գրանցելու մասին։

13. Լիցենզիայի գրանցման մասին որոշման հիման վրա՝

1) լիցենզիան գրանցվում է լիցենզիաների գրանցամատյանում, որում նշվում են՝ դիմումի ստացման թվականը, լիցենզիայի գրանցման թվականը, վճարված պետական տուրքի չափը, լիցենզիայի գրանցման համարը, ապրանքային նշանի (նշանների) գրանցման համարը (համարները), իրավատիրոջ և լիցենզատուի անունը, ազգանունը (անվանումը), գտնվելու (բնակության) վայրի և երկրի ծածկագիրը, այլ նշումներ և տվյալներ, որոնք վերաբերում են լիցենզիայի առանձնահատկություններին։

2) գրանցված լիցենզային պայմանագրի, լիցենզային պայմանագրից քաղվածքի կամ լիցենզիայի տրամադրման մասին հայտարարության յուրաքանչյուր օրինակի վերջին էջում կատարվում է հետևյալ գրառումը

ա. «Սույն լիցենզիան գրանցված է գրասենյակում։

բ. գրանցման համարը _____ գրանցման թվականը _____

(պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի անունը, ազգանունը, ստորագրությունը)».

3) գրանցված լիցենզային պայմանագրի, լիցենզային պայմանագրից քաղվածքի կամ լիցենզիայի տրամադրման մասին հայտարարության մեկ օրինակը պահպանվում է վարչական գործում։

(13-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

14. Գրասենյակում գրանցվում են նաև ապրանքային նշանի ենթալիցենզիաները, եթե նախկինում գրանցված լիցենզիայով նախատեսված է, որ լիցենզատուն կարող է իրեն վերապահված իրավունքների շրջանակներում ապրանքային նշանի օգտագործման իրավունք տալ երրորդ անձանց։

(14-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

15. Ենթալիցենզիաների գրանցումը խնդրարկելիս՝ ներկայացվում է լիցենզիաների գրանցման համար նախատեսված դիմումը, որը լրացվում է սույն կարգի 5-րդ կետի համանման ձևով։ Ենթալիցենզիաների գրանցումը կատարվում է օրենքով և սույն կարգի 6-12-րդ կետերով նախատեսված պահանջներին համապատասխան և լիցենզիաների գրանցման նշված ընթացակարգին համանման ձևով։ Այս դեպքում դիմումի 3-րդ կետում, որպես իրավատեր (լիցենզատու), նշվում է լիցենզիա տրամադրող լիցենզատուն։

16. Գրասենյակում գրանցման ենթակա են նաև լիցենզիայի պայմանների փոփոխությունները, որոնք վերաբերում են լիցենզիայի կողմերի, վերապահվող իրավունքների ծավալի, լիցենզիայի գործողության տարածքի, լիցենզիայի գործողության ժամկետի փոփոխությանը, ինչպես նաև գրանցման ենթակա է լիցենզիան չեղյալ հայտարարելը։

(16-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

17. Լիցենզիայի պայմանների փոփոխության և լիցենզիան չեղյալ հայտարարելու գրանցումն իրականացվում է ներկայացված դիմումի հիման վրա՝ համաձայն սույն կարգի N 4 ձևի։ Դիմումը պետք է վերաբերի մեկ պայմանագրով նախատեսված լիցենզիային, որին կցվում են՝

1) լիցենզային պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին պայմանագիրը (համաձայնագիրը) կամ չեղյալ հայտարարելը հաստատող փաստաթուղթ կամ լիցենզիայի փոփոխության կամ չեղյալ հայտարարելու մասին

հայտարարություն (3 օրինակ), որոնք ստորագրված են լիցենզատուի և լիցենզառուի կողմից.

2) սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը.

3) լիազորությունները հաստատող փաստաթուղթը, եթե դիմումը ներկայացված է իրավասիրոջ կամ լիցենզառուի ներկայացուցչի միջոցով:

18. Լիցենզիայի փոփոխությունը կամ այն չեղյալ հայտարարելը գրանցելու մասին դիմումը լրացվում է հետևյալ ձևով՝

1) դիմումի վերնագրի վանդակներից մեկը նշելով՝ ընտրվում է դիմումի տեսակը և համապատասխան նշում է կատարվում նաև 1-ին կետի վանդակում.

2) 2-7-րդ կետերը նշվում և լրացվում են սույն կարգի 5-րդ կետի 1-9-րդ ենթակետերին համապատասխան ձևով.

3) 8-րդ կետի վանդակը նշվում է, եթե լիցենզիայի փոփոխությունը վերաբերում է ապրանքներին և (կամ) ծառայություններին և, 8.1-ին կետի վանդակներից մեկը նշելով, ներկայացվում է լիցենզիայի փոփոխությունը հաստատող փաստաթուղթը կամ լիցենզիայի փոփոխության մասին հայտարարությունը.

4) 9-րդ կետի վանդակը նշվում է, եթե լիցենզիայի փոփոխությունը վերաբերում է լիցենզիայի տեսակին, և, 9.1-9.3-րդ կետերի վանդակներից մեկը նշելով, ընտրվում է համապատասխան տեսակը.

5) 10-րդ կետի վանդակը նշվում է, եթե լիցենզիայի փոփոխությունը վերաբերում է տարածքին, և լրացվում է այն տարածքը (երկիրը, մարզը, քաղաքը և այլն), որին վերաբերում է փոփոխված լիցենզիան.

6) 11-րդ կետի վանդակը նշվում է, եթե լիցենզիայի փոփոխությունը վերաբերում է գործողության ժամկետին, և, 11.1-11.2-րդ կետերի վանդակներից մեկը նշելով և լրացնելով, տեղեկություն է տրվում փոփոխված լիցենզիայի գործողության ժամկետի վերաբերյալ.

7) 12-րդ կետի վանդակը նշվում է, եթե դիմումը վերաբերում է լիցենզիան չեղյալ հայտարարելու գրանցմանը, և, 12.1-ին կետի վանդակներից մեկը նշելով, ներկայացվում է չեղյալ հայտարարելը հաստատող փաստաթուղթը կամ չեղյալ հայտարարելու մասին հայտարարությունը: 12-րդ կետի նշման դեպքում 8-11-րդ կետերը չեն նշվում և չեն լրացվում.

8) 13-15-րդ կետերը նշվում և լրացվում են սույն կարգի 5-րդ կետի 16-21-րդ ենթակետերի համանման ձևով:

19. Դիմումն ստանալուց հետո ստուգվում է դիմումի և դրան կից ներկայացված նյութերի համապատասխանությունը սույն կարգի 16-18-րդ կետերով սահմանված պահանջներին:

20. Եթե պարզվում է, որ ներկայացված նյութերը չեն համապատասխանում 16-18-րդ կետերով սահմանված պահանջներին, ապա երեք աշխատանքային օրվա ընթացքում հարցում է կատարվում դիմումը ներկայացնողին՝ բացակայող կամ ճշգրտված նյութերը՝ հարցումն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում ներկայացնելու վերաբերյալ առաջարկությամբ:

21. Նշված ժամկետում պահանջված նյութերը չներկայացնելու դեպքում դիմումը քննարկման չի ընդունվում, և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝ պետական տուրքի վճարման անդորրագիրը, լիցենզիայի փոփոխությունը հաստատող փաստաթղթի կամ լիցենզիայի փոփոխության մասին հայտարարության, կամ չեղյալ հայտարարելը հաստատող փաստաթղթի կամ չեղյալ հայտարարելու մասին հայտարարության երկու օրինակները և լիազորագիրը, եթե այն առկա է, վերադարձվում են:

22. Դիմումը և դրան կից ներկայացված նյութերը, սույն կարգի 16-18-րդ կետերով սահմանված պահանջներին համապատասխանելու դեպքում, փաստաթղթերն ստանալու օրվանից յոթ աշխատանքային օրվա ընթացքում իրականացվում է փորձաքննություն և սահմանված պահանջները բավարարելու դեպքում ընդունվում է որոշում լիցենզիայի փոփոխությունը կամ լիցենզիան չեղյալ հայտարարելը գրանցելու մասին: Հակառակ դեպքում ընդունվում է որոշում լիցենզիայի փոփոխությունը կամ չեղյալ հայտարարելը գրանցելու մասին դիմումը մերժելու վերաբերյալ:

23. Գրասենյակը սույն կարգի համաձայն կատարված հարցումները, ընդունված որոշումները և քաղվածքներն ուղարկում է դիմողին նրա կողմից փաստաթուղթը ներկայացվելու համար ընտրված սկզբնական եղանակով կամ իր կողմից հետագայում ընտրված եղանակներից մեկով՝ փոստով կամ կապի միջոցների օգտագործմամբ, կամ գրասենյակի էլեկտրոնային համակարգի միջոցով (այդ թվում՝ դիմողի նշած էլեկտրոնային փոստի միջոցով), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված էլեկտրոնային կապի այլ միջոցներով: Դիմողը սույն կարգի համաձայն ստացած հարցումների պատասխանները կարող է ներկայացնել գրասենյակ՝ իր նախընտրած եղանակով՝ փոստով կամ կապի միջոցների օգտագործմամբ, կամ գրասենյակի էլեկտրոնային համակարգի միջոցով (այդ թվում՝ էլեկտրոնային փոստի միջոցով), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված էլեկտրոնային կապի այլ միջոցներով, իսկ բնօրինակ փաստաթղթեր ներկայացնելու պահանջի դեպքում՝ միայն առձեռն:

(23-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

24. Եթե պարզվում է, որ դիմումին կից ներկայացվել է պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը, ապա գրասենյակը գանձապետական առցանց կառավարման համակարգի կամ պետական վճարումների գրասենյակի էլեկտրոնային համակարգի միջոցով հավաստիանում է պետական տուրքի վճարման մասին: Եթե օրենքով սահմանված պետական տուրքի վճարման վերաբերյալ տվյալը չի հայտնաբերվում համապատասխան համակարգում, ապա դիմողին երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է ծանուցում անդորրագրի բնօրինակը կամ տվյալ վճարման իսկության վերաբերյալ ապացույցները երկամսյա ժամկետում ներկայացնելու վերաբերյալ առաջարկությամբ:

(24-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

25. Երկու ամսվա ընթացքում պետական տուրքի վճարման անդորրագրի բնօրինակը չներկայացվելու կամ տվյալ

վճարման իսկության մասին համապատասխան համակարգի միջոցով չհավաստիանալու դեպքում գրասենյակի կողմից դիմումը քննարկման չի ընդունվում, ինչի մասին դիմողը երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցվում է:
(25-րդ կետը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

Ձև N 1

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակ
(Երևան 0010, Մեեր Մկրտչյան 5/1)

Դ Ի Մ ՈՒ Մ

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ



1. Դիմում

Սույնով խնդրարկվում է գրանցել դիմումում նշված ապրանքային նշանի (նշանների) լիցենզիա:

2. Սույն դիմումին վերաբերող գրանցումը (գրանցումները)՝

2.1. գրանցման (գրանցումների) համարը (համարները)* _____

3. Իրավատեր (լիցենզատու)

3.1. անունը, ազգանունը կամ ընկերության անվանումը

3.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն

3.3. իրավատերերը մի քանիսն են (իրավատերերի մասին տվյալները, ըստ 3.1-ին և 3.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

4. Իրավատիրոջ ներկայացուցիչը՝

4.1. անունը, ազգանունը կամ ընկերության անվանումը

4.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն

4.3. իրավատերերի ներկայացուցիչները մի քանիսն են (իրավատերերի ներկայացուցիչների մասին տվյալները, ըստ 4.1-ին և 4.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

5. Լիցենզատուն՝

5.1. անունը, ազգանունը կամ ընկերության անվանումը

5.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն

5.3. լիցենզատուները մի քանիսն են (լիցենզատուների մասին տվյալները, ըստ 5.1-ին և 5.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

6. Լիցենզատուի ներկայացուցիչը՝

6.1. անունը, ազգանունը կամ ընկերության անվանումը

6.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն

6.3. լիցենզատուների ներկայացուցիչները մի քանիսն են (լիցենզատուների ներկայացուցիչների մասին տվյալները, ըստ 6.1-ին և 6.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

7. Նամակագրության հասցեն

8. Ապրանքները և (կամ) ծառայությունները, որոնց համար լիցենզիա է տրամադրված՝

8.1. լիցենզիան տրամադրված է 2.1-ին կետում նշված ապրանքային նշանի (նշանների) գրանցման (գրանցումների) մեջ նշված բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների նկատմամբ.

8.2. լիցենզիան տրամադրված է 2.1-ին կետում նշված ապրանքային նշանի գրանցման մեջ նշված հետևյալ ապրանքների և (կամ) ծառայությունների նկատմամբ*

8.3. լիցենզիան տրամադրված է 2.1-ին կետի գրանցումներից առնվազն մեկում նշված ոչ բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների նկատմամբ (յուրաքանչյուր գրանցման համար նշվում է այն ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը՝ ըստ ԱՕՄԴ-ի դասերի, որոնց նկատմամբ տարածված է լիցենզիան)*

9. Լիցենզիայի տեսակը

9.1. բացառիկ լիցենզիա

9.2. ոչ բացառիկ լիցենզիա

9.3. եզակի լիցենզիա

10. Լիցենզիայի գործողության ժամկետը

10.1. լիցենզիայի գործողության ժամկետը սահմանափակ է և տրված է _____ ից մինչև _____ ժամանակահատվածի համար.

10.2. լիցենզիան գործում է մինչև ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետի ավարտը:

11. Լիցենզիայի գործողության տարածքը

12. Ստորագրություններ

12.1. դիմումն ստորագրող իրավասու անձը¹

իրավատեր

իրավատիրոջ ներկայացուցիչ

լիցենզատու

լիցենզատուի ներկայացուցիչ

12.2. Դիմումն ստորագրող ֆիզիկական անձը

(պաշտոնը, անունը, ազգանունը)

12.2.1. ստորագրություն _____

(թվականը)

13. Տուրքեր

13.1. վճարված է _____ դրամ պետական տուրք անդորրագիրը կցվում է

13.2. վճարման ձևը _____

14. Կցվող լրացուցիչ թերթերի ընդհանուր թիվը _____

*- Շարունակությունը տրված է լրացուցիչ թերթի վրա:

¹- Եթե դիմումն ստորագրելու են մի քանի անձինք, ապա 12.1-ին, 12.2-րդ և 12.2.1-ին կետերում նշված տվյալները ներկայացնել լրացուցիչ թերթի վրա:
(ձևը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

Ձև N 2

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակ
(Երևան 0010, Մհեր Մկրտչյան 5/1)

Դ Ի Մ ՈՒ Մ

**ԳՐԱՆՑՎԱԾ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ
ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ**



1. Դիմում իրավունքների փոխանցման մասին
Սույնով խնդրարկվում է գրանցել դիմումում նշված ապրանքային նշանի (նշանների) նկատմամբ իրավունքների փոխանցումը:

2. Սույն դիմումին վերաբերող գրանցումը (գրանցումները)
2.1. գրանցման (գրանցումների) համարը (համարները)* _____

3. Իրավատեր

3.1. անունը, ազգանունը կամ ընկերության անվանումը

3.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն

3.3. իրավատերերը մի քանիսն են (իրավատերերի մասին տվյալները, ըստ 3.1-ին և 3.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

4. Իրավատիրոջ ներկայացուցիչը

4.1. անունը, ազգանունը կամ ընկերության անվանումը

4.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն

4.3. իրավատերերի ներկայացուցիչները մի քանիսն են (իրավատերերի ներկայացուցիչների մասին տվյալները, ըստ 4.1-ին և 4.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

5. Իրավունքներն ստացող

5.1. անունը, ազգանունը կամ ընկերության անվանումը

5.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն

5.3. իրավունքներն ստացողները մի քանիսն են (իրավունքներն ստացողների մասին տվյալները, ըստ 5.1-ին և 5.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

6. Իրավունքներն ստացողի ներկայացուցիչը

6.1. անունը, ազգանունը կամ ընկերության անվանումը

6.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն

6.3. իրավունքներն ստացողների ներկայացուցիչները մի քանիսն են (իրավունքներն ստացողների ներկայացուցիչների մասին տվյալները, ըստ 6.1-ին և 6.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

7. Նամակագրության հասցեն

8. Ապրանքները և (կամ) ծառայությունները, որոնց նկատմամբ տարածվում են իրավունքների փոխանցումը

8.1. իրավունքները փոխանցվում են 2.1-ին կետում նշված ապրանքային նշանի (նշանների) գրանցման (գրանցումների) բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների նկատմամբ

8.2. իրավունքները փոխանցվում են 2.1-ին կետում նշված ապրանքային նշանի գրանցման մեջ նշված հետևյալ ապրանքների և (կամ) ծառայությունների նկատմամբ*

8.3. իրավունքները փոխանցվում են 2.1-ին կետի գրանցումներից առնվազն մեկում նշված ոչ բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների նկատմամբ (յուրաքանչյուր գրանցման համար նշվում է այն ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը՝ ըստ ԱՕՄԴ-ի դասերի, որոնց նկատմամբ տարածված է իրավունքների փոխանցումը)*

9. Իրավունքների փոխանցումը հավաստող փաստաթուղթը կցվում է:

10. Ստորագրություններ

10.1. դիմումն ստորագրող իրավասու անձը¹

իրավատեր

իրավատիրոջ ներկայացուցիչ

իրավունքներն ստացող

իրավունքներն ստացողի ներկայացուցիչ

10.2. դիմումն ստորագրող ֆիզիկական անձը՝

(պաշտոնը, անունը, ազգանունը)

10.2.1. ստորագրություն _____

(թվականը)

11. Տուրքեր

11.1. վճարված է _____ դրամ պետական տուրք անդորրագիրը կցվում է

11.2. վճարման ձևը _____

12. Կցվող լրացուցիչ թերթերի ընդհանուր թիվը _____

*- Շարունակությունը տրված է լրացուցիչ թերթի վրա:

¹- Եթե դիմումն ստորագրելու են մի քանի անձինք, ապա 10.1-ին, 10.2-րդ և 10.2.1-ին կետերում նշված տվյալները ներկայացնել լրացուցիչ թերթի վրա:

(ձևը փոփ. 12.10.23 N 1725-Ն)

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Հայտարարություն

Ապրանքային նշանի իրավատերը (իրավատերերը) և լիցենզատուն (լիցենզատուները) սույնով հայտարարում է (են), որ դիմումում նշված ապրանքային նշանի (նշանների) գրանցումը (գրանցումները) հանդիսանում են լիցենզիայի առարկա:

2. Սույն դիմումին վերաբերող գրանցումը (գրանցումները)

2.1. գրանցման (գրանցումների) համարը (համարները) _____

3. Իրավատեր

3.1. անունը, ազգանունը կամ ընկերության անվանումը _____

3.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն _____

3.3. իրավատերերը մի քանիսն են (իրավատերերի մասին տվյալները, ըստ 3.1-ին և 3.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

4. Իրավատիրոջ ներկայացուցիչը

4.1. անունը, ազգանունը կամ ընկերության անվանումը _____

4.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն _____

4.3. իրավատերերի ներկայացուցիչները մի քանիսն են (իրավատերերի ներկայացուցիչների մասին տվյալները, ըստ 4.1-ին և 4.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

5. Լիցենզատուն

5.1. անունը, ազգանունը կամ ընկերության անվանումը _____

5.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն _____

5.3. լիցենզատուները մի քանիսն են (լիցենզատուների մասին տվյալները, ըստ 5.1-ին և 5.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

6. Լիցենզատուի ներկայացուցիչը

6.1. անունը, ազգանունը կամ ընկերության անվանումը _____

6.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն _____

6.3. լիցենզատուների ներկայացուցիչները մի քանիսն են (լիցենզատուների ներկայացուցիչների մասին տվյալները, ըստ 6.1-ին և 6.2-րդ կետերի տրվում են լրացուցիչ թերթի վրա):

7. Ապրանքները և (կամ) ծառայությունները, որոնց նկատմամբ լիցենզիա է տրամադրված

7.1. լիցենզիան տրամադրված է 2.1-ին կետում նշված ապրանքային նշանի (նշանների) գրանցման (գրանցումների) մեջ նշված բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների նկատմամբ

7.2. լիցենզիան տրամադրված է 2.1-ին կետում նշված ապրանքային նշանի գրանցման մեջ նշված հետևյալ ապրանքների և (կամ) ծառայությունների նկատմամբ* _____

7.3. 2.1-ին կետում նշված գրանցումներից առնվազն մեկում լիցենզիան տրամադրված է իր մեջ նշված ոչ բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների նկատմամբ: Նշել յուրաքանչյուր գրանցման համար, ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը՝ ըստ ԱՕՄԴ-ի դասերի, որոնց նկատմամբ տարածվում է լիցենզիան*

8. Լիցենզիայի տեսակը

8.1. Բացառիկ լիցենզիա

8.2. ոչ Բացառիկ լիցենզիա

8.3. եզակի լիցենզիա

8.4. լիցենզիայի գործողության տարածքը

9. Լիցենզիայի գործողության ժամկետը

9.1. լիցենզիայի ժամկետը սահմանափակ է և տրված է _____ից մինչև _____ ժամանակահատվածի համար

9.2. լիցենզիան գործում է մինչև ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետի ավարտը:

10. Ստորագրություններ

10.1. իրավատեր իրավատիրոջ ներկայացուցիչ

10.1.1. ղիմումն ստորագրող ֆիզիկական անձը¹

_____ (պաշտոնը, անունը, ազգանունը)

10.1.2. ստորագրություն _____

(թվականը)

10.2. լիցենզառու լիցենզառուի ներկայացուցիչ

10.2.1. ղիմումն ստորագրող ֆիզիկական անձը¹

_____ (պաշտոնը, անունը, ազգանունը)

10.1.3. 10.2.2. ստորագրություն _____

(թվականը)

11. Կցվող լրացուցիչ թերթերի ընդհանուր թիվը _____

*-Շարունակությունը նշել լրացուցիչ թերթի վրա:

¹- Եթե ղիմումն ստորագրելու են մի քանի անձինք, ապա 10.1.1-ին, 10.1.2-րդ, 10.2.1-ին և 10.2.2-րդ կետերում նշված տվյալները ներկայացնել լրացուցիչ թերթի վրա:

(*ձևը փոփ. 12.10.23 N 1725-Ն*)

Ձև N 4

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակ
(Երևան 0010, Միեր Մկրտչյան 5/1)

Դ Ի Մ Ո Ւ Մ

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ

փոփոխությունը գրանցելու մասին

չեղյալ հայտարարումը գրանցելու մասին



1. դիմում

ապրանքային նշանի իրավատերերը (իրավատերերը) և լիցենզառու (լիցենզառուները) սույնով խնդրում են գրանցել դիմումում նշված ապրանքային նշանի (նշանների)՝

լիցենզիայի փոփոխությունը, գրանցման (գրանցումների) լիցենզիայի չեղյալ հայտարարումը

2. սույն դիմումին վերաբերող գրանցումը (գրանցումները)

2.1. գրանցման (գրանցումների) համարը (համարները)* _____

3. իրավատեր (լիցենզատու)

3.1. անունը, ազգանունը կամ ընկերության անվանումը

3.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն

3.3. իրավատերերը մի քանիսն են (իրավատերերի մասին տվյալները, ըստ 3.1-ին և 3.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

4. իրավատիրոջ ներկայացուցիչը

4.1. անունը, ազգանունը կամ ընկերության անվանումը

4.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն

4.3. իրավատերերի ներկայացուցիչները մի քանիսն են (իրավատերերի ներկայացուցիչների մասին տվյալները, ըստ 4.1-ին և 4.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

5. լիցենզառու

5.1. անունը, ազգանունը կամ ընկերության անվանումը

5.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն

5.3. լիցենզառուները մի քանիսն են (լիցենզառուների մասին տվյալները, ըստ 5.1-ին և 5.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

6. լիցենզառուի ներկայացուցիչը

6.1. անունը, ազգանունը կամ ընկերության անվանումը

6.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն

6.3. լիցենզառուների ներկայացուցիչները մի քանիսն են (լիցենզառուների ներկայացուցիչների մասին տվյալները, ըստ 6.1-ին և 6.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

7. նամակագրության հասցեն

- 8. լիցենզիայի փոփոխությունը վերաբերում է ապրանքներին և (կամ) ծառայություններին
 - 8.1. փոփոխության բնույթը և ծավալը նշված են կից ներկայացված՝
 - լիցենզիայի փոփոխությունը հաստատող փաստաթղթում
 - լիցենզիայի փոփոխության մասին հայտարարության մեջ
 - 9. լիցենզիայի փոփոխությունը վերաբերում է լիցենզիայի տեսակին
 - 9.1. փոփոխված լիցենզիան հանդիսանում է բացառիկ լիցենզիա
 - 9.2. փոփոխված լիցենզիան հանդիսանում է ոչ բացառիկ լիցենզիա
 - 9.3. փոփոխված լիցենզիան հանդիսանում է եզակի լիցենզիա
 - 10. լիցենզիայի տարածքը փոփոխվել է, լիցենզիան վերաբերում է հետևյալ տարածքին
-
- 11. լիցենզիայի փոփոխությունը վերաբերում է գործողության ժամկետին
 - 11.1. փոփոխված լիցենզիան տրված է _____ից մինչև _____ ժամանակահատվածի համար
 - 11.2. փոփոխված լիցենզիան գործում է մինչև ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետի ավարտը
 - 12. լիցենզիայի չեղյալ հայտարարումը վերաբերում է ապրանքներին և (կամ) ծառայություններին
 - 12.1. փոփոխության բնույթը և ծավալը նշված են կից ներկայացված՝
 - չեղյալ հայտարարումը հաստատող փաստաթղթում
 - չեղյալ հայտարարման մասին հայտարարության մեջ
 - 13. ստորագրություններ
 - 13.1. իրավատեր իրավատիրոջ ներկայացուցիչ
 - 13.1.1. դիմումն ստորագրող ֆիզիկական անձը¹

(պաշտոնը, անունը, ազգանունը)

13.1.2. ստորագրություն

(թվականը)

13.2. լիցենզատու լիցենզատուի ներկայացուցիչ

13.2.1. դիմումն ստորագրող ֆիզիկական անձը¹

(պաշտոնը, անունը, ազգանունը)

13.2.2. ստորագրություն

(թվականը)

14. տուրքեր

14.1. վճարված է _____ դրամ պետական տուրք անդորրագիրը կցվում է

14.2. վճարման ձևը _____

15. կցվող լրացուցիչ թերթերի ընդհանուր թիվը _____

*- շարունակությունը տրված է լրացուցիչ թերթի վրա:

¹- եթե դիմումն ստորագրելու են մի քանի անձինք, սպա 13.1-ին և 13.2-րդ կետերի տվյալները ներկայացնել լրացուցիչ թերթի վրա:

(ձևը փոփ. 12.10.23 n 1725-ն)

(հավելվածը խմբ. 10.08.17 n 1017-ն, փոփ. 12.10.23 n 1725-ն)

հավելված n 5

հհ կառավարության 2010 թվականի
նոյեմբերի 18-ի n 1538-ն որոշման

կ ա ռ գ

ապրանքային նշանների գրանցման գործողության ժամկետի երկարաձգման մասին դիմումների

ձեվակերպման եվ քննարկման

1. սույն կարգով կարգավորվում են ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետի երկարաձգման մասին դիմումի ձևը, դրա ձևակերպման և քննարկման հետ կապված հարաբերությունները:

2. սույն կարգում օգտագործված են «ապրանքային նշանների մասին» հայաստանի հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված հասկացությունները:

3. ապրանքային նշանի իրավատերը կամ նրա լիազորած անձը (ներկայացուցիչը) հայաստանի հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակ (այսուհետ՝ գրասենյակ) է ներկայացնում ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը երկարաձգելու մասին դիմումը՝ համաձայն սույն կարգի n 1 ձևի, որին կցվում են

- 1) սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը.
- 2) լիազորագիրը, եթե դիմումը ներկայացվում է ապրանքային նշանի իրավատիրոջ լիազորած անձի կողմից.
- 3) ապրանքային նշանի վկայագիրը՝ ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետի երկարաձգման մասին՝ համապատասխան գրառումներ կատարելու համար:

(3-րդ կետը փոփ. 12.10.23 n 1725-ն)

4. դիմումը ձևակերպվում է հետևյալ կերպ՝

- 1) 1.1-ին և 1.2-րդ կետերում համապատասխանաբար նշվում են ապրանքային նշանի պետական գրանցման համարը և թվականը.
- 2) եթե ապրանքային նշանի իրավատերը ֆիզիկական անձ է, լրացվում է 2.1-ին կետը՝ նշելով նրա անունն ու ազգանունը, իսկ եթե իրավաբանական անձ է, իրավաբանական անձի անվանումը.
- 3) 2.2-րդ կետում լրացվում են ապրանքային նշանի իրավատիրոջ գտնվելու վայրը (բնակության վայրը) և այդտեղ նշված մյուս տվյալները, եթե դրանք կան.
- 4) 2.3-րդ կետի վանդակը նշվում է, եթե ապրանքային նշանն ունի մի քանի իրավատեր և այդ դեպքում լրացուցիչ թերթի վրա ներկայացվում են նրանց տվյալները՝ համաձայն 2.1-ին և 2.2-րդ կետերի.
- 5) 3.1-ին և 3.2-րդ կետերում համապատասխանաբար լրացվում են ապրանքային նշանի իրավատիրոջ լիազորած անձի տվյալները, եթե դիմումը ներկայացվում է լիազորած անձի միջոցով.
- 6) 4-րդ կետում լրացվում է ապրանքային նշանի իրավատիրոջ կամ նրա լիազորած անձի գտնվելու վայրը (բնակության վայրը), որի միջոցով գրասենյակը կկարողանա իրականացնել դիմումի հետ կապված գրագրությունը.
- 7) 5.1-ին կետի վանդակը նշվում է, եթե երկարաձգումը խնդրարկվում է ապրանքային նշանի վկայագրում նշված ածմդ-ի բոլոր դասերի ապրանքների և (կամ) ծառայությունների համար.
- 8) 5.2-րդ կետի վանդակը նշվում և լրացվում է, եթե երկարաձգումը խնդրարկվում է ապրանքային նշանի վկայագրում նշված ածմդ-ի որոշ դասերի ապրանքների և (կամ) ծառայությունների համար.
- 9) 5.3-րդ կետի վանդակը նշվում է, եթե երկարաձգումը խնդրարկվում է ապրանքային նշանի վկայագրում նշված որոշ ապրանքների և (կամ) ծառայությունների համար և լրացվում ըստ ածմդ-ի դասերի այն ապրանքների և (կամ) ծառայությունների, որոնց համար ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետի երկարաձգում չի խնդրարկվում.

10) 6.1-ին կետում լրացվում է դիմումն ստորագրող ֆիզիկական անձի անունն ու ազգանունը, ինչպես նաև պաշտոնը, եթե երկարաձգվող գրանցման իրավատերը իրավաբանական անձ է՝ համապատասխանաբար նշելով 6.2.1-ին կամ 6.2.2-րդ կետի վանդակը:

(4-րդ կետը փոփ. 12.10.23 n 1725-ն)

5. եթե գրանցված ապրանքային նշանն ունի մեկից ավելի իրավատեր, ապա ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետի երկարաձգման մասին դիմումը գրասենյակ կարող է ներկայացնել իրավատերերից մեկը կամ նրա կողմից լիազորված անձը:

(5-րդ կետը փոփ. 12.10.23 n 1725-ն)

6. գրասենյակը դիմումը քննարկում է փաստաթղթերն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

(6-րդ կետը փոփ. 12.10.23 n 1725-ն)

7. դիմումի քննարկման ընթացքում ստուգվում է ներկայացված նյութերի համապատասխանությունը պետական գրանցամատյանի տվյալներին, մասնավորապես, ներկայացված վկայագրի վավերականությունը, դիմումի համապատասխանությունը սույն կարգով սահմանված պահանջներին և դրանում նշված տվյալների (իրավատիրոջ անունը, ազգանունը և բնակության վայրը կամ անվանումը և գտնվելու վայրը, ապրանքների և (կամ) ծառայությունների) համապատասխանությունը պետական գրանցամատյանի տվյալներին, ինչպես նաև վճարված պետական տուրքի համապատասխանությունն օրենքով սահմանված դրույքաչափերին: եթե դիմումը ներկայացվել է լիազորված անձի միջոցով, ապա ստուգվում է նաև լիազորագրի առկայությունը և դրա համապատասխանությունն օրենքով սահմանված պահանջներին:

8. եթե քննարկման արդյունքում պարզվում է, որ ներկայացված նյութերը համապատասխանում են սույն կարգի 4-րդ և 7-րդ կետերով սահմանված պահանջներին, ապա գրասենյակի ղեկավարի որոշմամբ ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը երկարաձգվում է 10 տարով, ինչի մասին համապատասխան գրառում է կատարվում պետական գրանցամատյանում և ապրանքային նշանի վկայագրում: որոշումն ու ապրանքային նշանի վկայագիրը երեք

աշխատանքային օրվա ընթացքում հանձնվում է (իսկ անհրաժեշտության դեպքում փոստով ուղարկվում է) իրավատիրոջը կամ նրա լիազորած անձին:

(8-րդ կետը փոփ. 12.10.23 n 1725-ն)

9. Եթե դիմումը վերաբերում է ապրանքային նշանի վկայագրում և պետական գրանցամատյանում նշված ոչ բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների համար ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետի երկարաձգմանը, ապա պետական գրանցամատյանում նշված ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկից հանվում են բոլոր այն ապրանքները և (կամ) ծառայությունները, որոնք նշված են դիմումում՝ հստակ նշելով այդ ցանկից հանված ապրանքները և (կամ) ծառայությունները:

10. Եթե ապրանքային նշանի վկայագիրը դիմումին կից չի ներկայացվել, ապա ապրանքային նշանի իրավատիրոջը կամ նրա լիազորած անձին հանձնվում կամ փոստով ուղարկվում է պետական գրանցամատյանից համապատասխան քաղվածք:

11. Եթե քննարկման արդյունքում պարզվում է, որ ներկայացված նյութերը չեն համապատասխանում սույն կարգի 4-րդ և 7-րդ կետերով սահմանված պահանջներին, նշանի իրավատիրոջը երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է հարցում՝ այն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում ճշգրտված կամ բացակայող նյութերը և (կամ) «պետական տուրքի մասին» հայաստանի հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն պակաս վճարված պետական տուրքը վճարելու և վճարման անդորրագիրը ներկայացնելու վերաբերյալ առաջարկությամբ:

12. այս դեպքում պահանջված նյութերը համարվում է ներկայացված դրանցից վերջինի ստացման օրը:

13. հարցման համաձայն պահանջված նյութերը երկամսյա ժամկետում չներկայացվելու դեպքում գրասենյակի ղեկավարն ընդունում է որոշում ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետի երկարաձգումը մերժելու մասին և երեք աշխատանքային օրվա ընթացքում ապրանքային նշանի իրավատիրոջը կամ նրա լիազորած անձին է հանձնում (իսկ անհրաժեշտության դեպքում փոստով ուղարկում) այն, ինչպես նաև դիմումին կից ներկայացված բոլոր նյութերը:

(13-րդ կետը փոփ. 12.10.23 n 1725-ն)

14. Եթե քննարկման արդյունքում պարզվում է, որ ապրանքային նշանի վկայագիրը կամ դրա կրկնակը վավերական չէ (լրացել է ապրանքային նշանի գրանցման գործողության և դրա երկարաձգման մասին դիմում ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետները), ապա գրասենյակի ղեկավարն ընդունում է որոշում ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետի երկարաձգումը մերժելու մասին և երեք աշխատանքային օրվա ընթացքում ապրանքային նշանի իրավատիրոջը կամ նրա լիազորած անձին է հանձնում (իսկ անհրաժեշտության դեպքում փոստով ուղարկում) այն, ինչպես նաև դիմումին կից ներկայացված բոլոր նյութերը:

(14-րդ կետը փոփ. 12.10.23 n 1725-ն)

15. սույն կարգում նշված դիմումը, հարցումների պատասխանները, ինչպես նաև օրենքով սահմանված պետական տուրքի վճարման անդորրագրերը և դիմումին կից փաստաթղթերը դիմողը կարող է ներկայացնել գրասենյակի իր կողմից նախընտրած եղանակով՝ փոստով կամ կապի միջոցների օգտագործմամբ կամ գրասենյակի էլեկտրոնային համակարգի միջոցով (այդ թվում՝ էլեկտրոնային փոստի միջոցով), ինչպես նաև հայաստանի հանրապետության օրենսդրությամբ սահմանված էլեկտրոնային կապի այլ միջոցներով: գրասենյակի կողմից կատարված հարցումները, քաղվածքներն ուղարկվում են դիմողին՝ նրա կողմից փաստաթուղթը ներկայացվելու համար ընտրված սկզբնական եղանակով կամ իր կողմից հետագայում ընտրված եղանակներից մեկով՝ փոստով կամ կապի միջոցների օգտագործմամբ կամ գրասենյակի էլեկտրոնային համակարգի միջոցով (այդ թվում՝ դիմողի նշած էլեկտրոնային փոստի միջոցով), ինչպես նաև հայաստանի հանրապետության օրենսդրությամբ սահմանված էլեկտրոնային կապի այլ միջոցներով:

(15-րդ կետը փոփ. 12.10.23 n 1725-ն)

16. Եթե պարզվում է, որ դիմումին կից ներկայացվել է պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը, ապա գանձապետական առցանց կառավարման համակարգի կամ պետական վճարումների գրասենյակի էլեկտրոնային համակարգի միջոցով գրասենյակը հավաստիանում է պետական տուրքի վճարման մասին: Եթե օրենքով սահմանված պետական տուրքի վճարման վերաբերյալ տվյալը չի հայտնաբերվում համապատասխան համակարգում, ապա դիմողին երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է ծանուցում՝ անդորրագրի բնօրինակը կամ տվյալ վճարման իսկության վերաբերյալ ապացույցները երկամսյա ժամկետում ներկայացնելու վերաբերյալ առաջարկությամբ:

(16-րդ կետը փոփ. 12.10.23 n 1725-ն)

17. երկու ամսվա ընթացքում պետական տուրքի վճարման անդորրագրի բնօրինակը չներկայացվելու կամ տվյալ վճարման իսկության մասին համապատասխան համակարգի միջոցով չհավաստիանալու դեպքում գրասենյակն ընդունում է որոշում դիմումը մերժելու մասին, որը երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է դիմողին:

(17-րդ կետը փոփ. 12.10.23 n 1725-ն)

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱԶԳՄԱՆ ՄԱՍԻՆ



խնդրում եմ երկարաձգել սույն դիմումում նշված ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը:

1. խնդրարկվող գրանցման գործողության ժամկետի երկարաձգումը

1.1. գրանցման համարը _____

1.2. գրանցման թվականը _____

2. իրավատեր

2.1. անունը, ազգանունը կամ ընկերության անվանումը

2.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն

2.3. իրավատերերը մի քանիսն են (իրավատերերի մասին տվյալները՝ ըստ 2.1-ին և 2.2-րդ կետերի, տրվում են լրացուցիչ թերթի վրա):

3. իրավատիրոջ լիազորած անձ

3.1. անունը, ազգանունը կամ ընկերության անվանումը

3.2. գտնվելու վայրը (բնակության վայրը), երկրի ծածկագիրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն

4. նամակագրության հասցեն

5. ապրանքները և (կամ) ծառայությունները՝

5.1. երկարաձգումը խնդրարկվում է վկայագրում նշված ածուղ-ի բոլոր դասերի ապրանքների և (կամ) ծառայությունների համար

5.2. երկարաձգումը խնդրարկվում է վկայագրում նշված ածուղ-ի հետևյալ դասերի ապրանքների և (կամ) ծառայությունների համար*

5.3. երկարաձգումը խնդրարկվում է վկայագրում նշված բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների համար՝ բացառությամբ*

6. ստորագրություն

6.1. դիմումն ստորագրող ֆիզիկական անձը՝

_____ (պաշտոնը, անունը, ազգանունը)

6.2. նշվում են համապատասխան վանդակները՝ կախված այն բանից, թե ում կողմից է դիմումն ստորագրվել

6.2.1. իրավատեր

6.2.2. իրավատիրոջ լիազորած անձ

6.3. ստորագրություն _____

(թվականը)

7. տուրքեր

7.1. վճարված է _____ դրամ պետական տուրք անդորրագիրը կցվում է
վճարման ձևը _____

8. կցվող լրացուցիչ թերթերի ընդհանուր թիվը _____

*- շարունակությունը տրված է լրացուցիչ թերթի վրա:

(ձևը փոփ. 12.10.23 n 1725-ն)

(հավելվածը խմբ. 10.08.17 n 1017-ն, փոփ. 12.10.23 n 1725-ն)